


ՄԱՐԿՆԻ ԵՊԻՍԿՈՍՈՍ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋԱԿԱՏՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԵՐԿՐՈՂ ՀԱՄԱՇԽԱՐԱՅԻՆ ԴԱՏԵՐԱՉԱԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ





Հեղինակը շնորհակարտություն է հայտնում
իւ հայրենակից, մտակաբանակ
ԱՐԱՄ ՎԱԶԳԵՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ (Լյուվալին)՝
սույն գրքի հրատարակչական ծախսերը հոգարու համար:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Ս. ՏԵՐԳԱՆՅԱՆ

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(1939–1945 ԹԹ.)**



ԵՐԵՎԱՆ 2010

281.6 + 944.925 752 ✓

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

А.С. ТЕРЧАНЯН

**ДЕЯТЕЛЬНОСТЬ СЯГОГО ЭЧМИАДЗИНА
В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ
(1939–1945 ГГ.)**

1110099



ԵՐԵՎԱՆ 2010

ՀՏԴ 23/28: 941(479.25)
ԳՄԴ 86.37+ 63.3(2Դ)
Տ 499

Պատասխանատու խմբագիր՝

պատմական գիտությունների դոկտոր
ԿԼԻՄԵՆՏ ԱՍԱՍԻԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԱՇՈՏ ԱՂԱՍԻ ՄԵԼԵՈՆՅԱՆԸ,
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան
ՎԱՐԴԱՆ ԱԲԵՂԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԸ

Տերչանյան Արուսյակ Սամսոնի

S 499

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939–1945 թթ.)– Եր., Ձանգակ–97, 2010.– 136 էջ + 8 էջ ներդիր:

Արխիվային հարուստ փաստական նյութի, համապատասխան գրականության և մամուլի հիման վրա մեկ մենագրության մեջ լուսաբանվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը, մասնավորապես բացահայտվել է ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակում նրա ներդրած ավանդը, ցույց տրվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դերը սփյուռքահայության միասնության ամրապնդման և բարեգործական օգնության կազմակերպման գործում, վեր հանել պատերազմական պայմաններին համապատասխան պետություն–եկեղեցի հարաբերությունների հաստատման և եկեղեցու «երկրորդ վերածննդի» հետ կապված հարցեր:

Գիրքը նախատեսված է ինչպես ընթերցող լայն շրջանների, այնպես էլ ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի, Ս. Ա. Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ծննարանի, Սևանի հոգևոր հաստատության և հանրակրթական դպրոցների աշակերտների համար:

ՀՏԴ 23/28: 941(479.25)

ԳՄԴ 86.37+ 63.3(2Դ)

ISBN 978–99941–1–744–4

© Արուսյակ Տերչանյան, 2010 թ.

© «Ձանգակ–97» հրատ., 2010 թ.

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Իր գոյության ողջ ընթացքում Հայ Առաքելական եկեղեցին կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի պատմության մեջ՝ սկզբնական շրջանում որպես հայոց պետականության հենարան, իսկ պետականության բացակայության ժամանակ՝ որպես հայ ժողովրդին համախմբող մեկ մարմին, հոգևոր առաջնորդ, գրի, գրականության, գիտության, մշակույթի պահպանության, պետությանը փոխարինած միակ հաստատություն:

Էջմիածնի պատմական դերը, նրա գոյության իմաստն ու իրավունքներն անհամեմատ ավելի հզորացան և անհրաժեշտություն դարձան այն օրերից, երբ հայ ժողովուրդը կորցրեց իր պետականությունը: Սկսած 14-րդ դարից՝ էլ ավելի ամրապնդվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դերը, որպես բովանդակ հայությանն իրար շաղկապող կենտրոն: Պետականության բացակայության պայմաններում եկեղեցին շարունակեց մի կողմից՝ ղեկավարել հայության ազգային-հոգևոր և կրթամշակութային կյանքը հայրենիքում ու գաղթավայրերում, մյուս կողմից՝ գործուն քայլեր ձեռնարկել հայկական պետականությունը վերականգնելու ուղղությամբ:

Հայոց եկեղեցին դարեր շարունակ իր ներուժով պաշտպանեց հայ ժողովրդին, փրկեց նրան իր ինքնությունը կորցնելու վտանգից և իսպառ ոչնչանալուց, եղավ իր ժողովրդի կողքին, դարձավ նրա դժվար մաքառումների ակնառտեսը: Ճակատագրի բերումով և պետականության բացակայության պատճառով ամբողջ երկրագնդի վրա սփռված հայությունն իր հոգևոր, մշակութային և ազգային ներքին բոլոր խնդիրներով իր զորակցությունն էր ստանում Հայ եկեղեցուց: Այսպիսով, աշխարհասփյուռ հայությունը, հանձին Ս. Էջմիածնի, ուներ իր ազգային միությունն ու հեղինակավոր առաջնորդը:

Հայոց եկեղեցու հայրապետները եռանդուն գործունեություն ծավալեցին՝ պաշտպանելու հայ ժողովրդի իրավունքները միջազգային աստ-

յաններում, հանդես եկան ազատագրական պայքարի կոչով, ինչպես նաև ընդվզեցին Օսմանյան կայսրության հայաջինջ և ցարիզմի՝ հայերին ռուսացնելու քաղաքականության դեմ:

Ժողովուրդների պատմության մեջ կրոնական հաստատության մի այսպիսի նշանակություն ունենալը հազվադեպ երևույթ էր, սակայն միանգամայն հասկանալի: Օտար պետությունների քմահաճություններին ենթարկված ժողովրդի համար Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռը միակ ազգային հաստատությունն էր, որ մնացել էր հայության ձեռքում:

19-րդ դարի վերջից սկսած՝ ազատագրական կռիվներին ակտիվորեն մասնակցում է հայ հոգևորականությունը: Բազմաթիվ հոգևորականներ զենքը ձեռքներին մարտնչում են թուրք և քուրդ հրոսակների դեմ:

Եկեղեցին իր ժողովրդի հետ էր թուրքական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանության ծանր ու ողբերգական տարիներին: Թուրքական յաթաղանին զոհ գնացին նաև հազարավոր եկեղեցականներ:

Հայոց եկեղեցին օրինեց 1918 թ. անկախ պետականության վերականգնումը: Սակայն Առաջին հանրապետության անկումից հետո՝ բոլշևիկյան իշխանության տարիներին, եկեղեցին ենթարկվեց հալածանքների և բռնությունների: Քանդվեցին և փակվեցին բազմաթիվ եկեղեցիներ, հալածվեցին հարյուրավոր հոգևորականներ, սպանվեց Հայոց կաթողիկոսը:

1920 թ. դեկտեմբերի 2-ին՝ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, խորհրդային Հայաստանի բոլշևիկյան կառավարությունը Մոսկվայի ցուցումով մինչև Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմների սկիզբը պետական մասշտաբով վարում էր հակակրոնական քաղաքականություն, որի հետևանքով Հայ Առաքելական եկեղեցին ենթարկվում էր ստալինյան ահավոր բռնաճնշումների: Հակահեղափոխական և հակախորհրդային գործունեության մեջ մեղադրվեցին մի շարք հոգևորական գործիչներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բռնագրավվեցին վանքապատկան հողերը, թանգարանի և մատենադարանի նյութերը, Էջմիածնի գործունեությունը պաշտոնապես դրվեց պետական հսկողության տակ, ամենուր փակվեցին, իսկ Երևանում ուղղակի ավերվեցին Սուրբ Լուսավորիչ, Պողոս-Պետրոս, Նորքի Սիմոն Ծերունի եկեղեցիները, բանտարկվեցին, աքսորվեցին ու գնդակահարվեցին բազմաթիվ հոգևորականներ¹:

¹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 713, թ. 1:

1938 թ.² Խորեն Մուրադբեկյան կաթողիկոսի մահից հետո, մինչև նոր կաթողիկոսական ընտրությունների անցկացումը Ամենայն հայոց հայրապետության տեղապահ է նշանակվում Գևորգ արքեպիսկոպոս Չոռեքյանը:

1939 թ. սեպտեմբերի 1–ին վրա հասած երկրորդ համաշխարհային, իսկ 1941 թ. հունիսի 22–ին սկսված Հայրենական մեծ պատերազմները արմատական փոփոխություն մտցրին ինչպես ամբողջ ԽՍՀՄ, այնպես էլ Խորհրդային Հայաստանի հոգևոր կյանքում: Ամեն գնով հայրենիքի պաշտպանության գաղափարը ստիպեց Ի.Վ. Ստալինին մերժեցման եզրեր փնտրել եկեղեցու հետ: Պատերազմի հենց առաջին օրերին խորհրդային կառավարությունը զգալի փոփոխություններ կատարեց երկրի ներքաղաքական կյանքում՝ դադարեցնելով հակաեկեղեցական գործունեությունը, որպեսզի կարողանա ժողովրդին համախմբել միասնական պայքարի՝ գերմանա–ֆաշիստական զավթիչների դեմ:

Գիտակցելով եկեղեցու կարևորությունը և նրա ունեցած մեծ հեղինակությունը՝ խորհրդային կառավարությունը թուլացրեց եկեղեցու հանդեպ ունեցած բռնաճնշումները՝ ներգրավելով նրան քարոզչական աշխատանքների մեջ: 1941 թ. հուլիսի 5–ին և 30–ին հայ եկեղեցու Գերագույն հոգևոր խորհուրդը կոչով դիմեց հայ ժողովրդին՝ պաշտպան կանգնել հայրենիքին և օգնել դիմակայելու թշնամուն²:

Արդեն պատերազմի առաջին վեց ամիսների ընթացքում Հայ Առաքելական եկեղեցին զգալի նյութական օգնություն ցույց տվեց Կարմիր բանակին՝ պաշտպանության ֆոնդ մուծելով դրամական զգալի միջոցներ: Իսկ երբ 1941 թ. ռուս ուղղափառ եկեղեցու կոչով ռուս հավատացյալները սկսեցին միջոցներ հավաքել «Դիմիտրի Դոնսկոյ» անվան տանկային շարասյուն կառուցելու համար, Հայ եկեղեցին նույնպես նախաձեռնեց հավատացյալ հայերի հանգանակության կազմակերպումը, ինչի շնորհիվ կառուցվեց «Սասունցի Դավիթ» անվան տանկային երկու շարասյուն և հանձնվեց Կարմիր բանակին, ինչպես նաև նպաստեց մի շարք այլ տանկային շարասյունների ու ավիատեկադրիկիաների պատրաստմանը: Հայ Առաքելական եկեղեցու հայրենամուտ գործունեությունն ըստ արժանվույն զնահատվեց խորհրդային կառավարության կողմից, որն աստիճանաբար եկեղեցուն վերադարձրեց ոչ միայն նրանից խլված նյութական միջոցներն ու շինությունների մի մասը, այլև հնարավորություն տվեց կաթողիկոսական ընտրություններ անցկացնել, որի շնորհիվ

² «Էջմիածին», 1944, թիվ 1, էջ 5:

1945 թ. հունիսի 22–ին Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Գևորգ Չորեքչյանը (Գևորգ Ձ):

Ինչպես տեսնում ենք, մեր աշխատության թեման առնչվում է հայ ժողովրդի պատմության մեջ միշտ կարևոր տեղ գրաված Հայ Առաքելական եկեղեցու 1700–ամյա գործունեության՝ չնայած համեմատաբար կարճ, բայց աշխարհացունց մի ժամանակահատվածի, երբ երկրագունդն ամբողջությամբ իրենց մեջ էին առել Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմների բոցերը, որոնք ընդգրկել էին 62 պետություն, որտեղ ապրում էր աշխարհի բնակչության 80 տոկոսը՝ շուրջ 1.7 միլիարդ մարդ, որոնցից հակամարտող կողմերի բանակներ էին զորակոչվել ավելի քան 110 միլիոն մարդ³:

Այդ պատերազմը մեծ սպառնալիք էր նաև հայ ժողովրդի ֆիզիկական գոյության համար, քանի որ ֆաշիստական Գերմանիայի փաստացի դաշնակից Թուրքիան Ստալինգրադի ճակատամարտի օրերին, Կովկասում՝ Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ, կուտակել էր 26 սպառազեն դիվիզիա և հարմար պահի էր սպասում՝ այնտեղ ներխուժելու համար: Սակայն Ստալինգրադում գերմանաֆաշիստական զորքերի ջախջախիչ պարտությունը ստիպեց նրանց զորքերը հետ քաշել սահմանից: Հենց Կովկասի և Ստալինգրադի ճակատամարտերի օրերին Հայ Առաքելական եկեղեցին համազգային բուռն շարժում սկսեց Կարմիր բանակին օգնություն կազմակերպելու նպատակով: Այդ ամենը մեծ չափով նպաստեց Հայ Առաքելական եկեղեցու ոտնահարված հեղինակության վերականգնմանը, պետական մարմինների կողմից եկեղեցու նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքի դրսևորմանը, սփյուռքահայությանն իր շուրջը համախմբող համազգային հեղինակավոր հոգևոր մարմնի ստեղծմանը:

Սփյուռքահայերի շրջանում աստիճանաբար վերականգնվում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և մայր Հայաստանի հեղինակությունը, որը նպաստավոր պայմաններ ստեղծեց պատերազմի հաղթական ավարտից հետո կազմակերպելու հայրենադարձության գործընթացը: Այդ իսկ պատճառով պատմագիտական կարևոր նշանակություն ունի վերոհիշյալ թեմայի ուսումնասիրությունը, որը հայ պատմագրության հրատապ ու արդիական, առաջնահերթ ու կարևոր խնդիրներից մեկն է: Այն մեծ չափով կնպաստի Հայ Առաքելական եկեղեցու տվյալ ժամանակաշրջանի պատմության նորովի բացահայտմանն ու լրացմանը: Մենք կարևորում ենք պատերազմական պայմաններում հոգևոր մարմնի ազ-

³ Вторая мировая война. Итоги и уроки, Москва, 1985 г., с. 212:

գապահպան դերն ու նշանակությունը, որն ավելի է արդիականացնում մեր աշխատության թեման:

Մեր նպատակն է այս աշխատությամբ ներկայացնել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Հայ Առաքելական Եկեղեցու պատմության, մասնավորապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դերակատարման հիմնահարցին նվիրված ամբողջական, հատուկ ուսումնասիրություն: Ահա թե ինչու մեր հետազոտության հիմնական նպատակն է բազմակողմանի և նորովի ուսումնասիրել տվյալ ժամանակահատվածում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը՝ հատկապես կանգ առնելով Կարմիր բանակին նրա կողմից ցուցաբերված օգնության վրա: Ելնելով վերոհիշյալից՝ ատենախոսության մեջ քննարկման են դրված հետևյալ հիմնական խնդիրները՝ բացահայտել Հայ Առաքելական Եկեղեցուն տիրող իրավիճակը Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին, փաստել ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ունեցած մեծ ներդրումը, ցույց տալ Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ Գևորգ Չորեքյանի հայրենամուկ աշխատանքն այդ գործում, լուսաբանել պատերազմի տարիներին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Երկրորդ վերածննդի» հիմնահարցը:

Աշխատությունը գրվել է արխիվային նորահայտ փաստերի, գրականության և մամուլի նյութերի հիման վրա՝ պատմահամեմատական, օբյեկտիվ լուսաբանման մեթոդի կիրառմամբ: Արժարժված շատ հարցեր մեկնաբանված են պատմական ճշմարտության, սկզբնաղբյուրների քննական վերլուծության, համեմատության ու համադրման մեթոդների կիրառման միջոցով: Ինչպես պատերազմի նախօրյակին, այնպես էլ պատերազմական տարիներին Հայ Առաքելական Եկեղեցու գործունեությունը լուսաբանելիս օգտագործել ենք դեպքերի ու երևույթների շարադրման պատմականության մեթոդը՝ որպես հիմք ընդունելով պատմական օբյեկտիվ ճշմարտությունն ու անկողմնակալությունը: Չնայած ժամանակագրական առումով ուսումնասիրության շրջանակները պարփակվում են Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներով՝ 1939–1945 թթ., այնուամենայնիվ արժարժված որոշ հարցերի ընդգրկման ժամանակաշրջանն ավելի լայն է և առնչվում է նախապատերազմյան տարիներին՝ նպատակ ունենալով ընդհանուր անդրադարձ կատարել Հայ Եկեղեցու պատմության նշված ընթացքին:

Աշխատության աղբյուրագիտական հիմքը կազմել են Հայաստանի ազգային արխիվի՝ (ՀԱԱ) ֆ. 409–րդ, ց. 1՝ Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդ, ֆ. 454–րդ, ց. 1՝ Գևորգ Չորեքյանի անձնական գործ, ֆ.

825–րդ, ց. 1՝ ՀՍԱՀ մինիստրների խորհրդին կից Հայ եկեղեցու գործերի խորհուրդ ֆոնդերի⁴, Սանդրո Բեհրուդյանի կազմած «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության» փաստաթղթերի ժողովածուի՝ 4–րդ, 5–րդ (Եր., 1994, 1996, 1999) և Գեորգ Ջ Չորեքչեան Կաթողիկոս Ամենայն Հայոց, գիրք Ջ (Եր. 1999)⁵ աշխատության հիման վրա: Հատկապես կարևոր սկզբնաղբյուր է «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության» գիրք Ջ–ն, որտեղ ամփոփված են Գևորգ Ջ Չորեքչյանի գործունեության ժամանակաշրջանն արտացոլող 578 փաստաթուղթ, որոնցից 235–ը կազմված են անմիջապես Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Չնայած կատարած մեծածավալ և աղբյուրագիտական արժեք ունեցող աշխատանքին՝ հեղինակը անկողմնակալ դիրքորոշում չի ցուցաբերել պատմական իրողությունները մեկնաբանելիս և խորհրդային շրջանը ներկայացրել է տվյալ շրջանի գաղափարախոսական դիրքերից:

Օգտագործվել է նաև Ստեփան Ստեփանյանցի «Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք» մենագրությունը⁶, որտեղ տեղ են գտել խնդրո առարկային առնչվող բավականաչափ նյութեր: Չնայած հարուստ արխիվային նյութերի օգտագործմանը՝ հեղինակը դրանք մեկնաբանել է՝ տուրք տալով այդ տարիներին իշխող (գիրքը լույս է տեսել 1994 թ.) սուբյեկտիվ, խորհրդային իշխանությունը միայն մռայլ գույներով ներկայացնող գնահատականներին:

Ռուս ուղղափառ եկեղեցու՝ պատերազմական տարիների գործունեության մասին գրելիս օգտագործել ենք պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Օ. ՅՈՒ. Վասիլևայի՝ «Русская православная церковь в политике советского государства в 1943–1948 гг.» մենագրությունը:

«Սատունցի Դավիթ» տանկային շարասյան կազմավորման և նրա մարտական ուղին վեր հանելու հիմնահարցը բացահայտելիս օգտվել ենք պատմական գիտությունների դոկտորներ Մ. Գ. Սահակյանի՝ «Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում»⁸ և Կ. Ա. Հարությունյանի՝ «Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին (1939–1945)»⁹ և «Գրիգոր Արտեմի Հարությունյանի գործունեու-

⁴ Հայաստանի ազգային արխիվի՝ (ՀԱԱ) ֆ. 409, 454, 825:

⁵ Բեհրուդյան Ա., «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության» փաստաթղթերի ժողովածուի 4–րդ, 5–րդ և 6–րդ գրքերը (Եր., 1994, 1996, 1999):

⁶ Ստեփանյանց Ա., Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Եր., 1994:

⁷ Василева О. Ю., Русская православная церковь в политике советского государства в 1943–1948 гг., М., 1999:

⁸ Սահակյան Մ.Գ., Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում, Եր., 1981:

⁹ Հարությունյան Կ. Ա., Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին (1939–1945), «Հրագրան» հրատարակչություն, Եր., 2001:

թյունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին»¹⁰, մեծագրություններից, Ռ. Ավետիսյանի, համահեղինակությամբ Ա. Վիրաբյանի և Կ. Հարությունյանի, «Գրիգոր Արտեմի Հարությունյանի կյանքը և գործունեությունը»¹¹, ինչպես նաև Ե. Մ. Խալեյանի «Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին (1941–1944)»¹² աշխատություններից: Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմների համապարփակ նկարագրությունը ներկայացնելիս օգտվել ենք «Вторая мировая война. Итоги и уроки»¹³ աշխատությունից: Հայ Առաքելական եկեղեցու պատմության որոշ հիմնահարցեր բացահայտելու նպատակով օգտագործել ենք դոկտ. Տ. Ջավեն Ա. քհն. Արզումանեանի «Ազգապատում»¹⁴, Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի՝ «Էջեր Հայ եկեղեցու պատմութենեն», աշխատությունները¹⁵: Հայ Առաքելական եկեղեցու՝ 1930–1938 թթ. բռնադատված հոգևորականության վերաբերյալ արժեքավոր տվյալներ ենք քաղել Արմենակ Մանուկյանի «Հայ Առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930–1938 թթ.»¹⁶ մեծագրությունից, «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության 8–րդ հատորից¹⁷, վերջերս հրատարակված «Հայ կաթողիկոսներ»¹⁸ և «Նշանավոր ճեմարանականներ»¹⁹ հիմնարար ուսումնասիրություններից, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ 1968 թ. հրատարակած «Վազգեն Ա Հայրապետ Հայոց»²⁰ աշխատությունից և այլն:

Թեմայի ուսումնասիրության համար կարևոր են եղել «Հայրենիք», «Էջմիածին», «Սիոն», «Ազդարար», «Սովետական Հայաստան», «Որав-

¹⁰ Հարությունյան Կ. Ա., Գրիգոր Արտեմի Հարությունյանի գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941–1945), ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատարակչություն, Եր., 2001:

¹¹ Ավետիսյան Ռ., Վիրաբյան Ա., Հարությունյան Կ., Գրիգոր Արտեմի Հարությունյանի կյանքը և գործունեությունը, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատարակչություն, Եր., 2000:

¹² Խալեյան Ե. Մ., Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին (1941–1944), ՂՄՄՀ ԳԱ հրատարակչություն, Եր., 1975:

¹³ «Вторая мировая война. Итоги и уроки», Москва, 1985, с. 212:

¹⁴ Դոկտ. Տ. Ջավեն Ա. քհնյ. Արզումանեան, Ազգապատում, հ. Դ, գիրք Ա, 1910–1930, Նիւ Եորք:

¹⁵ Մեսրոպ արք. Աշճյան, Էջեր Հայ եկեղեցու պատմութենեն, Ընտրուրին Ամենայն Հայոց Կաթողիկոսներու Մահ և Հիշատակ, Բ տպագրություն, Եր., 1994:

¹⁶ Մանուկյան Ա., Հայ Առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930–1938 (ըստ ՊԱԿ–ի փաստաթղթերի), Եր., 1997:

¹⁷ Հայ ժողովրդի պատմություն, ՀՀ ԳԱ, հ.8, Եր., 1970:

¹⁸ Հայ կաթողիկոսներ, Եր., 2001:

¹⁹ Նշանավոր ճեմարանականներ, պրակ Ա, Գևորգյան հոգևոր ճեմարան (Աստվածաբանական համալսարան), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005:

²⁰ Վազգեն Ա Հայրապետ Հայոց, Գիրք երկրորդ. Կոնդակներ, Զարոզներ, ճառեր, Ելույթներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1968:

да», «Коммунист» և այլ թերթերում ու պարբերականներում տեղ գտած տեղեկությունները:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ բոլոր հեղինակներն էլ իրենց առջև հատուկ նպատակ չեն դրել առանձին մենագրությամբ լուսաբանել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և այս հիմնահարցին անդրադարձել են այն-քանով, որքանով այն առնչվել է իրենց ուսումնասիրության հիմնական թեմային: Չնայած հիմնահարցի կարևորությանն ու արդիականությանը՝ առ այսօր հայ պատմագրությունը բավարար չափով չի լուսաբանել այն: Հայ պատմաբաններից և ոչ մեկը իր առջև հատուկ նպատակ չի դրել առանձին աշխատությամբ ամբողջովին լուսաբանել խնդրո առարկան:

Այս առումով էլ մեր ուսումնասիրությունը նորություն է հայ պատմագրության մեջ և առաջին փորձն է հիմնահարցին նվիրված ամբողջական աշխատություն ստեղծելու ուղղությամբ:

Այսպիսով, այս աշխատությունը լրացնելու է հայ պատմագրության կողմից քիչ հետազոտված էջերից մեկը և նպաստելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մի կարևոր ժամանակաշրջանի՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների պատմության նորովի լուսաբանմանը: Հայ Առաքելական եկեղեցու մի կարևոր ժամանակահատվածի պատմության նորովի հետազոտությունն այսօր ավելի է արժևորվում և գործնական նշանակություն ստանում Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700–ամյակի տոնակատարությունը նշելուց հետո, միաժամանակ նպաստում Սփյուռք–Հայրենիք կապերի էլ ավելի ամրապնդմանը, աշխարհում Հայ Առաքելական եկեղեցու հեղինակության բարձրացմանը: Մեր աշխատության մի շարք դրույթներ, որոնք հիմնականում առնչվում են պատերազմի տարիներին եկեղեցու կողմից Կարմիր բանակին ցույց տված օգնությանը, տանկային շարասյուների և ավիատեկադրիլիաների կառուցմանը, պաշտպանության ֆոնդի համար դրամական հանգանակությունների կազմակերպմանը և այլն, այսօր գործնական կարևոր նշանակություն կունենան աճող սերնդի և հատկապես բանակի անձնակազմի ազգային ոգու բարձրացման, նրանց ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրների լուծման գործում: Դրա հետ մեկտեղ սույն աշխատության գործնական նշանակությունն այն է, որ ուսումնասիրության փաստական նյութերն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել պատմաբանների, բուհերի, ճեմարանական հաստատությունների ուսանողների և ընթերցող լայն զանգվածների համար:

ԳՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻՍՏԻՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՆԵՍԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԻՆ

ա) ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

1932 թ. նոյեմբերի 13–ի ազգային–եկեղեցական ժողովի ընտրությանը Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց տ. Խորեն Ա կաթողիկոսը և ձևավորեց Գերագույն հոգևոր խորհուրդը: Անդրադարձ կատարելով մինչև Հայրենական մեծ պատերազմի տարիները Գերագույն հոգևոր խորհրդի կատարած աշխատանքներին՝ կարող ենք ներկայացնել նշված կառույցի գործունեության ընդհանուր պատկերը և Հայ եկեղեցում տիրող իրավիճակը թե՛ արտասահմանում և թե՛ Խորհրդային Սիբիրում:

Այդ տարիների կարևոր իրադարձություններից էին Ս. Գրքի թարգմանության և հայ գրականության սկզբնավորման 1500–ամյա հոբելյանի կազմակերպումը և գրերի գյուտի տոնի սահմանումը: Գերագույն հոգևոր խորհուրդը Ամենայն Հայոց հայրապետի նախագահությամբ և աշխարհիկ անձանց մասնակցությամբ, նկատի առնելով տոնի մեծ նշանակությունը հայ ազգի համար, որոշեց տոնել Ս. Գրքի թարգմանության և հայ գրականության սկզբնավորման 1500–ամյա հոբելյանը՝ իբրև համազգային մեծ տոն:

Հայրապետական ընդհանուր կոնդակով 1934 թ. հոկտեմբերի Թարգմանչաց տոնից մինչև 1935 թ. հոկտեմբերի Թարգմանչաց տոնը հայտարարվեց հոբելյանական տարի: Կազմակերպվեցին տոնակատարության, մոր հրապարակումների, դասախոսությունների ծրագ-

րեր արտերկրի և միութենական հանրապետությունների հայ համայնքների համար:

Հիշյալ տոնի կազմակերպումն արտասահմանում հանձնարարվեց Երուսաղեմի պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանին, և հատուկ գրություններով առաջարկվեց, որ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսն ու Կ. Պոլսի պատրիարքն ունենան իրենց ներկայացուցիչները ձևավորվող հանձնաժողովում:

Գերագույն հոգևոր խորհուրդը խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Գարեգին արք. Յովսեփյանին գործուղում է արտասահման, որի շարժառիթն էր. գաղութահայ նոր թեմերի կազմակերպման և գոյություն ունեցող թեմերի կարգավորման հարցը (Գերագույն հոգևոր խորհուրդը նկատի ուներ Եվրոպայի թեմի անկազմակերպ վիճակը): Հարավային Ամերիկայի 40 000 հայությունը ձգտում էր կազմավորել առանձին թեմ, Լիոնի և Մարսելի թեմերում կային խնդիրներ, Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմը պառակտված էր ներկուսակցական պայքարի պատճառով և այլն:

Ս. Էջմիածնի Մայր տաճարի արտաքին և ներքին վերանորոգման անհրաժեշտությունից ելնելով և հաշվի առնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տնտեսական ծանր կացությունը՝ Գերագույն հոգևոր խորհուրդը դիմում է արտասահմանյան թեմերի օժանդակությանը: Այս ձեռնարկի իրականացումը հանձնարարված էր արտասահման գործուղվող պատվիրակին, որի շարժառիթներից էր Ս. Էջմիածնի պահպանման հարցը (Մայր Աթոռի միակ եկամուտը Երևանի, Լեմինակյանի և Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցիների մոնավառությունից ստացված գումարներն էին: Այդ ժամանակ որոշվեց հետևել կաթոլիկ եկեղեցու ընդունած «Ս. Պետրոսի լուսն» նվիրատվության կարգին և հանձնարարվեց պատվիրակին արտասահմանում նույնպես սահմանել կամավոր տուրք՝ «Ս. Լուսավորչի տուրք» անվամբ):

Շուրջ վեց տարի արտերկրում գտնվող Գարեգին Յովսեփյանի՝ Գերագույն հոգևոր խորհրդին ուղղված գրություններից պարզ է դառնում, որ տաճարի վերանորոգման նպատակով հանգանակվել էր 3500 ԱՄՆ դոլար, հիշատակված թեմերի վիճակը մնացել էր նույնը, Էջմիածնի ապահովման համար «Լուսավորչի լուսն»-ի կազմակերպումը ևս խոչընդոտների էր հանդիպել և, եթե առաջ Էջմիածին էր ուղարկվում տարեկան 1500-2000 ԱՄՆ դոլար, ապա այժմ այն պակասել էր 50%-ով:

Հաջորդ կարևոր գործը Հայ եկեղեցու բարեկարգման հարցն էր, որի մասին Ազգային-եկեղեցական ժողովը որոշում է զեկուցումն առաջար-

կել քննարկման բոլոր թեմերի թեմական խորհուրդներին, թեմական պատգամավորական ժողովներին, Մեծի Տանն Կիլիկիո, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքներին, ապա ներկայացնել Ամենայն Յայոց կաթողիկոսին, որի նախագահությամբ կքննարկվեր Գերագույն հոգևոր խորհրդի ընդլայնված ժողովում, ապա, ընդունելով առաջարկները, կկատարվեին վերջնական քննարկում և հաստատում:

Այդ ժամանակ Յայ եկեղեցու սահմանադրության մշակման հարցը դարձել էր անհրաժեշտություն: Մի շարք թեմեր ունեին իրենց կանոնադրությունները, մի մասը՝ Յյուսիսային Ամերիկայի և Իրան-Յնդկաստան թեմերը, առաջնորդվում էին էջմիածնում մշակված կանոնադրությամբ, մի մասն էլ, տեղական պայմաններին հարմարված, հեռացել էին Յայ եկեղեցու սահմանադրության հիմնական սկզբունքներից: Իրավիճակից ելնելով՝ Ազգային-եկեղեցական ժողովը հանձնարարում է Բարձրագույն հոգևոր իշխանությանը կազմել հատուկ հանձնաժողով՝ նախագիծ մշակելու Յայոց եկեղեցու նոր սահմանադրության համար՝ ելակետ ունենալով եկեղեցու կանոնական և ավանդական սկզբունքները: Նախագիծը պետք է մշակվեր՝ հաշվի առնելով Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի, Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքների դիտողություններն ու առաջարկությունները, ապա հաստատվեր հայրապետական կոնդակով ու մտներ գործողության մեջ՝:

Սակայն ներկայացնելով խորեն Ա Մուրադբեկյանի կաթողիկոսության ժամանակաշրջանը՝ թերևս հարկ է նշել նաև եկեղեցական կյանքի այն ընթացքի մասին, որով այդ տարիներին հետևողականորեն զբաղվում էր կաթողիկոսը: Որքան էլ ֆինանսա-տնտեսական և հոգևոր-բարոյական ծանր ժամանակաշրջան ապրեր հասարակությունը, այնուամենայնիվ կյանքը շարունակվում էր՝ հենվելով այն լծակների վրա, որոնք տվյալ պահին կարող էին սատարել ընչազուրկ հասարակությանը:

Ամենայն Յայոց կաթողիկոսը համառությամբ ու հետևողականորեն պահպանում էր հայ եկեղեցու բազմադարյան ավանդույթները: Չնայած անկման ու ծախսորդություններով լի ժամանակներին՝ խորեն Ա Մուրադբեկյանը զբաղվում էր եկեղեցական նոր սահմանադրության մշակման, հայ եկեղեցու բարենորոգության, նվիրապետական աթոռների հետ ճկուն փոխհարաբերությունների մշակման, հոգևոր ճեմարանի բացման, ամսաթերթ հրատարակելու, Մայր տաճարի վերանորոգման, Սփյուռքի թեմերի կազմակերպչական, բանտարկված հոգևորականներին և միաբաններին հալածանքներից պաշտպանելու, փակված եկեղեցիները վե-

¹ ԴԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 266, ք. 1-14:

րաբացելու և այլ հարցերով: Նա մեծ ջանք էր գործադրում սփյուռքահայության և նվիրապետական աթոռների կապը Ս. Էջմիածնի հետ ամրապնդելու համար: Վեհափառ հայրապետը մեծ ուշադրություն էր դարձնում Սփյուռքի թեմերին, որոնք, ի տարբերություն Խորհրդային Միության տարածքում գտնվող թեմերի, ապրում էին իրենց բնականոն կյանքով, նախաձեռնում նոր թեմերի ստեղծումը Սփյուռքում: Կաթողիկոսական կոնդակով 1936 թ. մայիսի 30-ին հաստատվեց Հարավային Ֆրանսիայի հայոց թեմը, իսկ 1937 թ. հուլիսի 26-ին՝ Հարավային Ամերիկայի թեմը²:

Կարևորելով աճող սերնդին հայեցի դաստիարակելու գործում հայ դպրոցի ունեցած մեծագույն դերը Սփյուռքում՝ կաթողիկոսը կոնդակներ էր ուղղում համայնքներին՝ տեղերում եկեղեցիներին կից նոր դպրոցներ բացելու նախաձեռնությամբ:

Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսը, որը հաճախ մեղադրվում էր իբրև «դաշնակ», «ազգայնամուլ», երկար տարիներ նուրբ քաղաքականություն վարեց իշխանությունների հետ թե՛ իբրև Արարատյան թեմի փոխառաջնորդ, թե՛ իբրև Գևորգ Ե կաթողիկոսի ներկայացուցիչ, թե՛ իբրև հայրապետական տեղապահ: Չնայած իշխանությունների մշտական կասկածներին, այնուամենայնիվ նրանց չհաջողվեց կասեցնել Խ. Մուրադբեկյանի՝ Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելը և հայրապետական անկոտրում ու ազգամվեր գործունեություն ծավալելը: Բայց, դժբախտաբար, ահա այս որոնումների ու փնտրտուքի ճանապարհին էր Վեհափառ հայրապետը, երբ իշխանություններն իրագործեցին իրենց չարաբաստիկ ոճրագործությունը. անկոտրում կաթողիկոսը 1938 թ. ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը մահացավ առեղծվածային հանգամանքներում, իսկ Մայր Աթոռը հայտնվեց քառսային իրավիճակի մեջ:

Երջանկահիշատակ Տ. Խորեն Մուրադբեկյան կաթողիկոսի վաղաժամ մահը ցնցեց բոլորին, աշխարհի տարբեր երկրներից ցավակցական հեռագրեր և գրություններ էին ստանում Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդն ու կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքյանը:

Համաձայն Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսի դեռևս 1936 թ. ապրիլի 18-ին գրված կտակի՝ ընդհանրական հայրապետության իրավազրկված ղեկը հանձնվեց Գևորգ արքեպիսկոպոս Չորեքյանին: Կտակում մասնավորապես ասված է. «Ի նկատ առեալ զփորձառութիւն Ձեր յընթացս բազմամեայ և պատասխանատու պաշտօնավարութեանդ, նա-

² Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921–1938), գ. 6, էջ 142:

ել գխտհեն, զհեռատես և շրջանըկատ բնաւորութիւն Ձեր, այսու Հայրապետական կոնդակաւս նշանակենք զՁեզ տեղակալ և նախագահող Գերագոյն հոգևոր խորհրդոյս Ս. Էջմիածնի»³:

Խորեն Ա կաթողիկոսի՝ 1938 թ. ապրիլի 18-ի կոնդակի համաձայն՝ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը, ստանձնելով տեղապահի պարտականությունները, իր շրջաբերական խոսքում ուղղված բոլոր թեմերին, նշում էր. «Խորեն Սուրադբեկյան կաթողիկոսի մահը խոր վիշտ պատճառեց Ս. Էջմիածնի միաբանութեանը, սակայն աշխարհի ամեն կողմից և միութենական սահմանի հանրապետութիւններից տեղացող վշտակցութեան, սիրոյ եւ հավատարմութեան զգացմունքներով լի հեռագիրները ու գրութիւնները առ պատմական Մայր Աթոռ Ս. Էջմիածինը մխիթարում և քաջալերում են մեզ»⁴:

Եվ ահա, այդ ժամանակվանից սկսած, Հայ եկեղեցու ղեկի մոտ ամուր կանգնեց Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը՝ ստանձնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ղեկավարի դերը, դրանով իսկ դառնալով կաթողիկոսի փաստացի տեղապահը:

Ծանր օրեր էին Հայ եկեղեցու համար: Ստալինյան համակարգը Հայրենական մեծ պատերազմի նախօրեին իր զորեղ ազդեցության տակ էր առել ամբողջ հոգևոր ոլորտը:

Ժամանակը շատ բարդ էր և լուրջ: Ահա այս անորոշ և դժվարին պայմաններում Գևորգ արքեպիսկոպոսը ջանում էր իրականություն դարձնել հայոց նահատակ կաթողիկոսի սրբազան կտակը: Ամեն քայլափոխի հնարավոր էին սայթաքում և հարկադրանք, պահանջվում էին դիվանագիտություն և շրջահայացություն:

Անցնելով իր պարտականություններին՝ Գևորգ Չորեքչյանը հանդիպեց լուրջ խոչընդոտների և հայտնվեց վտանգներով լեցուն իրադրության մեջ: Սակայն Սրբազան հայրը, իրեն հատուկ խոհեմությամբ, եռանդով ու համառությամբ, առանց հուսահատվելու, լավատեսությամբ և համբերատարությամբ տոգորված, իր շուրջը համախմբելով Գերագույն հոգևոր խորհրդի մի քանի անդամների, շարունակում էր Մայր Աթոռի պահպանման գործը:


Նա, օգտվելով խորհրդային իշխանության հանդուրժողական քաղաքականությունից, ինչը արդյունք էր երկրում պատերազմական վիճակի, փորձում էր կայունացնել եկեղեցի-պետություն հարաբերությունները:

1940 թ. սկզբին իշխանությունների վերաբերմունքը եկեղեցու հան-

³ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921-1938), էջ 5:

⁴ Մեսրոպ արք. Աշոյան, Էջեր Հայ եկեղեցու պատմութենն, եր., 1994, էջ 140:

4210099



դեպ սկսեց փոխվել: Ճնշումը նրա վրա խորհրդային իշխանությունների կողմից թուլացավ:

Հայ եկեղեցին 1941 թ. արտասահմանում և միութենական երկրներում բավական բևեռացված վիճակում էր:

Արտասահմանում էին գտնվում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքություններն ու 13 թեմ՝ Հյուսիսային Ամերիկայի արևելյան և արևմտյան (Կալիֆոռնիայի), Հարավային Ամերիկայի գաղութներ՝ 40000 բնակչությամբ, որ դեռևս թեմ չէր դարձել, Իրան–Հնդկաստանի, Ատրպատականի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունաստանի, Թրակիա–Մակեդոնիայի (Թրակիա–Մակեդոնիայի թեմը Հունաստանի կառավարությունը չէր ճանաչում և ընդունում էր միայն Աթենքի առաջնորդությունը), Եվրոպայի, Մարսելի, Եգիպտոսի և Իրաքի թեմերը:

ԽՍՀՄ հանրապետություններում կային 6 թեմեր՝ Արարատյան, Շիրակի, Վրաստանի, Բաքվի և Թուրքմենստանի, Հյուսիսային Կովկասի և Նոր Նախիջևանի, Բեսարաբիայի: Ղարաբաղի և Գանձակի թեմերը, որոնք գտնվում էին Ադրբեջանում, միացել էին Բաքվի թեմին, իսկ Ջանգեզուրը՝ Արարատյան թեմին: Գաղութահայ թեմերից 7–ը առաջնորդում էին եպիսկոպոսներ (Հյուսիսային Ամերիկայի, Հարավային Ամերիկայի, Եգիպտոսի, Հունաստանի, Ռումինիայի, Եվրոպայի, Ատրպատականի), իսկ մնացածները՝ վարդապետներ կամ քահանաներ՝ առաջնորդական փոխանորդներով: Այդ թեմերն ունեին բավականաչափ եկեղեցիներ, քահանայություն և դպրոցներ, բարեգործական և կուլտուր–կրթական հաստատություններ: Միութենական վեց թեմերից միայն երկուսն ունեին եպիսկոպոս առաջնորդներ (Արարատյան և Շիրակի թեմեր), մյուսները կառավարվում էին քահանա առաջնորդական փոխանորդներով և թեմական խորհուրդներով: Միութենական թեմերում եկեղեցիները թվով շատ ավելի քիչ էին, քան անցյալում, բայց բավարար էին թեմերի կարիքները հոգալու համար⁵:

Արտասահմանի և միութենական թեմերի այս զուգահեռ տարվող համեմատությունը ակնհայտ է դարձնում գաղութահայ թեմերի առավելությունը, սակայն միայն արտաքուստ: Արտասահմանյան թեմերը պահպանում էին հայ դպրոցները, կրթա–մշակութային և բարեգործական հաստատությունները: Եկեղեցին խորհրդային երկրներում բարեգործությամբ չէր զբաղվում, եթե նախկինում Հայ եկեղեցին պահում էր տարրական դպրոցներ, օգնում կարիքավոր ուսանողությանը բարձրա–

⁵ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 266, ք. 12–13:

գույն կրթություն ստանալու, ապա միութենական երկրներում դրա անհրաժեշտությունը չկար, որովհետև կրթությունը պարտադիր էր և անվճար: Բաց էին բարձրագույն և մասնագիտական կրթական հաստատությունների դռները բոլոր ցանկացողների համար: Եվ այս ամենը նպաստում էր կրթությունը մատչելի դարձնելուն, հայ մշակույթը զարգացնելուն և տարածելուն:

Գերագույն հոգևոր խորհուրդը, ինչպես նախկինում, այնպես էլ այդ ժամանակ ձգտում էր պահպանել և առավել սերտացնել կապերը Կիլիկիո կաթողիկոսության, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքությունների, բոլոր թեմերի և նրանց առաջնորդների հետ: Այդ ամենի ապացույցն է եղել այն հանգամանքը, որ Էջմիածնի ընտրությունների ժամանակ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի միջոցով կաթողիկոսության հինգ թեմերը նույն իրավունքներով մասնակցել են Ամենայն հայոց հայրապետի ընտրություններին: Նույն նպատակով էր նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ընտրությունների հետաձգումը, որպեսզի Էջմիածնի պատվիրակները հնարավորություն ունենան մասնակցելու ընտրություններին: Էջմիածինը նման դիրքորոշում ուներ նաև թեմերի հանդեպ՝ ձգտելով պահպանել Հայ եկեղեցու միասնականությունը: Միութենական թեմերի կառավարումը Էջմիածինն իրականացնում էր կառավարության հանդեպ չեզոքություն պահպանելով, իր գործունեությունը սահմանափակելով միայն հոգևոր ոլորտում:

Հոգևոր դասի պատրաստման հարցը ևս Գերագույն հոգևոր խորհրդի համար շարունակում էր մնալ խնդրահարույց: Չնայած իշխանությունների կողմից արդեն իսկ թույլտվություն կար բացելու հոգևոր ճեմարանը, սակայն Էջմիածինը չուներ այն դրամական միջոցները, որ պահպաներ հաստատությունը, իսկ արտասահմանում չգտնվեց մեկը, ով կօժանդակեր իր նվիրատվությամբ:

Հոգևոր ասպարեզը չուներ նախկին հեղինակությունն ու ազդեցությունը նոր սերնդի շրջանում: Սակայն նշենք նաև, որ Երուսաղեմում գործում էին հոգևոր դպրոցն ու ընծայարանը, որ կուսակրոն և ամուսնացած հոգևորականներ կարող էր մատակարարել, բայց այս պարագայում էլ համարյա անհնար էր նրանց մուտք գործելը Խորհրդային Հայաստան⁶:

Սփյուռքում իր հեղինակությունը բարձրացնելու նպատակով և նրանց օժանդակությունը ակնկալելով՝ Հայաստանի կոմկուսը փորձում էր ցույց տալ, թե իբր Խորհրդային Հայաստանում իսկական ժողովրդա-

⁶ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 266, ք. 31:

վարություն է և հավատքի ազատություն, համերաշխորեն գործակցում են կրոնն ու կոմունիստական գաղափարախոսությունը և, 1940 թ. փետրվարի 7-ին Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը, որպես Չայ եկեղեցու ղեկավար, հրավիրվեց Չայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահություն և հանդիպում ունեցավ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մացակ Պապյանի հետ:

Հանդիպման մասին Գ. Չորեքչյանը մասնավորապես հաղորդում էր հետևյալը. «Ամսոյ 7-ին ներկայացած ՀԽՍՀ Հանրապետութեան Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մացակ Պետրոսովիչ Պապյանին՝ իմանալու համար, թե ինչ արդիւնք է ունեցել Գերագույն հոգևոր խորհրդի՝ 1939 թ. մայիսի 25-ի դիմումը Ամենայն Չայոց Կաթողիկոսի ընտրութեան վերաբերեալ: Մացակ Պետրոսովիչը յայտարարեց, թե ինքը այդ խնդրի առթիվ տեսակցություն է ունեցել Մոսկվայում Կենտրոնական իշխանութեանց հետ, որոնք որոշակի յայտարարել են, թե ընտրութիւնը անշուշտ տեղի պիտի ունենայ, սակայն եթե այժմ լինի, չեն կարող թույլատրել մուտքը արտասահմանի պատգամավորների՝ նկատի առնելով ներկայ քաղաքական կացութիւնը (Եվրոպայի պատերազմական վիճակը): Հարց տուի թե թարգեօք Գերագույն Հոգևոր խորհուրդը կարող է հաղորդել արտասահմանյան թեմերին, որ ընտրութիւնը թույլատրուած է, և կարգադրել Ազգային-եկեղեցական ժողովի ժամկետի նկատմամբ: Նախագահը պատասխանեց. «Այո՛, կարող եք»⁷:

Զրույցի ընթացքում նկատելի էին կառավարության հետևողականությունը և ցուցաբերած ուշադրությունը Չայ եկեղեցու հիմնահարցերի նկատմամբ, ինչի արդյունքում համաձայնություն ձեռք բերվեց անցկացնել Ազգային-եկեղեցական ժողով, քննարկվեց Մայր տաճարի նորոգման, տնտեսական բնույթի և մի շարք այլ խնդիրներ: Վերոհիշյալին հաջորդեց Չայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության որոշումը. «1940 թվին Էջմիածնի վանքի տերիտորիայում եկեղեցական ժողով հրավիրել՝ արտասահմանյան թեմերի ներկայացուցիչների մասնակցությամբ»⁸:

Նշենք, որ Ազգային-եկեղեցական ժողովի զումարման և կաթողիկոսական նոր ընտրությունների հարցը, եկեղեցական կանոնադրության 22-րդ հոդվածի համաձայն, հայրապետի մահից վեց ամիս հետո պետք է տեղի ունենար: Սակայն հանգամանքներն այնպես էին դասավորվել, որ Հայրապետական տեղապահն ու Գերագույն հոգևոր խորհուրդը մի-

⁷ Վավերագրեր Չայ եկեղեցու պատմության (1921-1938), հ. 5, էջ 63-64:

⁸ Նույն տեղում, էջ 66:

այն մեկ տարի անց, այն է՝ 1939 թ. մայիսին դիմեցին Հայաստանի կառավարությանը՝ Ազգային-եկեղեցական ժողով գումարելու պաշտոնական խնդրանքով: Էջմիածինը Ազգային-եկեղեցական ժողով գումարելու իրավունք ստացավ միայն 1940 թ. հունիսին⁹:

Համաձայնություն ձեռք բերելով իշխանությունների հետ, Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը 1940 թ. հունիսի 8-ին հեռագրեր հղեց արտասահմանյան հայոց թեմերին՝ առաջիկա Ազգային-եկեղեցական ժողովին իրենց պատգամավորներին ուղարկելու առաջարկով:

Գերագույն հոգևոր խորհուրդն իր շրջաբերականում նշում էր.

«Հայրապետական տեղապահն ու Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը ուրախ և բախտավոր են հաղորդելու Ձերդ Գերաշնորհութեանը վերոհիշյալի մասին:

Ընդսմին ներփակելով հայ կառավարութեան թույլտվութեան ու պատուիրակների ընտրութեան հրահանգը, որով պիտի ղեկավարուի գումարուելիք Ազգային-եկեղեցական ժողովն ու կատարվին Հայրապետական պատուիրակների ու պատգամաւորների ընտրութիւնը՝ Ս. Էջմիածնի Գերագոյն հոգևոր խորհուրդը առաջադրում է կատարել վերոհիշեալ ընտրությունները և հետևանքի մասին անմիջապես հաղորդել Գերագոյն հոգևոր խորհրդին հեռագրով և գրութեամբ:

Գերաշնորհութեանդ խնամքին յանձնւած թեմը՝ վերոյիշեալ Հայրապետահաստատ կանոնադրութեամբ Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցելու համար ընտրելու է մեկ պատգամաւոր, որոնք Ձեզ հետ միասին նշանակուելիք ժամանակին պարտավոր եք լինել Մայր Աթոռ Ս. Էջմիածնում»¹⁰:

Իսկ Երուսաղեմի պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյանն իր պատասխան նամակում գրում էր. «Ձայս հաղորդելով Ձեր Ամենապատվութեան կմաղթենք, որ Ձեր ջանքերը պսակվեն հաջողութեամբ և քիչ ժամանակ Ազգն երջամիկ բախտն ունենայ ողջունելու Հայաստանյայց սուրբ եկեղեցու արժանավոր Հովվապետը սուրբ Լուսավորչի Աթոռի վրայ»¹¹:

Գևորգ արքեպիսկոպոսի՝ արտասահմանյան թեմեր հղած նամակներին արծագանքեցին բավականին մեծ ակտիվությամբ, որը և նպաստեց միջթեմական կապերի աշխուժացմանը, ինչը փակուղի էր մտել դեռևս 30-ական թվականներին: Գևորգ Չորեքչյանին և Գերագույն

⁹ ՀԱԱ, ֆ.409, ց. 1, գ. 266, ք. 30:

¹⁰ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921–1938), էջ 69:

¹¹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3867, ք. 8–9:

հոգևոր խորհրդին պատասխան նամակներ էին գալիս Ֆրանսիայից, ԱՄՆ–ից, Մերձավոր Արևելքի երկրներից իրենց կատարած աշխատանքների մասին: Նրանք տեղեկացնում էին պատգամավորական ընտրությունների, թեմերի վարչական, տնտեսական, ինչպես նաև հոգևոր նոր թեմերի կազմավորման, հոգևորականների նշանակման խնդիրների մասին:

Սակայն 1939 թ. սեպտեմբերի 1–ին երկրորդ համաշխարհային պատերազմի սկսվելու պատճառով պատգամավորների մեծ մասը չկարողացավ ժամանել խորհրդային Ռուսաստան:

Նախատեսված 1940 թ. կայանալիք Ազգային–եկեղեցական ժողովը չգումարվեց, չնայած Գերագույն հոգևոր խորհուրդը ջանք էր խնայել, որպեսզի կարճ ժամանակամիջոցում կազմակերպեր ընտրությունները: Բայց արտասահմանի մի քանի թեմեր (Ղուսիսային Ամերիկայի, Հարավային Ամերիկայի, Իրան–Յնդկաստանի և այլն) խնդրանքով դիմել էին Գերագույն հոգևոր խորհրդին կաթողիկոսական ընտրությունները հետաձգել մինչև 1941 թ. գարուն, քանի որ ինչ–ինչ պատճառներով դեռևս պատգամավորական ընտրություն չէին կատարել¹²:

բ) 1941 Թ. ԱԶԳԱՅԻՆ–ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը, քննարկելով մի շարք խնդիրներ, 1940 թվականի նոյեմբերի 10–ի նիստում որոշեց Ազգային–եկեղեցական ժողով գումարել 1941 թ. ապրիլի 10–ին Ամենայն Ռուսոց կաթողիկոսի ընտրության համար:

Գերագույն հոգևոր խորհրդի շրջաբերականում ասվում էր.

«Հաղորդելով վերոհիշեալը, Ս. Էջմիածնի Գեր. հոգևոր խորհուրդն առաջադրում է այն թեմերին, ուր ցարդ պատգամավորական ընտրութիւններ չեն կատարուած, աւարտել ընտրութիւնները մինչև 1941 թւի յունվարի 1–ը, որպեսզի պատգամավորները հնարաւորութիւն ունենան իր ժամանակին միջնորդութիւն հարուցանել Էջմիածին գալու համար թոյլտութիւն ստանալու: Ս. Էջմիածնի Գ. Յ. խորհուրդը խնդրում է յանմիջապէս ընտրութիւններից յետոյ հաղորդել պատգամավորի մասին պահանջուած տեղեկանքը: Ս. Էջմիածնի Գ.Յ. խորհուրդը վերստին յոյս է տածում, որ ամեն ջանք գործ կընե գլուխ բերելու Ս. Էջմիածնի համար

¹² Վավերագրեր Ռուս եկեղեցու պատմության (1938–1955), էջ 118:

պատմական նշանակութիւն ունեցող տոյն գործը, որպէսն է Ամենայն Յայրոց Կաթողիկոսի ընտրութիւնը»¹³: Աշխարհի տարբեր անկյուններից շարունակվում էին նամակներ ուղղվել Մայր Աթոռ Ս. Էջմիածին թեմերում տիրող իրավիճակի, այսինքն՝ տարաբնույթ միջոցառումների, առաջիկա Ազգային-եկեղեցական ժողովին իրենց պատվիրակների ընտրությունների ընթացքի և որոշ երկրների կառավարությունների կողմից մուտքի արտոնագրեր չտրամադրելու խնդիրների մասին: Որոշ թեմեր առաջարկում էին Մայր Աթոռին ներկայացնել պատվիրակների անուններ, որոնք իրենց մասնակցությունը կբերեն Ազգային-եկեղեցական ժողովին, իսկ որոշ թեմերի կողմից էլ առաջարկվում էր նշանավոր հայ մշակութային գործիչների թեկնածությունը (Յարավային Ամերիկայի կողմից առաջարկվեցին Յոաչյա Աճառյանն ու Ավետիք Իսահակյանը)՝ որպէս իրենց թեմի ներկայացուցիչներ¹⁴:

Ի վերջո 1941 թվականի ապրիլի 10–13–ը գումարվեց Ազգային-եկեղեցական ժողովը՝ նախագահությամբ Յայրապետական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոսի, որին ներկա էին 49 պատգամավորներ և արտասահմանից փոխանցված քվեների 77 ծայրի իրավունք: Ուստի եպիսկոպոսների թվի պակասի և արտասահմանյան երկրներից պատգամավորների ոչ բավարար քանակի պատճառով Ազգային-եկեղեցական ժողովը չկարողացավ կաթողիկոս ընտրել:

Ազգային-եկեղեցական ժողովը, ի լրումն Յայ եկեղեցու ընտրական սկզբունքի և եկեղեցական գործերն անխսական և կանոնավոր վարելու նպատակով ընտրեց.

ա) Ամենայն Յայոց հայրապետության տեղապահ՝ Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին, որը նույն պաշտոնը վարել էր՝ սկսած 1936 թ. արձակած Յայրապետական կոնդակի զորությամբ:

բ) Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ Գերաշնորհ Տ. Գևորգ, Տ. Արսեն, Տ. Գարեգին և Տ. Յուսիկ արքեպիսկոպոսներ և երկու աշխարհիկ պատգամավոր անդամներ՝ իրավաբան պ. Պետրոս Յովհաննիսյան և բժիշկ պ. Յայկ Եղիազարյան:

Ազգային-եկեղեցական ժողովը, լսելով Գերագույն հոգևոր խորհրդի 8–ամյա գործունեության մասին, ընդունում է բանաձև՝ հավանություն տալով և նրա արժարժած խնդիրների քննությունը թողնելով ապագայում գումարվելիք Ազգային-եկեղեցական ժողովի հայեցողությանը¹⁵:

¹³ ՀԱԱ, ֆ.409, ց. 1, գ. 253, թ. 6, բնագիր:

¹⁴ ՀԱԱ, ֆ.409, ց. 1, գ. 3750, թ. 20:

¹⁵ Վավերագրեր Յայ եկեղեցու պատմության (1938–1955), էջ 109:

Այնուամենայնիվ Սփյուռքի և Հայաստանի հոգևոր և աշխարհիկ մի շարք առաջնորդներ ու պատգամավորներ երկյուղ կրելով իշխանություններից և նկատի ունենալով քաղաքական անբարենպաստ պայմանները, ձեռնպահ մնացին ժողովին մասնակցելուց:

1941 թ. ապրիլի 10–13–ը էջմիածնում գումարված Ազգային–եկեղեցական ժողովի արձանագրությունների մեջ՝ ուղղված Հյուսիսային Ամերիկայի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանին, մեկ անգամ ևս հիշատակվում է, որ Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության հետաձգումը կապված է հետևյալ պատճառների հետ.

ա) Արտասահմանի պատգամաւորները, բացի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչ և պատգամաւոր Գերաշնորհ Խաղ Արքեպիսկոպոս Աջապահեանից՝ հակառակ իրենց բուռն ցանկութեան (պատերազմական հանգամանքների պատճառով), անկարող են եղել զալ Ս. էջմիածին և անձամբ մասնակցել Ազգային–եկեղեցական ժողովին:

բ) Կաթողիկոսի օծումը կատարելու համար, Հայ եկեղեցու աւանդական սովորութեան և կանոնական կարգերի համաձայն, պահանջված եպիսկոպոսների թիվը չկար: Ուստի և Ազգային–եկեղեցական ժողովը, թեւ ըստ ամենայնի իրավատէր Հայրապետական ընտրութիւն կատարելու, սակայն, ցանկանալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը կատարել խորհրդային երկրների և արտասահմանեան պատգամաւորների լայն մասնակցութեամբ եւ օծումը՝ համաձայն Հայ եկեղեցու աւանդական ծեսի և եկեղեցական կանոնների, որոշեց ժամանակաւորապէս յետաձգել կաթողիկոսական ընտրութիւնն ու օծումը պատէի ժամանակի, երբ յիշատակուած արգելառիթ պայմանները վերանան եւ հնարաւոր լինի գումարել Ազգային–եկեղեցական ժողովի նոր գումարումը Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելու համար՝ պահելով պատգամաւորների լիազօրութիւնը:

Նկատի առնելով վերոհիշյալը՝ Ազգային–եկեղեցական ժողովը պարտք է համարում հիշեցնել այն մասին, որ հանձնարարել է Գերագույն հոգևոր խորհրդին դիմել իշխանություններին և միանգամայն վստահ է, որ շուտով կստանա գրավոր հավաստիացում՝ պատեի ժամանակին վերստին գումարելու Ազգային–եկեղեցական ժողով Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելու համար¹⁶:

Թերևս հարկ է մատնանշել, որ տեղի ունեցող աշխարհաքաղաքա-

¹⁶ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), էջ 108:

կան իրադարձությունները, համաշխարհային պատերազմը և Խորհրդային Միության նկատմամբ Սփյուռքում ձևավորված երկյուղն ու անվստահությունը, ինչպես նաև արտասահմանյան թեմերի երկբևեռված եկեղեցիների դիրքորոշումը լուրջ խոչընդոտ էին տվյալ ժամանակամիջոցում աշխարհի տարբեր անկյուններում ապրող, տարբեր մտեցումներ ու հայացքներ ունեցող Ազգային–եկեղեցական ժողովի պատգամավորներին համախմբելու համար:

Ուստի Ազգային–եկեղեցական ժողովը, հաշվի առնելով իրավիճակը, եզրակացրեց. «Որքան և ներկայիս կանոնադիր ժողովն իրավասու է Ամենայն Հայոց պատրիարք, կաթողիկոս ընտրելու, սակայն ընտրելիս կաթողիկոսական լրիվ իրավունքներն ու արտոնություններն ստանձնել տալու հնարավորություն չունի»: Մայր Աթոռի վարչական հեղինակությունն առանձնապես շեշտելու համար ընտրում է ոչ միայն Գերագույն հոգևոր խորհուրդ, այլ նաև Ամենայն Հայոց Հայրապետական Տեղակալ և Մայր Տաճարի լուսարարապետ¹⁷:

Ահա այդ օրվանից է սկսվում Մայր Աթոռի և Հայ եկեղեցու տարեգրության նոր, բարդ ու պատասխանատու ժամանակաշրջանը: Ազգընտիր տեղապահը գրեթե մենակ (ընդամենը 4 միաբաններ կային Էջմիածնում), պահի ճիշտ ըմբռնումով կարողացավ եկեղեցին դուրս բերել իրեն պարտադրված վիճակից՝ այն դնելով նոր և հանդուրժողական կարգավիճակի մեջ:

Անդրադառնալով 1941 թ. ապրիլի 10–13–ը Ս. Էջմիածնում գումարված Ազգային–եկեղեցական ժողովին, որտեղ հնարավորություն չտրվեց անցկացնել կաթողիկոսական ընտրություններ, պետք է նշել, որ կային նաև ներթեմական խնդիրներ, որոնց ետևում կուսակցությունների պառակտիչ ու վտանգավոր գործողություններն էին, ինչը տարանջատում էր եկեղեցու միասնականությունը:

Ուժերի գերլարվածությամբ կաթողիկոսական տեղապահը՝ Գևորգ Չորեքյանը, փորձում էր վերահսկել իրադրությունը և իր բազմաթիվ նամակներում՝ ուղղված նվիրապետական աթոռների ներկայացուցիչներին, իր մտահոգությունն էր արտահայտում՝ նրանց հորդորելով հեռու մնալ կուսակցական խմորումներից, որոնք ամեն կերպ փորձում էին տարանջատել հայության երկու հատվածները միմյանցից:

«Հանգամանքները այնպես են դասաւորված, որ առայժմ թե՛ Էջմիածնի միաբանության համար անդամներ, թե՛ գաղութահայ թեմերի համար առաջնորդներ ու հովիւներ պիտի մատակարարեն Երուսաղէմի վանքի և

¹⁷ Նույն տեղում, էջ 111–112:

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգևոր դպրոցները: Ուստի և Էջմիածինը պարտաւոր է հետամուտ լինել՝ իմանալու թէ ինչպիսի ոգի և ուղղութիւն է իշխում յիշատակված դպրոցներում...»¹⁸:

Էջմիածնի բռնած դիրքը հայտնի է. նա աշխատում է թեմերի ղեկավարութիւնը կենտրոնացնել անկուսակցական առաջնորդների ձեռքում: Մտահոգութիւնը միանշանակ արդարացի էր, այդ ժամանակ հաճախ էր խոսվում տարանջատել թեմերը իրարից՝ այս կամ այն Աթոռի ենթակայության տակ դնելու նախապայմանով, ինչը պարզ երևում է Գևորգ Չորեքչյանի նամակներից.

«Կան հոսանքներ և անհատ եկեղեցականներ, որոնք ներհակ ուղղութեան են հետևում՝ փորձելով գայթակղեցնել գաղութահայութեանը դէպի Էջմիածինն ու Խորհրդային Չայաստանը: Այս վնասակար հոսանքի դեմ պիտի մաքառէ յուրաքանչիւր հայրենասէր հայ, նամանաւանդ յուրաքանչիւր պաշտօնատար և ղեկավար հոգևոր անձն ու հաստատութիւն: Ուստի կարևոր է գիտենալ այդպիսի ընթացք ունեցող թէ պաշտօնատար անձանց և թէ հաստատութիւններ ու հոսանքներ՝ չարիքի առջևն առնելու համար»¹⁹:

Այնուհանդերձ նշենք, որ Գևորգ Չորեքչյանի՝ արտասահմանյան որոշ թեմերի ուղղված նամակներում մտահոգութիւն և կասկած են արտահայտված եղել պատգամավորական ընտրութիւնների կազմակերպման և Ազգային-եկեղեցական ժողովին իրենց մասնակցութիւնը բերելու վերաբերյալ: Որպէս դրա ապացոյց մեջբերում կատարենք ռումինահայ թեմի առաջնորդ Դուսիկ արքեպ. Զոհրաբյանի պատասխան նամակից՝ ուղղված Գևորգ սրբազանին, որտեղ նա նշում է. «Սի շատ ծանրակշիռ կետ կայ նամակիդ մեջ, որ հետևեալն է. «Եթէ չգաս Էջմիածին, ժողովին չմասնակցես և Գերագոյն հոգևոր խորհրդի պաշտօն չընդունես, դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ Դաշնակցութեան հացին իւր քսած լինել» և «հրաժարուել Էջմիածնի հետ համագործակցելուց և՛ այժմ, և՛ ապագայում»: Սա պարզապէս դատապարտութիւն է, մերժելով կը մերժիմ գայն»²⁰: Ապա ավելացնում է, որ իր՝ Էջմիածին չգալու պատճառը Եվրոպայում պատերազմի պատճառով ստեղծված անապահովութիւնն ու իր առողջական վիճակի վատթարացումն է:

Զետևելով այս խնդրի լուսաբանմանը՝ մեջբերում կատարենք նաև Գարավային Ամերիկայի թեմի առաջնորդ Գարեգին արքեպ. Խաչատրյանի՝ Գևորգ Չորեքչյանին ուղղված նամակից.

¹⁸ ԶԱԱ, ֆ. 454, ց. 1, գ. 195, թ. 1:

¹⁹ Լույն տեղում, թ. 2:

²⁰ ԶԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5294, թ. 8:

«Շրջաբերականին մեջ ակնարկուած «Եկեղեցւոյ թշնամիները (հակառակորդները)» ինձ կը թուի թէ գոյութիւն ունեն իսկապէս աւելի եկեղեցիէն ներս, քան թէ եկեղեցիէն դուրս: Եւ ցաւով պարտինք ընդունել թէ առավելագոյն չափով զայն պաշտպանելու կոչումն ունեցողներուն՝ հոգևորականներուս մեջ և անմիջական մեր շուրջը»²¹:

Ապա Գարեգին սրբազանը Ազգային-եկեղեցական ժողովին իրենց մասնակցութիւնը բերելու նպատակով պատգամավորներ ընտրելու խնդրի շուրջ տեղեկացնում է, որ այն առավել քան կապված է եկեղեցական-թեմական վիճակը բարելավելու և ներքին խաղաղութիւնը վերականգնելու հետ:

Թերևս հաշվի առնելով Գևորգ Չորեքչյանի վերոհիշյալ վերաբերմունքը, որին հաջորդում են այնպիսի փաստեր, որոնք վկայում են այն մասին, որ Ազգային-եկեղեցական ժողովին մի շարք պատգամավորների չներկայանալու պատճառով ոչ միայն իշխանութիւններից երկյուղն ու քաղաքական անբարենպաստ պայմաններն էին, այլև թեմերի կուսակցական խմորումները, որոնք էլ հարկադրեցին կաթողիկոսական տեղապահին խիստ արտահայտվել մերժման նամակներ ուղարկած Ազգային-եկեղեցական ժողովին հրավիրված մի խումբ պատվիրակների նկատմամբ²²:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ նամակներն իրենց պատասխաններն ունեցան: Նամակագիրները, անդրադառնալով Գևորգ Չորեքչյանին անհանգստութիւն պատճառող խնդրին, վստահեցնում էին, որ իրենք հակված չեն այս կամ այն քաղաքական կուսակցութեան կողմը և գտնվում են հոգևոր անկախության և ինքնուրույնութեան մեջ՝ փափագելով եկեղեցւոյ վերահաստատված միասնականութիւնը, որը ավելի կանրապնդի Սփյուռքի և Ս. Էջմիածնի կապերը՝ հետևում թողնելով «Եկեղեցւոյ թշնամիներին»:

Գևորգ Չորեքչյանի մտահոգութեան խնդիրը հիմնականում ԱՄՆ-ի թեմում կատարվող իրադարձութիւններն էին: Ինչպէս հայտնի է, դեռևս 1930-ական թվականներից պառակտվում էր ամերիկահայ գաղութը, Ս. Էջմիածնին ուներ շուրջ հիսուն եկեղեցիների (տաճարների) վերահսկողութիւն, իսկ դաշնակցութիւն կուսակցութիւնը՝ տասը ակումբ-եկեղեցիների, ուստի ազգային եկեղեցւոյ պառակտման սկիզբն ու օջախը հանդիսացող ամերիկահայ թեմի պատգամավորների գլխավորութեամբ թեմի առաջնորդ Գարեգին արքեպ. Հովսեփյանի (1938 թ.՝ թեմի առաջ-

²¹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 253, թ. 2:

²² Վավերագրեր Հայ եկեղեցւոյ պատմութեան (1938-1955), էջ 84:

նորո) մասնակցությունն Ազգային-եկեղեցական ժողովին ավելի էր կարևորվում, որովհետև չմասնակցելն ավելի կխորացներ ստեղծված վիճի: Խուսափելով իրական վտանգից՝ Գևորգ Չորեքչյանը ռումինահայ թեմի առաջնորդ Յուսիկ արքեպ. Չոիրաբյանին ուղղված նամակում իր անհանգստությունն է հայտնում նրա և Գարեգին Յովսեփյանի բացակայության պատճառով. «Ո՞վ կգա ընտրության, եթե էջմիածնի միաբանները խուսափում են գալ, մի՞թե մեք բերած պատճառաբանություններից առավելագույն չափով չեն վերաբերում նաև մյուս պատգամավորներին, որոնք համենայն դեպս Քեզ և մյուս միաբանների չափով բարոյական պարտականություն չունեն անպատճառ գալու էջմիածին՝ մասնակցելու ընտրական ժողովին: Վերստին պնդում եմ, որ հատկապես ըս և Գարեգին արքեպ. բացակայությամբ ժողովում կստեղծվի մեզ համար ծանր վիճակ, որ անշուշտ պարզ է և Ձեզ համար, և դորա բարոյական ծանր պատասխանատվությունը պատմության առջև կը ծանրանա Ձեզ վերա»²³:

Գևորգ Չորեքչյանի վերոհիշյալ «բարոյական պատասխանատվության» պատճառներն իրականում անսպասելի չեն եղել, որովհետև խնդիրը վերաբերում էր դեռևս 1941 թվականին, երբ հստակ ու լիարժեք տեղեկատվություն չկար Խորհրդային Չայաստանում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ, որպեսզի Սփյուռքում միանգամայն նոր կարծիք ձևավորվեր, այնինչ կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը, տիրապետելով իրավիճակին, փորձում էր Ս. էջմիածնի շուրջը համախմբել բոլորին՝ Չայաստանյայց եկեղեցին օր առաջ դուրս բերելու իրեն պարտադրված վիճակից՝ այն դնելով նոր և հանդուրժողական կարգավիճակի մեջ:

Նմանատիպ խնդիրների առկայությունը և Խորհրդային Չայաստանում տիրող քաղաքական իրավիճակը, իրոք, դժվարին կացության մեջ էին դրել Գևորգ Չորեքչյանին: Մի կողմից ներթեմական խնդիրներն էին՝ իրավամբ հեղեղված ներքին «անհանդուրժողականության» և «անմիաբանության» բազմապիսի դրսևորումներով, իսկ մյուս կողմից՝ Սրբազան հոր զգուշավոր հարաբերություններ հաստատելու ձգտումն էր իշխող վարչակարգի հետ:

1941 թ. Ազգային-եկեղեցական ժողովը չսահմանափակվեց Գերագույն հոգևոր խորհրդի և կաթողիկոսական տեղապահի ընտրություններով՝ ժողովում անդրադարձան հայ եկեղեցու սահմանադրությանը, եկեղեցիների բարեկարգությանը, արտասահմանի և միութենական երկրնե-

²³ Նույն տեղում, էջ 93:

րի հայ եկեղեցու ներկա վիճակին, հոգևոր դասի պատրաստակամությանը և եկեղեցուն առնչվող մի շարք այլ հարցերի: Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ ընտրվեցին չորս հոգևորական և երկու աշխարհական, իսկ Ամենայն Հայոց հայրապետի ընտրությունները հետաձգվեցին մինչև առաջիկա հարմար ժամանակները:

Ժողովը որոշում է ընդունում.

«ա) Յանձնարարել Գերագույն հոգևոր խորհրդին կատարել կարելոր աշխատանքներ և մշակել ծրագիր, որպիսի նպատակի համար իրաւունք տալ Գեր. հոգ. խ-ին իր կազմը ընդլայնել:

բ) Յանձնարարել Գերագույն հոգևոր խորհրդին պարբերաբար ուղարկել լիազոր ներկայացուցիչներ միութենական հանրապետութեանց և արտասահմանյան թեմերը՝ ծանոթանալու նոցա իրական վիճակին, հոգևոր իշխանութեան գործունէութեան, վերահսկողութեան եւ, ըստ հարկին, ցուցումներ տալու նպատակով: Այլ եւ գոյութիւն ունեցող կապը թեմերի եւ Մայր Աթոռի մեջ եւս առաւել խորացնելու եւ սերտացնելու համար եւ այդ բոլորի մասին զեկուցանելու Գերագույն հոգևոր իշխանութեան ի տնօրինութիւն:

գ) Յանձնարարել Գերագույն հոգևոր խորհրդին՝ ուսումնասիրել Երուսաղեմի եւ Անթիլիասի հոգևոր դպրոցների ծրագիրն ու կանոնադրութիւնը եւ ըստ այնմ հնարաւոր միջոցներով դիւրացնելու երիտասարդ անձանց առաքումը այդ դպրոցները Ս. Էջմիածնի վանքի եւ միութենական թեմերի համար կարող եւ գիտակ հոգևորականներ պատրաստելու նպատակով»²⁴:

Միննույն ժամանակ պատգամավորների որոշմամբ Գերագույն հոգևոր խորհուրդը դիմում է արտասահմանյան բոլոր թեմերի առաջնորդներին՝ նյութական օժանդակություն ցուցաբերելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Առաջարկություն է արվում նաև արտասահմանում գտնվող Ս. Էջմիածնի միաբաններին վերադառնալ Էջմիածին՝ նկատի ունենալով, որ Մայր Աթոռը հոգևորականների կարիք ունի:

Բացի այդ Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովի մասնակիցները ողջույնի ուղերձ հղեցին Հայաստանի կառավարությանը, որտեղ նշվում էր. «Մենք՝ Ազգային-եկեղեցական ժողովի պատգամաւորներս, որ եկել էինք Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելու, մեր ստանձնած պարտականութիւնը հնարաւոր չափով կատարելուց յետոյ պէտք ենք համարում մեր և արտասահմանի պատգամաւորութեան ու հայութեան սրտագին շնորհակալութիւնը յայտնելու Խորհրդային Հա-

²⁴ Եւստի տեղում, էջ 109–110:

յաստանի կառավարութեան, որ թոյլատրել է գումարել Ազգային–եկեղեցական ժողով»²⁵:

Էջմիածնում գումարված Ազգային–եկեղեցական ժողովի գործունեության մասին շրջաբերական ուղարկվեց նվիրապետական աթոռների բարձրաստիճան ղեկավարներին, որպեսզի նրանք տեղեկացնեն արտասահմանի բոլոր թեմերին և պատրաստվեն նոր պատգամավորական ընտրություններին՝ առաջիկայում կաթողիկոսական ընտրություններին մասնակցելու համար:

Եկեղեցական ժողովի նման որոշումը համապատասխանում էր ինչպես էջմիածնի կաթողիկոսության, այնպես էլ ԽՍՀՄ–ում գտնվող Հայոց թեմերի ձգտումներին, որոնց նպատակն էր վերականգնել և վերաբացել փակված վանքերն ու եկեղեցիները, իսկ արտասահմանի հայության համար այն հարթվող մի ճանապարհ էր, որով վերստին ամրանալու էին կապերը Մայր Աթոռի և Խորհրդային Հայաստանի հետ, ինչը վարչահրամայական գաղափարախոսության հետևանքով խափանվել էր:

Ազգային–եկեղեցական ժողովի գումարումից և Ամենայն Հայոց Հայրապետության տեղապահի ընտրություններից հետո Գևորգ արքեպ. Չորեքչյանը մասնակով դիմում է Երուսաղեմի պատրիարք Տեր Մեսրոպ արքեպ. Նշանյանին՝ ներկայացնելով Ս. Էջմիածնի և մյուս նվիրապետական աթոռների համագործակցության և Կիլիկյան Աթոռի նոր կաթողիկոսի ընտրության վերաբերյալ իր տեսակետներն ու առաջարկությունները. «Նվիրապետական Աթոռները՝ խրախուսելով իրենց շրջանի ժողովրդի մեջ ազգապահպանման ինքնագիտակցությունը և նրանց զերծ պահելով ծուլման վտանգից, անզնահատելի ծառայություն են կատարում ազգապահպանման գործում, սակայն նրանցից Ս. Էջմիածինը իր նվիրական ու պատմական սրբություններով ծառայել ու ծառայում է որպես կենտրոնաձիգ ուժ, համախմբող գործոն ցիրուցան եղած հայ ժողովրդի համար՝ պահպանելով նրա ազգային ինքնագիտակցությունը»²⁶:

Այս քայլը մեկ անգամ ևս հավաստում է այն իրողությունը, որ նորընտիր տեղապահը, իր ուշադրության կենտրոնում պահելով նվիրապետական աթոռների և այնտեղ տեղի ունեցող իրադարձությունների ընթացքը, ձգտում էր բարձրացնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դերն ու ամրապնդել Ամենայն Հայոց Հովվապետության դիրքերը:

²⁵ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 266, ք. 38:

²⁶ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3870, ք. 1–2, ձեռագիր:

Լշենք, որ դժբախտ զուգահիստությամբ այդ տարիներին թափուր էին ոչ միայն Էջմիածնի, այլև Անթիլիասի կաթողիկոսական, Երուսաղեմի և Պոլսի պատրիարքական աթոռները²⁷:

Բայց արդեն իսկ տեղի էր ունեցել 1941 թ. Ազգային–եկեղեցական ժողովը, և առաջ էին քաշվել վերոհիշյալ այն հարցերը, որոնք եկեղեցին դուրս կբերեին այդ վիճակից:

Այսպիսով, Հայ Առաքելական եկեղեցու համար ստեղծվել էր մղձավանջային մի իրավիճակ, որն արդյունք էր կոմունիստական հասարակարգի վարած քաղաքականության:

Այս ամենի արդյունքում բռնագրավվեցին Էջմիածնի վանքի շենքերն ու ունեցվածքի մի մասը, դպրոցն անջատվեց եկեղեցուց: Բնակչության շրջանում տարվում էր հակակրոնական քարոզչություն, բանտարկվում էին հոգևորականներ, փակվում էին եկեղեցիները:

Հալածվում էին ոչ միայն Հայ Առաքելական, այլև Ռուս ուղղափառ, կաթոլիկ, մահմեդական, բուդդայական և ԽՍՀՄ տարածքում գտնվող բոլոր եկեղեցիներն ու կրոնական համայնքների հավատացյալներն ու նրանց հոգևոր հովիվները:

Չնայած եկեղեցին ու նրա դավանանքը ենթարկվում էին ուժեղ հալածանքների և գործում էին հակակրոնական անբարենպաստ պայմաններում, սակայն այդ պայմաններում ևս Ամենայն Հայոց հովվապետը համառությամբ ու հետևողականորեն աշխատում էր ամեն կերպ պահպանել Հայ եկեղեցու բազմադարյան ավանդույթները: Նա մեծ ջանքեր էր գործադրում սփյուռքահայության և նվիրապետական աթոռների կապը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ ամրապնդելու համար:

Չնայած նախապատերազմյան տարիներին հոգևորականության հանդեպ խորհրդային վարչակազմի տարած հալածողական քաղաքականությանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ շնորհիվ պետության հանդեպ իր զուսպ, իմաստուն և հանդուրժող վերաբերմունքի, կարողացավ պահպանել իր հիմնական կառույցները, կապը արտասահմանյան թեմերի հետ, որը հետագայում շատ բանով նպաստեց ինչպես հակաֆաշիստական պայքարում իր ավանդը ներդնելու, այնպես էլ Հայ Առաքելական եկեղեցու դիրքերի ամրապնդման գործին:

²⁷ «Ազդարար», 1943–1944 թթ., N 84, էջ 3:

ՎՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՃՆԻ ՉՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ա) ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ, ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՃՆԻ ՀԱՅՐԵՆԱՆՊԱՍՏ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան, խախտելով ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև 1939 թ. օգոստոսի 23-ի՝ տասը տարի ժամանակով կնքված չհարձակման պայմանագիրը, հարձակվեց Խորհրդային Միության վրա: Դրանով իսկ էլ ավելի ընդլայնվեցին երկրորդ համաշխարհային պատերազմի սահմանները, որոնց մեջ ընդգրկվեց Խորհրդային Միությունը: Հիտլերի նպատակն էր «կայծակնային պատերազմով» կարճ ժամանակում ոչնչացնել ԽՍՀՄ-ը, ստրկացնել նրա ժողովուրդներին և ստեղծել գերմանական մեծ կայսրություն:

Ստեղծված նոր իրադրությունը Խորհրդային Միության կառավարող շրջաններին ստիպեց զգալի փոփոխություններ կատարել ներքաղաքական կյանքում, մեղմել մինչ այդ երկրում մոլեգնող բռնաճնշումները: Այդ տարիներին ԽՍՀՄ-ում իշխանությունների վերաբերմունքը եկեղեցու հանդեպ սկսեց փոխվել: Չնայած դեռ շարունակվում էին «Մարտնչող անաստվածների միության» գործունեությունն ու հակակրոնական քարոզչությունը և առկա էր իշխանությունների անհիանդուրժողականությունը, այնուամենայնիվ, պատերազմի սկզբին իրավիճակը փոխվեց: Վերոհիշյալ կազմակերպությունների գործունեությունն արդեն իսկ կրում էր ձևական բնույթ: Առջևում ավելի կարևոր պայքարն էր թշնամու դեմ:

Հայ ժողովուրդն անմիջապես արձագանքեց պատերազմին՝ տալով ավելի քան 600 000 մասնակից, որից 200 000-ը զոհվեցին, 106-ը դար-

ծան Խորհրդային Միության հերոսներ, 26-ը՝ փառքի շքանշանի ասպետներ, 4-ը՝ մարշալներ, 10-ը՝ ծովակալներ և ավելի քան 160-ը՝ գեներալներ, որոնցից 68-ը այդ կոչմանն արժանացան 1940–45 թթ. (92-ը՝ 1946–1997 թթ.)¹:

Հայ եկեղեցին ևս անմասն չմնաց հայրենիքի պաշտպանության սրբազան գործից: Ազգապահպանության խնդիրը դարեր շարունակ իր վրա վերցրած, իր նվիրապետական աթոռներով՝ գլխավորությամբ Սուրբ Էջմիածնի, մի կողմ թողնելով համայնավարական վարչակարգից կրած տառապանքները, վեր դասելով հայ ժողովրդի ընդհանրական շահը և ընծռված հնարավորությունը վերականգնելու իր վաղեմի դերը, Հայոց եկեղեցին հանդես եկավ ի պաշտպանություն Խորհրդային Միության: Հայոց կյանքի մեջ իր բացառիկ կարևորությամբ անժխտելի է Հայ եկեղեցու դերը: Քրիստոնեական ընդհանուր եկեղեցու բազմաթիվ ստորաբաժանումներ այլազգ և այլալեզու ժողովուրդների համար եղել են զուտ եկեղեցի, բառիս զուտ հոգևոր նշանակությամբ. նրանք իրենց ազգապահպանությանն ու մշակույթի զարգացմանը չեն մատուցել ճակատագրական այն անուրանալի ծառայությունները, ինչ որ մատուցել է Հայաստանյայց եկեղեցին իր ժողովրդին, որտեղ որ եղել է այն՝ Հայրենիքում, թե Սփյուռքում:

Անշուշտ, պատահական չէր նաև Հայաստանյայց եկեղեցու վերոհիշյալ դիրքորոշումը, որով հանդես եկավ ֆաշիստական ագրեսիայի դեմ՝ ի պաշտպանություն Խորհրդային Միության՝ թերևս այնտեղ տեսնելով Հայաստանի և հայ ժողովրդի պաշտպանված ապագան:

Սուրբ Էջմիածնի նման դիրքորոշումը, անշուշտ, զուտ պաշտոնական տեսակետ չէր, այն ավելի շուտ գործնական ու ակտիվ աշխատանքային գործընթաց էր, որին հետամուտ եղավ պատերազմի հենց սկզբից:

Երկրում ծայր առած Հայրենական մեծ պատերազմի հրդեհը կարծես թե հարկադրեց Խորհրդային կառավարությանը՝ մեղմելու հակաեկեղեցական քաղաքականությունը և ժողովրդին համախմբելու միասնական պայքարի գաղափարի շուրջ: Կատարված շրջադարձը թեև խորամանկ, բայց և առաջընթաց քայլ էր, որը կենդանության և գործունեության հնարավորություն ընձեռեց Հայ եկեղեցուն:

Հայրենական մեծ պատերազմի հենց սկզբից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ձեռնամուխ եղավ հայրենիքի պաշտպանության գործին: Ամենայն Հայոց Հայրապետության տեղապահ Գևորգ Չորեքյանը, գիտակ-

¹ К.А. Арутюнян, Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941–1945), НАН РА, Ер., 2004, с. 47.

ցելով այդ հանգամանքը, նամակ է ուղարկում բոլոր թեմերին, ի նշան բողոքի, եկեղեցիներում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցել և մաղթանք կատարել Կարմիր բանակի հաղթության համար:

«Ի նշան մեր բողոքի՝ հանդեպ թշնամու դաւադիր եւ չարագործ արարքի եւ ի նշան մեր համակրութեան՝ հանդեպ Սովետական Միութեան վարած խաղաղասեր ու մարդասեր քաղաքականութեան՝ ս. Էջմիածնի Գերագոյն հոգեւոր խորհուրդը որոշել է ամենուրեք Հայ եկեղեցիներում մատուցանել հանդիսաւոր Պատարագ եւ կատարել մաղթանք հետո Կարմիր բանակի յաղթութեան համար»²:

1941 թ. հուլիսի 5-ին Գևորգ Չորեքչյանը կոչով դիմեց ողջ հայությանը՝ սատար կանգնելու վտանգի ենթարկված հայրենիքին՝ այդ պահին եկեղեցու պարտականությունը տեսնելով ակտիվ քաղաքական գործունեության և բարեգործության մեջ: Հայ ժողովրդին ուղղված իր կոչում Սրբազան հայրը նշում է. «Երկու շաբաթ է, որ գերմանական զորաբանակները ներխուժել են մեր Սովետական Միութեան երկիրը՝ ավերելով եւ թալանելով մեր հայրենիքը, մահ բերելով մեր ծնողներին, եղբայրներին, քույրերին ու զավակներին»³:

Ս. Էջմիածնի Ծայրագոյն Հոգեւոր իշխանութիւնը անկարող է անտարբեր ականատես հանդիսանալ. նա՝ ի դէմս Հայ եկեղեցու ու հայ ժողովրդի՝ բողոքում է կատարուած այս անարդարութեան դէմ: Բայց եւ հոգով ուրախ է եւ մխիթարուած, որ այս պատմական վայրկեանին իր հոգեւոր զաւակներն էլ միւս ժողովուրդների հետ ոգեւորութեամբ եւ ազնւութեամբ կատարում են իրենց ժողովրդական, քաղաքացիական ու պետական պարտականութիւնները:

Ս. Էջմիածինը յորդոր է կարողում նաեւ արտասահմանի հայութեան՝ ըստ ամենայնի օժանդակել Հայրենիքի մեծ եւ արդար գործին՝ նպաստելով նորա յաջող լուծմանը:

Հայ եկեղեցին դիմում է նաեւ միւս քրիստոնեայ եկեղեցիներին ու ոչ քրիստոնեայ կրօնապետներին բողոքի ծայն բարձրացնել այս անլուր անարդարութեան դէմ: Առաջադրում ենք բոլոր թեմական իշխանութեանց ամենուրեք Հայ եկեղեցիներում տնօրինել ու Ս. Պատարագ մատուցանել, յետ Պատարագի մաղթանք կատարել քաջամարտիկ Կարմիր բանակի յաղթութեան համար և գրութեանս իմաստով յորդորական խօսք արտասանել»⁴:

² ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4848, թ. 1:

³ «Ազդարար», 1942–1943 թթ., N 3, էջ 8:

⁴ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), էջ 124:

Մայր Աթոռից հնչած կոչերը լայն արծազանք են գտնում ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանյան թեմերում: Եկեղեցու համար կարևորագույն քայլ էր դժվար պահերին իր աջակցությամբ ու զորակցությամբ կրկին սատար կանգնել իր հոտին: Ի վերջո պատեհ առիթ էր միաբանության և միմյանց սատարելու կոչերով եկեղեցուն ընծեռված այդ հնարավորությունն օգտագործել. «Ս. Էջմիածնի Ծայրագոյն Յոգեւոր իշխանութիւնը անկարող է անտարբեր ականատեսը հանդիսանալ, նա ի դէմս Յայ եկեղեցու ու հայ ժողովրդի՝ բողոքում է կատարուած այս անարդարութեան դէմ: Բայց եւ հոգով ուրախ է եւ մխիթարված, որ այս պատմական վայրկեանին իր հոգեւոր զաւակներն էլ միւս ժողովուրդների հետ ոգեւորութեամբ եւ ազնութեամբ կատարում են իրենց ժողովրդական, քաղաքացիական ու պետական պարտականութիւնները»⁵:

Յայ Առաքելական եկեղեցին անշուշտ արդեն ուներ Ռուս ուղղափառ եկեղեցու օրինակը, որը հանդես եկավ վտանգի ենթարկված հայրենիքին պաշտպանելու կոչով՝ անկախ այն կարգավիճակից, որում գտնվում էին թե՛ Ռուս ուղղափառ եկեղեցին և թե՛ Խորհրդային Միության տարածքում գործող բոլոր կրոնական կազմակերպությունները և եկեղեցիները: Ռուս ուղղափառ եկեղեցին իր հազարամյա գոյության ընթացքում իր ժողովրդի հետ կրել է բոլոր դժվարությունները: Ռուսաստանի պատմությունը լի է հոգևորականության և հավատացյալների հայրենասիրության բազմաթիվ օրինակներով:

Յայրենական մեծ պատերազմը Ռուս ուղղափառ եկեղեցու պատմության մեջ նոր փուլ էր: Ամբողջ հետպատերազմյան տարիներին եկեղեցու հայրենասիրական գործունեությունը և հաղթանակի գործում շոշափելի նյութական ներդրումը լռության էին մատնված: Պաշտոնական պատմագրությունն իր հետազոտություններով շրջանցում էր այս հարցը: Սակայն հետագայում հնարավորություն տրվեց խոսելու այդ մասին, իսկ հաղթանակի 50-ամյակին արդեն մի շարք հոդվածներ տպագրվեցին, որոնք էլ ունեցան իրենց շարունակությունը: Ամենայն Ռուսիո պատրիարքի տեղապահ միտրոպոլիտ Սերգիյն Ելույթ ունեցավ 1941 թ. հունիսի 22-ին՝ ռուսական հողի բոլոր սրբերի տոնի օրը: Ելույթն ազդարարեց Ռուս ուղղափառ եկեղեցու հայրենասիրական գործունեության սկիզբը: Իսկ 1941 թ. հունիսի 26-ին կոչով դիմեց ռուս ժողովրդին՝ պաշտպանելու հայրենիքը թշնամուց:

Այս ուղերձների ունեցած արդյունքների մասին պետք է դատել դրանց նկատմամբ ֆաշիստների ունեցած վերաբերմունքից: 1941 թվա-

⁵ Նույն տեղում, էջ 125:

կանի սեպտեմբերին Կիևի տաճարներում, ապա նաև Սիմֆերոպոլում այդ հայրենասիրական ուղերձը կարդալու և տարածելու համար գնդակահարվեցին մի շարք հոգևորականներ: Ռուս ուղղափառ եկեղեցու տեղապահի ուղերձները (պատերազմի ընթացքում դրանք մոտ քսանն էին) ունեին ոչ միայն կոչի և համախմբող բնույթ, դրանց մեջ նկատելի էր եկեղեցու վերաբերմունքը ինչպես դեպի թշնամին, այնպես էլ դեպի պատերազմը: Իր ուղերձներում եկեղեցու հովվապետը հատուկ ուշադրություն էր դարձնում հատկապես ժամանակավորապես բռնազավթված տարածքներին: Միաժամանակ միտրոպոլիտ Սերգիև նպաստում էր պարտիզանական շարժման կազմակերպմանը: Պարտիզաններին ուղղված ուղերձներից մեկում ընդգծվում էր. «Թող ձեր տեղական պարտիզանները լինեն ոչ միայն ձեզ համար օրինակ, այլև լինեն անընդհատ ձեր ուշադրության կենտրոնում: Հիշենք, որ պարտիզանի համար կատարած ծառայությունը ծառայություն է հայրենիքի առաջ և ևս մեկ քայլ է դեպի ձեր ազատագրումը ֆաշիզմից»:

Միտրոպոլիտի ուղերձները խախտում էին պետական այն օրենքը, որը արգելում էր եկեղեցու ցանկացած գործունեություն տաճարի պարիսպներից դուրս և ցանկացած միջամտություն պետության և ազգի գործերին, այնուամենայնիվ, այս ուղերձներն անդադառնում էին պայքարող երկրի ռազմական կյանքի բոլոր հիմնական իրադարձություններին:

Եկեղեցին պատերազմի առաջին իսկ օրերից մասնակցում էր ռազմաճակատին և թիկունքին նյութական աջակցության հատկացմանը: Փաստորեն միտրոպոլիտ Սերգիին հաջողվեց հավատացյալների շրջանում դրամի և իրերի հավաքումը օրինականացնել միայն 1943 թ. հունվարի 5-ին՝ Ստալինին ուղղված հեռագրով:

Բռնազավթված տարածքներում հոգևորականները երբեմն պարտիզանների և տեղական բնակչության միակ կապող օղակն էին: Բազմաթիվ հոգևորականներ արժանացել են «Հայրենական պատերազմի պարտիզանին» մեդալի⁶:

Եվ այս օրինակներին չէր կարող չնպաստել քրիստոնեական մտածելակերպը, որը խորամուխ է լինում իրադարձությունների մեջ քրիստոնյա հայրենասերների միջոցով, որոնք իրենց հոգու ամբողջ ուժով ձգտում էին բերել իրենց մասնակցությունը հայրենիքի պաշտպանության գործին, կատարել իրենց պարտքը եկեղեցու և հայրենիքի հանդեպ: Այսպես 1941 թ. հուլիսի 30-ին Եջմիածնի Գերագույն հոգևոր խոր-

⁶ Василева О. Ю., Русская православная церковь в политике советского государства в 1943—1948, с. 55.

հուրդը ժողովրդին ուղղված իր երկրորդ կոչումն նշում էր. «Հայը բացի խորհրդային Հայաստանից, չունի այլ հայրենիք: Հայը Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կռվան, բացի Հայ եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը Ս. Էջմիածնի հայրապետական Աթոռով: Աշխարհի բոլոր ազգերի կատարյալ համակրանքը և խորհրդային Միության 200 միլիոն ժողովրդի միական և միախորհուրդ գործելակերպը, որով մղում է հայրենի սրբազան պատերազմ իր հայրենիքի, նրա քաղաքական ազատության և տնտեսական ու կուլտուրական նվաճումների պաշտպանության համար, գրավական է խորհրդային Միության վերջնական հաղթության:

Թող ընդմիշտ կենդանի մնա մեր մեջ Վարդանանց պայքարի ու դիմակայության ոգին, որ միայն կարող է հաղթել անօրեն թշնամուն և ապրեցնել մեր ազգը.

Թող Տերը անասան պահե խորհրդային երկիրը՝ հուրախություն խորհրդային Միության ժողովուրդների և ամբողջ քաղաքակիրթ մարդկության»⁷:

Հայ ժողովրդին ուղղված այդ կոչերն ունեին հազարամյակների խորքը գնացող վաղեմություն, իսկ ժողովրդի մեջ արթուն էր այն պայքարի ոգին, որը նրանց ուղարկեց Հայրենական պատերազմի դաշտ՝ ունենալով Հին Հունաստանի սպարտացի մոր պատգամը՝ «Վահանով կամ վահանի վրա», այսինքն՝ կամ մեռի՜ր ռազմի դաշտում, կամ վերադարձի՜ր հաղթանակով: Լծվելով հայրենիքի պաշտպանության սուրբ գործին՝ Ս. Էջմիածնի պաշտոնական ներկայացուցիչ Գևորգ Չորեքչյանը, դիմելով ողջ հայությանը, ապավինում էր Սփյուռքի նվիրապետական աթոռների աջակցությանը:

Մայր Աթոռի կոչերը լայն արձագանք են գտնում, որին հաջորդում է սփյուռքահայության նյութական և բարոյական օժանդակությունը՝ փաստելով այն իրողությունը, որ չնայած խորհրդային տարիներին բռնաճնշումները խուճապ էին առաջացրել և փակուղի տարել սփյուռքահայ հանրային միտքը, բայց հայ հավատացյալը մնացել էր Մայր Աթոռին հավատարիմ և ընծեռված առիթն օգտագործեց՝ վերստին ամրապնդելու իր կապերը Մայր Աթոռի և խորհրդային Հայաստանի հետ:

Գևորգ արքեպ. Չորեքչյանը չբավարարվեց միայն իր հոտին ու հայ եկեղեցիներին կոչեր հղելով. նա միաշնական պայքարի կոչեր ու նամակներ էր ուղարկում քրիստոնեական աշխարհի ներկայացուցիչներին, բարեգործական ընկերություններին, անհատներին ու կազմակեր-

⁷ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 271, ք. 5:

պություններին՝ փայփայելով այն հույսը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավերածությունների ու քրիստոնեական եկեղեցիների միասնական պայքարի միջոցով նրանք կգոտեպնդեն և հույս կներշնչեն պատերազմում մաքառող երկրներին: Գևորգ Չորեքյանը նամակ է ուղղում անգլիկան եկեղեցու հովվապետ Քենթրբերիի արքեպիսկոպոսին. «Ես՝ հնադարեան, բայց փոքրիկ ազգի և եկեղեցու ներկայացուցիչ եմ. ծայնս թոյլ է և հեռուն՝ անլսելի: Կարևոր է մեծ ազգի և եկեղեցու ներկայացուցիչի զօրեղ և հնչիւն ծայն, որ լսելի լինի համայն մարդկութեան: Քրիստոնեական եկեղեցու պարտքն է՝ ուժգնապես հանդես գալ Յիսուսի ավետած մարդասիրութեան իրաւունքի ու խղճի ազատութեան քարոզով:

Մենք հաւատում ենք, որ քրիստոնեական մեծ եկեղեցիների ուժգին քարոզը կը քաջալերէ պայքարող ժողովուրդներին, կըյուսադրէ ընկճուածներին, կարագացնէ արդարութեան յարթանակը, որի համար մշտապես աղօթող է եկեղեցին և որին այնքան կարօտ է այսօր ամբողջ աշխարհը:

Ահա ներկայի պահանջը քրիստոնեական եկեղեցուց, և ահա խնդիրը Ձերդ Բարձր Սրբազնությունից»⁸:

բ) ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՃՆԻ ՕԺԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

Հայրենական մեծ պատերազմին զգալի մասնակցություն ցուցաբերած Ռուս ուղղափառ եկեղեցին ցայտուն օրինակ էր մյուս բոլոր եկեղեցիների համար, որը պատերազմի առաջին իսկ օրվանից ձեռնամուխ եղավ հավատացյալների շրջանում պաշտպանության ֆոնդի միջոցների հանգանակության գործը կազմակերպելու և դրան մասնակից դարձնելու ողջ Ռուսաստանի տարածքում գտնվող եկեղեցիներին: Երկար տարիներ և՛ հայրենական, և՛ արտասահմանյան պատմաբանները, որպես պատերազմի տարիներին Ռուս ուղղափառ եկեղեցու հայրենասիրական գործունեության ցայտուն օրինակ, նշում էին հավատացյալների հավաքած գումարով «Դմիտրի Դոնսկոյ» տանկային շարասյան ստեղծումը: 1942 թ. դեկտեմբերի 30–ին միտրոպոլիտ Սերգիյ դիմեց հոգևորականներին և հավատացյալներին՝ կոչ անելով միջոցներ հավաքել «Դմիտրի Դոնսկոյ» տանկային շարասյուն ստեղծելու նպատակով:

⁸ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), Գիրք 2, էջ 134:

1943 թ. հունվարի 5-ին Ստալինը և միտրոպոլիտ Սերգին հեռագրեր փոխանակեցին: Առաջինն իր շնորհակալությունը հայտնեց հոգևորականությանը և հավատացյալներին՝ երկրի զրահատանկային ուժերի նկատմամբ ուշադրության համար: ԽՍՀՄ պետքանկուսն բացվեց հաշվի համար, որը դարձավ Ռուս ուղղափառ եկեղեցու իրավաբանական կարգավիճակի արտահայտությունը: Ավելի քան 8 միլիոն ռուբլի, ինչպես նաև մեծ քանակությամբ ոսկյա և արծաթյա իրեր հավաքվեցին՝ տանկային շարասյուն կառուցելու համար⁹:

Հայ Առաքելական եկեղեցու պաշտոնական ներկայացուցիչ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքյանը, քաջատեղյակ լինելով Ռուսաստանում կատարվող իրադարձություններին և Ռուս ուղղափառ եկեղեցու վերոհիշյալ դիրքորոշմանը, ժամանակի և պահի մեջ ծիշտ կողմնորոշվելով, հայ եկեղեցու դերը բարձրացնելու նպատակով շտապեց ակտիվ քաղաքական գործունեության և բարեգործության միջոցով եկեղեցին դուրս բերել իրեն պարտադրված վիճակից:

Ապավինելով սփյուռքահայության բարոյական ու նյութական օժանդակությանը՝ նա որոշեց հանգանակությունների միջոցով «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն ստեղծել՝ օժանդակելու Կարմիր բանակին ֆաշիզմի ջախջախման գործում: Այս առաջարկը քննարկվեց եկեղեցուն, որից հետո հայտնվեց իշխանության կենտրոնական մարմիններին:

Ակնհայտ էր նաև Հայ եկեղեցու ղեկավարի հաջորդ քայլը, որով նա նոր մոտեցմամբ ու գիտակցությամբ հեռագիր հղեց «իմաստուն առաջնորդին», որտեղ մասնավորապես նշում էր. «Էջմիածնի կաթողիկոսարանը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու ֆոնդին հատկացնում է ադամանդներով զարդարված մի թանկարժեք պանակե և այլ թանկարժեք իրեր՝ պլատինից և ադամանդներից՝ ավելի քան 850 հազար ռուբլու արժողությամբ, 1000 անգլիական ֆունտ ստեռլինգ և 50 հազար ռուբլի: Խնդրում եմ Ձեր կարգադրությունը ԽՍՀՄ պետքանկուսն հատուկ հաշիվ բացելու մասին: Միաժամանակ հատուկ կոնդակով դիմում եմ աշխարհիս բոլոր հավատացյալ հայերին, որ իրենց խնայողություններով մասնակցեն «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցմանը»¹⁰:

Ստալինը, ով արդեն իսկ դրական էր պատասխանել նմանատիպ մի հեռագրի, չէր կարող չարձագանքել Հայոց կաթողիկոսական տեղապա-

⁹ Василева О.Ю., Русская православная церковь в политике советского государства в 1943—1948, с. 74.

¹⁰ Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1944). Сборник документов и материалов, Е., Изд. АН Арм. ССР, 1975, с. 713.

հի հեռագրին: Թերևս հարկ է նշել, որ նա շատ լավ գիտակցում էր, թե ինչպիսի կարևորություն ուներ եկեղեցու օժանդակությունը, որը կարող էր լայնորեն օգտագործել քարոզչական նպատակներով՝ համաշխարհային քաղաքակրթությանը ներկայանալով իրավական պետության կարգավիճակի բոլոր հատկանիշներով:

Ինչպես հայտնի է, ամբողջ աշխարհում եկեղեցին մեծ դեր ուներ երկրի հասարակական–քաղաքական կյանքում և ակտիվորեն զբաղվում էր բազմապիսի բարեգործական աշխատանքներով: Բացի այդ եկեղեցին տնօրինում էր նյութական մեծ միջոցների, որը պատերազմի տարիներին օգտագործելով ի նպաստ խաղաղության, անգնահատելի ծառայություն էր մատուցում պետությանը: Ուստի, Ստալինը իմանալով, թե արտասահմանում ինչպիսի մեծ դեր է խաղում եկեղեցին, և որքան խոր հավատացյալ են Արևմուտքի խոշոր երկրների ղեկավարները, իր վարած քաղաքականությամբ ցանկացավ ցույց տալ, որ ԽՍՀՄ–ում արդեն վերացված է անհանդուրժողականությունը եկեղեցու և նրա սպասավորների նկատմամբ, որ եկեղեցուն տրվում է լայն հնարավորություն՝ զբաղվելու հասարակական և բարեգործական աշխատանքներով:

1943 թ. հունվարի 26–ին Ստալինի ստորագրությամբ Մոսկվայից էջմիածին ուղարկվեց Գևորգ Չորեքյանի հեռագրի պատասխանը.

«Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքյանին:

— Խնդրում եմ իմ ողջույնը և Կարմիր բանակի շնորհակալությունը հայտնել հավատացյալ հայերին ու էջմիածնի կաթողիկոսարանի հոգևորականությանը, որ միջոցներ է մուծել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու համար: ՍՍՌՄ Պետբանկում հատուկ հաշիվ բացելու համար ցուցում է տրված:

Ի. Ստալին»¹¹:

Այս արձագանքին վաղուց էր սպասում Հայ Առաքելական եկեղեցին, որը մեծ նշանակություն ուներ նրա համար: Դա մի քայլ էր, որով Հայ Առաքելական եկեղեցին դուրս էր գալիս փակուղուց՝ ստանալով պաշտոնական ճանաչում և ակտիվ գործելու իրավունք: Այլևս անհնար էր չճանաչել եկեղեցու իրավունքներն ու նրա ունեցած ազդեցիկ դերը, որը համերաշխության ու միասնականության դրոշի տակ էր հավաքում իր աշխարհասփյուռ զավակներին՝ կոչելով նրանց աջակցել ու մասնակիցը լինել թշնամու դեմ պայքարում:

¹¹ "Коммунист", 26 января 1943, с. 1.

Սփյուռքում հանգամանակություններն ըստ պատշաճի կազմակերպելու նպատակով Պևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը որոշում է պատվիրակ ուղարկել Մերձավոր Արևելք՝ գերաշնորհ Արսեն արքեպ. Ղևտճյանին և Պերագույն հոգևոր խորհրդի գիտական քարտուղար պրոֆ. Աշոտ Աբրահամյանին:

Սակայն պատվիրակների՝ Սփյուռքում գտնվելու հանգամանքը և նրանց գործողությունները տարաբնույթ, հակասական և մասնավորապես բացասական արձագանքներ ունեցան:

Սփյուռքահայ մամուլը բավականակտիվ արձագանքեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատվիրակների այցելությանը Մերձավոր Արևելքի երկրներ:

Աշոտ Աբրահամյանի ներկայությունը տարաբնույթ արձագանքների արժանացավ. քննարկվում էր նրա ուղևորության նպատակը: Շատերին հետաքրքրում էր՝ զուտ կրոնական հարցերով պիտի զբաղվի պատվիրակը՝ ակնարկելով նրա քաղաքական մոտեցումները: Սակայն մի բան շատ հստակ էր ու պարզ, հայ գաղութի ներկայացուցիչներին Աշոտ Աբրահամյանի ուղևորության վերաբերյալ բացահայտորեն հայտարարվեց. «Առաջնորդուելով եկեղեցական կանոններով և նախընթացներով՝ Մայր Աթոռը կուզե ծանոթանալ թեմերու վիճակին, որպեսզի հսկողութիւններ կատարե և ցուցմունքներ տայ»¹²:

Թերևս նշենք, որ իբրև վերին մարմին բնական էր, որ Ս. Էջմիածինը պետք է հետաքրքրվեր թեմերով, առավել ևս, երբ նա արդեն ուներ այդ հնարավորությունները: Մասնավաճորդ որ կար 1941 թ. Ազգային-եկեղեցական ժողովի որոշումը: Թե ինչու էր ընտրվել Աշոտ Աբրահամյանը (որը շատ էր հետաքրքրում գաղութահայությանը), միանշանակ պարզ էր. երկար տարիների լուսությունից հետո Մայր Աթոռը այնպիսի ներկայացուցիչ էր գործուղում իր թեմերը, որը քաջատեղյակ էր երկրի ներսում տեղի ունեցող իրադարձություններին և դիվանագիտական հմտությամբ կկարողանար ներկայացնել ինչպես Ս. Էջմիածնի, այնպես էլ Հայաստանի կառավարության մոտեցումները: Լինելով համալսարանի դասախոս, քաջատեղյակ ազգային մշակույթին, իբրև վաստակավոր պատմաբան-աղբյուրագետ և վերջապես կրոնական լիազոր՝ իբրև «գիտական քարտուղար Պերագույն Հոգևոր խորհրդի», նա բազմաթիվ հանդիպումներ ունեցավ ինչպես գաղութահայության, բարձրաստիճան եկեղեցականների, այնպես էլ դեսպանների, վարչապետների, Մերձավոր Արևելքի երկրների կառավարության ներկայացուցիչների հետ:

¹² Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), Գիրք 2, էջ 170:

Աշոտ Աբրահամյանի հայտարարությունները հիմնականում ունեին հետևյալ ենթատեքստը. «Թե էջմիածինը կը բաղձայ, որ բոլոր հայորդիները համախմբուին իրենց եկեղեցիներուն շուրջ, և եկեղեցիները՝ Մայր Աթոռի շուրջը: Էջմիածինը միանգամայն ազատ է իր կրոնական գործերու ղեկավարման ասպարեզին մեջ: Եվ Հայաստանի կառավարությունը խիստ բարեացական վերաբերում կը ցուցադրե անոր հանդեպ: Խ. Միության մեջ եկեղեցին բաժնված է պետությունեն և ապահովուած կրոնի և խղճի ազատութիւն»:

Երուսաղեմի «Ժառանգաւորաց» վարժարանում, հայ գաղութի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, Աշոտ Աբրահամյանը հայտնել էր. «Թե ինքը կապը կը պահե էջմիածնի և հայ կառավարության միջև, իբրև քարտուղար կազմուած Գերագույն խորհուրդին, պատուիրակը ըսած է թե արտասահմանի հայ ժողովուրդը բոլորուելու է իր եկեղեցիին շուրջ, առանց սակայն քաղաքական բեմ դարձնելու զայն: Քաղաքականութիւնը կը պատկանի միայն կառավարութեան»¹³:

Իսկ «Հուսաբեր»-ի թղթակցին տված իր հարցազրույցում Մայր Աթոռի պատվիրակը նշեց. «...էջմիածնի մեջ շուտով պիտի բացուի ժառանգաւորաց վարժարան մը՝ հոգեւորականներ պատրաստելու համար: Այս նպատակով դուրսեն եկեղեցականներ պիտի հրաւիրուին էջմիածին»¹⁴:

Այն հայտորեն պետք է նշենք, որ Աշոտ Աբրահամյանի ուղևորության կարևորագույն նպատակներից էր նաև «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու ֆոնդի համար միջոցների հավաքումը, որի համար առաջնահերթ խնդիր էր վստահություն ձեռք բերել գաղութահայության շրջանում՝ նրան մղելով հայրենամուկեր նոր առաքելության: Աստիճանաբար հետ մղելով Մայր Աթոռի պատվիրակի նկատմամբ գաղութահայության ունեցած «թերահավատ» վերաբերմունքը՝ Աշոտ Աբրահամյանը մասնակի հանդիպումներով գաղութահայության լայն շրջանակներում ձեռք էր բերում պայմանավորվածություններ՝ հանգանակություններ կազմակերպելու և «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման ֆոնդին մեծաքանակ օգնություն տրամադրելու կապակցությամբ: Արդեն իսկ «Ազդարարի» էջերում Աշոտ Աբրահամյանի վերաբերյալ ասվում էր. «Կը զգաս, որ կը գտնուիս խելացի, իրապես գիտնական դեմքի մը առջև: Հակառակ իր դիրքին ու պաշտոնին փափկութեան, կը խօսի սրտաբացօրեն և առանց սեթևեթի»¹⁵:

¹³ «Ազդարար», 1944 թ., N 135, էջ 3:

¹⁴ «Ազդարար», 1943–1944 թթ., N 91, էջ 5:

¹⁵ Նույն տեղում, էջ 6:

Իսկ «Սիոն»-ի խմբագրականում պատվիրակի մասին արտահայտվեց հետևյալ կարծիքը. «Մայր Աթոռոյ Նուիրակը, պրոֆ. Աշոտ Աբրահամեան, լուրջ և գիտուն անձնաւորութիւն մը, որ գլխաւորաբար այս անհրաժեշտ առաքելութեամբ կը գտնուի մեր մեջ, իր լաւագոյնը ի գործ կը դնէ արդիւնաւորելու համար իր առաքելութիւնը, Ազգին և Եկեղեցիի բարւոյն և օգտին համար: Սփիւռքի հայութեան կը մնայ իր եկեղեցական ու վարչական ներկայացուցիչներով աջակցիլ Էջմիածնի պատվիրակին»¹⁶:

Սփյուռքում տարաբնույթ կարծիքներ և մոտեցումներ էին ձևավորվել նաև Արսեն արքեպ. Ղլտճյանի հանդեպ (խնդիրը Արսեն արքեպ. Ղլտճյանի և ՉԷԿԱ-յի համագործակցության մեջ էր), որի մասին են վկայում մի շարք գրություններ՝ ուղղված Գերագույն հոգևոր խորհրդին վերջինիս կատարած անօրինական գործողությունների մասին, որոնցից մեկում Զովհաննես Ծ. վարդապետը մասնավորապես նշում էր. «Համաձայն Արսեն արքեպիսկոպոսի սպառնալիքներուն և առաջարկութեան, որ հեռանամ վանքէն, վճռեցի հեռանալ ու չը մնալ մինչև այն պարագային, որ նա իր սպառնացած միջոցներով վտարէր զիս: Իր ցանկութեան և հրամանի համաձայն հեռացայ վանքէն, որովհետև իմ ներկայութիւնը արգելք կը հանդիսանար իրեն մութ գործունեութեան, որք կը կատարւի ի վնաս և յանպատուութիւն Մայր Աթոռի»¹⁷:

Չնայած եկեղեցում և նրա շուրջը ծավալվող վերոհիշյալ մի շարք խնդիրներին, շարունակվում էր եկեղեցու ակտիվ գործունեությունը ի նպաստ Կարմիր բանակի: Գևորգ Չորեքչյանի ոգեկոչումներն ու հայ ժողովրդին ուղղված կոչերն իրենց դրական արձագանքներն էին գտնում, որոնց հաջորդում էին տեղեկություններ հանգանակած գուժարների և դրանք «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ֆոնդին փոխանցելու մասին:

Արդեն 1943 թ. հունվարին Ազգընտիր տեղապահը տանկային շարասյան ֆոնդին փոխանցեց 300.000 ռուբլու արժողությամբ թանկարժեք իրեր, անգլիական 1000 ֆունտ ստեռլինգ և 50.000 ռուբլի խորհրդային դրամ:

Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը, ակտիվորեն կազմակերպելով «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար առաջին հանգանակությունները, դիմեց ԽՍՀՄ տանկաշինության ժողկոմին՝ տեղեկացնելով հավաքված դրամազլխի մասին.

¹⁶ «Սիոն», հուլիս-օգոստոս-սեպտեմբեր, 1944 թ., էջ 110:

¹⁷ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938-1955), Գիրք 2, էջ 180:

«Գերագույն խորհրդի որոշման համաձայն էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահին առընթեր սկսվել և շարունակվում է սփյուռքահայերի և տեղի հայության շրջանում միջոցների հավաքումը Սասունցի Դավթի անվան տանկային շարասյան ստեղծման համար: ԽՍՀՄ պետբանկի երևանյան բաժանմունքում մեր ընթացիկ հաշվին առկա են հետևյալ թանկարժեք իրերն ու դրամական միջոցները՝ հիշյալ նպատակին ծառայեցնելու համար:

1. Ոսկյա մեկ պնակ՝ զարդարուն ադամանդներով և երկու ադամանդակուռ խաչ՝ 8.000.000 ռուբլի ընդհանուր արժողությամբ,
2. Հազար (1.000) անգլիական ֆունտ ստեռլինգ,
3. Քառասուն հազար (40.000) դոլար,
4. Հարյուր քսան հազար (120.000) ռեալ,
5. Յոթանասունհինգ հազար (75.000) խորհրդային ռուբլի:

Հայտնելով սույնի մասին, խնդրում են ԽՍՀՄ պետբանկի երևանյան մասնաճյուղից ստանալ նշված իրերն ու գումարները և ներդնել Սասունցի Դավթի անվան տանկային շարասյան պատրաստման գործում:

«Սասունցի Դավթ» տանկային շարասյան պատրաստումն ավարտելուց հետո, զորամասին հանձնելու ժամանակ, կխնդրեի չմերժել և ինձ տեղյակ պահել այդ մասին»¹⁸:

Գևորգ Չորեքչյանի հետագա քայլը եղավ կրկին նոր հեռագիր հղել Ստալինին՝ «Սասունցի Դավթ» տանկային շարասյուն կառուցելու ֆոնդին իր նվիրաբերած թանկարժեք իրերի հանգանակության համար պետական բանկում հաշիվ բացելու թույլտվության մասին:

Հեռագրին անմիջապես արձագանքեց Ստալինը, որտեղ մասնավորապես նշում էր.

«Խնդրում են հաղորդել արտասահմանի հավատացեալ Հայութեան (հայերին), որոնք դրամական միջոցներ են ներմուծել Դավթ Սասունցու անւան տանկային երկրորդ շարասյան կառուցման համար, իմ ողջոյնը և Կարմիր բանակի շնորհակալութիւնը»¹⁹:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահ արքեպիսկոպոս Գ. Չորեքչյանը ևս մեկ նամակ է ուղղում Ի.Վ. Ստալինին՝ շեշտադրում անելով եկեղեցու կարևոր դերակատարման և նրա միջոցով նյութական այն միջոցների ներդրման մասին, որն իր նպաստն է բերում պատերազմի հաղթանակի գործում. «Հարյուր հազարավոր հայեր կռվում են թշնամու դեմ: «Սասունցի Դավթ» տանկային 1-ին շարասյունը արդեն ճակատում

¹⁸ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), Գիրք 2, էջ 188:

¹⁹ Նույն տեղում, էջ 220:

կովում է թշնամու դեմ գեներալ-լեյտենանտ Կորոբկովի հրամանատարությամբ: 2-րդ տանկային շարասյան համար հավաքվել է 40000 ԱՄՆ դոլար և 10000 ֆունտ ստեռլինգ:

Իրանահայերի կողմից հաղորդագրություն է ստացվել, որ տանկային 2-րդ շարասյան ֆոնդին է տրամադրվել 1745000 ռեալ»:

Ստալինն իր պատասխանն ստանալուն նշում է.

«Խնդրում եմ հաղորդել իմ ողջույններն ու շնորհակալություններն արտասահմանի հայ հավատացյալներին՝ «Սասունցի Դավիթ» տանկային 2-րդ շարասյան համար միջոցների ներդրման համար»²⁰:

Մինչև 1944 թ. հունվարը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար ստացվեցին՝ ԱՄՆ-ի հայ գաղթօջախներից՝ 115000 դոլար, Չարավային Ամերիկայի հայկական գաղթօջախներից՝ 5800 դոլար, Երուսաղեմից՝ 2000 ֆունտ ստեռլինգ, Կիպրոսից՝ 3100 ֆունտ ստեռլինգ, Սպահանից՝ 30000 թուման, Թավրիզից՝ 120000 ռեալ, Թեհրանից՝ 1067145 ռեալ: Էջմիածնի Ամենայն Ղայոց կաթողիկոսարանը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ֆոնդին տրամադրեց մի թանկարժեք պանակա՝ ադամանդներով զարդարված, և ուրիշ թանկարժեք իրեր պլատինից ու ադամանդներից: Այդ միջոցներով կառուցված «S-34» մակնիշի 21 տանկ՝ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, 1944 թ. փետրվարի 29-ին հանդիսավոր պայմաններում հանձնվեց տանկային զվարդիական զորամասին, այն մտավ 119 առանձին տանկային գնդի մեջ փոխգնդապետ Վոյնովսկու հրամանատարությամբ»²¹:

Այդ առիթով խորհրդային մամուլը բազմապիսի հոդվածներով արձանագրում է արտասահմանի հայության խանդավառ մասնակցությունը Չայրենական մեծ պատերազմին:

«Պրավդա»-ն այդ առիթով գրում էր.

«Օրերս հանդիսավոր պայմաններում Կարմիր բանակի զրահատանկային և մեքենայացված զորքերի հրամանատարի ներկայացուցիչը N տանկային զվարդիական զորամասին հանձնեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը»²²:

Ամբողջ անձնակազմի բարձրագույն «ուռայի» հնչյունները խլացնում էին զորամասի հրամանատարի երդման խոսքերը: «Սովետական Չայաստան» օրաթերթը գետեղում է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը:

²⁰ «Коммунист», 1944 г., 28. 09, ст 4.

²¹ Սահակյան Մ.Գ., Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում (1941-1945), էջ 94-95:

²² «Правда», 29 февраля, 1944 г.

րասյան նկարը՝ «Արտասահմանյան հայությունը ակտիվորեն օգնում է Կարմիր բանակին» վերնագրով, իսկ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը՝ հողվածի մեջ գրում է.

«Հայրենական պատերազմի առաջին իսկ օրից սովետական մյուս ժողովուրդների հետ միասին ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ ֆաշիզմի դեմ մղվող պայքարում մեկ մարդու պես ոտքի կանգնեց նաև հայ ժողովուրդը»:

«...Սովետական հայրենիքի պաշտպանության համար ոտքի կանգնեցին նաև արտասահմանի հայերը: Նրանք բոլոր միջոցներով օժանդակում են սովետական ժողովրդին ու Կարմիր բանակին արագացնելու ֆաշիզմի ջախջախումը»:

«Աշխարհի բոլոր մասերում բնակվող հայերը բարձր խանդավառությամբ սկսեցին մուծումներ կատարել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու համար»:

«Այդ տանկերը այժմ գտնվում են ռազմաճակատում, Կարմիր բանակի փորձված և հմուտ մարտիկների ձեռքում»:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հզոր տանկերը այժմ, իրենց ծանր թրթուրների տակ ճգնելով գերմանական զավթիչներին, հաղթականորեն շարժվում են դեպի արևմուտք»:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան մուտքը Կարմիր բանակի շարքերը մի նոր լավագույն վկայություն է արտասահմանյան հայերի սիրո և համակրանքի դեպի սովետական հայրենիքը, դա սովետական բոլոր ժողովուրդների հետ միասին թշնամու դեմ նրանց պայքարի ու հաղթանակի հաստատ որոշման ապացույցն է»:

«Հայ ժողովուրդը էլ ավելի կլարի իր ուժերը արագացնելու գերմանական ֆաշիզմի վերջնական ջախջախումը»²³:

Թերթերում ամբողջությամբ տպագրվեց Ազգընտիր տեղապահի կոչը՝ ուղղված «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան մարտիկներին, որտեղ նշվում էր.

«Օրհնում են Կարմիր բանակը և նրա Գերագույն հրամանատարությունը և մաղթում, որ Բարձրյալը առավել ևս զորացնե նրանց՝ հայրենիքը պաշտպանելու և թշնամուն ջախջախելով նրան վտարելու մեր երկրից»:

Ջորամասի հրամանատար փոխգնդապետ Վոյնովսկին զորամասի անունից պատասխան ճառ է արտասանում.

«Ընդունելով «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը՝ զորամասի հրամանատարության, սպաների, սերժանտների, տանկիստների և

²³ «Էջմիածին», փետրվար-մարտ, 1944, էջ 12-13:

ինձ հանձնված զորամասի անունից վստահեցնում եմ Կարմիր բանակի զրահատանկային զորքերի հրամանատարությանը և հայ ժողովրդին, որ մենք անխնա կջախջախենք մեր երկիրը ներխուժող գերմանական հափշտակիչներին»²⁴:

Սիյուռքում լույս տեսնող «Ազդարար» օրաթերթը մեծ ոգևորությամբ է մեկնաբանում «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան մուտքը բանակ.

«Պատկերին երեւակայութիւնն անգամ վերացում կը պատճառէ: Ահա ամբողջ շարան մը հրասայլերու, բոլորն ալ վիթխարի, զրահապատ ևահեղ թնդանոթներով զինեալ: Եւ աննախընթաց պարագայ–բոլորին ալ վրայ «Սասունցի Դավիթ» վերտառութիւնը, այն ալ հայերեն, տառերովը Մեսրոպի, որ հոգեւորական ըլլալէ առաջ զինուորական էր:

Հապա հանձնու՞մը: Իւրաքանչիւր հրասայլը խումբին տուած ատեն, ռուս հրամանատարը կուտայ նաեւ մասնաւոր թուղթ մը, հետեւեալ մակագրութեամբ. «Սասունցի Դավիթ» N ... տանկը կառուցված է հայ հոգեւորականութեան եւ հաւատացեալների միջոցներով»²⁵:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան անձնակազմի մարտիկների՝ Հայրենական պատերազմում կատարած սխրագործությունների մասին տեղեկացվում էր ոչ միայն Ազգընտիր տեղապահին և Գերագույն հոգևոր խորհրդին, այլև իշխանության մարմիններին: Եկեղեցական գործերի խորհուրդը շարունակում էր իր ակտիվ գործունեությունը՝ կարգավորելով եկեղեցու և պետության միջև եղած բարդ հարաբերությունները: Եկեղեցական գործերի խորհրդի նախագահ Ս. Հովհաննիսյանը հեռագրեր ու նամակներ էր ստանում ռազմաճակատից, որտեղ ներկայացված էին հայ մարտիկների ցուցաբերած հայրենասիրության և անձնագոհության բազմաթիվ օրինակներ:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան զորամասի հրամանատար Վոյնովսկին Ս. Ն. Հովհաննիսյանին հեռագրով հաղորդում էր.

«Հայ ժողովրդի առասպելական հերոս Սասունցի Դավիթ անունը կրող տանկերը գտնվում են վստահելի ձեռքերում: Մեր զորամասը 10 օրվա ընթացքում անցել է 200 կմ և ազատագրել բազմաթիվ բնակավայրեր: Ոչնչացրել է 16 տանկ, մոտ 20 ինքնագնաց հրանոթ, 60 գնդացի, 210 ավտոմեքենա՝ զորքերով և բեռներով, ավելի քան 2700 զինվոր ու սպա: Արդեն մոտ 40 մարտիկ և սպա պարզևատրվել են Սովետական Միության շքանշաններով և մեդալներով»²⁶:

²⁴ Նույն տեղում, էջ 8:

²⁵ «Ազդարար», 1943–1944 թթ., N 83, էջ 5:

²⁶ «Էջմիածին», ապրիլ–մայիս, 1944, էջ 13–14:

«Սովետական Հայաստան» օրաթերթն իր` 1944 թ. մարտի 31-ի համարում տպագրել էր հետևյալ նյութը.

«Կարմիր բանակի հաղթանակները հիացնունք առաջացրին արտասահմանում ապրող հայերի մեջ:

Հյուսիսային Ամերիկայի հայոց թեմական պատգամավորական ժողովը հեռագրով խնդրում է մեզ հետևյալը. «Հաղորդել մեր հիացնունքը Ստալինին...»:

Տանկային շարասյունը ռազմաճակատ մեկնելուց հետո Ազգընտիր տեղապահը Ստալինին նամակ ուղարկեց. «Հայ ժողովրդի հազարաւոր զաւակներ միութեան միւս եղբայր ժողովուրդների հետ, ազնւօրէն կատարում են իրենց պարտքը հանդէպ Հայրենիքի, չխնայելով իրենց կեանքը, քաջաբար կռոււմ են բոլոր բոլոր ճակատներում ամօրէն թշնամուղէմ: Արտասահմանի հայութիւնն էլ, հետեւելով իր սիրած էջմիածնի օրինակին և լսելով նորա հրաւերը, բերում է իր սրտաբուխի և առատ նուէրները ազատութեան Ս. Սեղանին, Դաւիթ Սասունցու անուամբ կառուցանելու համար տանկային շարասիւններ:

Տանկային առաջին շարասիւնը, գեներալ-լեյտենանտ Կորոպկովի հաղորդագրութեան համաձայն, արդէն իսկ յաջողութեամբ կռվում է ճակատում: Դաւիթ Սասունցու անուան նուիրուած տանկային երկրորդ շարասեան կառուցման համար էլ անընդհատ գալիս են դրամական նուիրատուութիւններ նախկին հաջողութեամբ, որի գումարն այսօր 40000 ԱՄՆ դոլարից եւ 10000 անգլիական ֆունտ ստեռլինգից անցնում է: Վերջին օրերս Թեհրանի հայութիւնից ստացել ենք հեռագրական հաղորդագրութիւն, որով յայտնում են, թէ յօգուտ տանկային շարասեան կառուցման համար հանգանակուած դրամը հասել է 1745000 ռեալի: Ստացվում են նաեւ գումարներ ճակատում կռուող մարտիկների ընտանիքներին օգնելու նպատակով»²⁷:

Խորհրդային Միությանը և Հայաստանին ցուցաբերվող օգնությունը և օժանդակությունը հաջողությամբ շարունակվում էին, իսկ խորհրդային զորքերը, անցնելով իրենց հաղթական ու ազատագրական փուլին, հաղթական մարտերով առաջ էին ընթանում:

Արտասահմանյան հայության, ազգային խորհուրդների, բարեգործական միությունների, հայրենասեր անհատների, ինչպես նաև համաշխարհային բարեգործական միության օժանդակությամբ շատ շուտով կառուցվեց նաև «Սասունցի Դավիթ» տանկային երկրորդ շարասյունը: Վերջինիս ցուցաբերած օգնության չափերը 1942–1945 թթ. կազմեցին

²⁷ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), Գիրք 2, էջ 220:

232 հազար 621 ԱՄՆ դոլար, և ամբողջ գումարը հանձնվեց Կարմիր բանակի օգնության ընդհանուր ֆոնդին: 1944 թվականի մայիսի վերջին ավարտվեց «Սասունցի Դավիթ» տանկային երկրորդ շարասյան կազմավորումը, որը բաղկացած էր 22 տանկից, և հանձնվեց մերձբալթյան 1-ին ռազմաճակատին (հրամանատար՝ բանակի գեներալ Յովհաննես Բաղդամյան)²⁸:

Կարմիր բանակի զրահատանկային զորքերի հրամանատար մարշալ Ֆեդորենկոն հաղորդեց տեղապահին. «Երկրորդ տանկային շարասյունը հանձնված է գեներալ-մայոր Վովչենկոյի և գեներալ-լեյտենանտ Կիրիչենկոյի զվարդիական տանկային միավորումներին: Տանկերի մի մասն էլ ուղարկված է համալրելու փոխգնդապետ Վոյնովսկու տանկային զորամասը, որտեղ գտնվում են «Սասունցի Դավիթ» առաջին տանկային շարասյան տանկերը»: «Սասունցի Դավիթ» տանկային երկրորդ շարասյունը 1944 թվականին մասնակցեց Մերձբալթիկայի և Բելոռուսիայի համար մղվող մարտերին, ազատագրեց Վիտեբսկը և Պոլոցկը, ջախջախեց թշնամուն Շյաուլյայի մատույցներում: Նույն թվականի հունվիսի 23-ին տանկային շարասյունը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով պարգևատրվեց մարտական Կարմիր դրոշի շքանշանով, իսկ հաջորդ տարին գունդը, որի կազմում էր շարասյունը, արժանացավ զվարդիական կոչման²⁹:

Թերևս նշենք, որ Յայ Առաքելական եկեղեցու ցուցաբերած պատրաստականությունը՝ օգնելու խորհրդային Միությանը ֆաշիզմի դեմ պայքարում, չէր սահմանափակվում «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն ստեղծելով: Պատերազմի հենց սկզբից Յայ եկեղեցու ղեկավար Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը ձեռնամուխ եղավ պատերազմի աղետյալներին դրամական օգնություն կազմակերպելու գործին: Այդ առիթով մի շարք նամակներ ուղարկեց Յարավային Ամերիկայի կաթոլիկոսության պատվիրակ Գարեգին եպիսկոպոսը, որտեղ մշվում էր.

«1942 դեկտեմբերի 30-ին ստացանք Ձեր Ամենապատուութեան նոյն տարւոյ յուլիս 8 թ. նամակը: Մեր խոստումը՝ այլ գումարներ ուղարկելու հայրենիքին եւ պատերազմի մեր աղետյալ եղբայրներու օգնելու նպատակով, մենք կատարեցինք, ինչպես հաղորդած ենք Ձեզ մեր 1942 թ. օգոստոս 18 թ. գրութեամբ: Յանգամակութեան գործը կը շարունակենք նոյն նպատակով: Ունինք արդէն որոշ գումար մը եւս: Կ'սպասենք մեր

²⁸ «Էջմիածին», ապրիլ-մայիս, 1944, էջ 14-15:

²⁹ Ե. Մ. Խալեյան, Յայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին (1941-1944), Ե., 1975, էջ 251:

նամակներու պատասխանին՝ ըստ այնմ կարգադրելու համար առաքման գործը: Ձեր այս վերջին նամակով դրամէ աւելի կո՞ւզէք նիւթ: Պիտի ջանանք ընել այդպէս»³⁰:

1943 թ. հունվարից մինչև 1944 թ. օգոստոսն ընկած ժամանակահատվածում Ամերիկայում գնվել և Կարմիր բանակին է ուղարկվել 87.000 դոլարի արժողությամբ դեղորայք, ինչպես նաև 50.000 դոլար գումար: Օգնություններն ուղարկվել են Ռուսաստանի օգնության կոմիտեի միջոցով: Նվիրատվություններին իրենց մասնակցությունն են բերում նաև Խորհրդային Միությունում բնակվող հայ հավատացյալները³¹:

Ռազմաճակատին օգնություն էին ցույց տալիս հասարակության գրեթե բոլոր խավերը, մի մասը հավաքում էր դրամական միջոցներ, իսկ մյուս մասը՝ անձնուրաց աշխատում գիշեր ու ցերեկ՝ ի նպաստ ռազմաճակատի: «Սովետական Հայաստան» թերթի էջերում պարբերաբար գրվում էր հայ ժողովրդի մատուցած ծառայությունների, ցուցաբերած նյութական ու բարոյական օգնության մասին. «Լենինականի հանգույցի աշխատավորները հավաքել են 1039, ապա 423 ռուբլի Միկոյանի անունով հրասայլի շարժի կազմակերպության համար: Հայկական նախադպրոցական հաստատությունները և մանկատների ղեկավարությունը 90.000 ռուբլի և 100.000 ռուբլու պարտաթղթերով նվիրել է գորավար Բաղդամյանի անունով օդանավեր պատրաստելու համար, մերձբալթյան Լ-ին ռազմաճակատի գործերի համար:

Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանի աշխատավորները 150.000 ռուբլի պարտաթղթերով հավաքել և ուղարկել են նույն նպատակի համար:

Պետպլանի գործարանի աշխատավորները ևս հավաքել են 77.000 ռուբլի միևնույն նպատակին»³²:

Համայն հայության միասնական պայքարը և սփյուռքահայության օգնության նշանակությունը շեշտելու և ոգևորելու համար Ամենայն Հայոց Հայրապետության ազգընտիր տեղապահ Գևորգ արքեպ. Չորեքչյանը 1943 թվականի փետրվարի 2-ին կրկին կոչով դիմեց հավատացյալ հայ ժողովրդին, որտեղ մասնավորապես նշում էր. «Մէկ ու կէս տարի է, որ գերմանական զօրաբանակները ներխուժել են մեր տարածքը՝ միութենական ժողովուրդներին ստրկացնելու եւ նոցա երկիրը իրենց նպատակներին շահագործելու համար:

³⁰ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), Գիրք Զ, էջ 171:

³¹ «Էջմիածին», 1944, N 2–3, էջ 11:

³² ՀԱԱ, ֆ. 454, գ. 1, «Հայաստան» թերթ, էջ 148:

Խորհրդային Միության կրօնական համայնքների բոլոր ներկայացուցիչները եւ քրիստոնեայ, եւ ոչ քրիստոնեայ, իրենց հօտով առատ նուիրաբերութեամբ նպաստում են թիկունքի զօրացման և ճակատի յաջողութեան: Էջմիածինն էլ, տեսնելով հայ ժողովրդի ոգեւորութիւնը եւ անձնուէր աշխատանքն ու պայքարը յանուն Հայրենիքի ազատութեան, իբրեւ իր ժողովրդի կամքի արտայայտութիւն, իրաւունք համարեց առատ նուիրատութեամբ աջակցել Հայրենական պատերազմի յաջողութեան եւ պատասխանատու մեծ դեր է ստանձնել՝ խնդրելով բանալ պետական բանկում յատուկ հաշիւ ի նպաստ պատերազմի»³³:

**գ) ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԴԵՐԸ
ՍՓՅՈՒՌՔԱՅՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ
ԵՎ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԳՈՐԾՈՒՄ**

Ազգընտիր տեղապահը, դիմելով սփյուռքահայությանը, միասնականության ամրապնդման քայլ էր անում՝ շեշտելով Ս. Էջմիածնի դերը, որը այդ տարիներին աստիճանաբար վերականգնվում էր. «Առավել եւս դուք, արտասահմանի հայութիւն, նամանաւանդ ամերիկահայութիւն, որ ազատ եք մնացել ահեղ պատերազմի արհաւիրքներից ու Մայր երկրի ծեր հարազատ եղբայրների ապրումներով եք տառապել ու նորա վարած ազատագրական պատերազմի յաջողութեան համար մինչև այժմ չեք խնայել ծեր նիւթական ու բարոյական աջակցությունը Կարմիր բանակին եւ Մայր երկրի որբացեալ ընտանիքներին, վստահ եմ թե՛ այժմ էլ ծեր առատ նուէրներով կընպաստեք թշնամու շուտափույթ ջախջախմանն ու վտարմանը մեր երկրից»³⁴:

Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը բողոքում էր այս անիրավությունների դէմ, որ հակառակ էր կրօնի և քաղաքակրթության պահանջներին և վիրավորական մարդկային խղճին, կոչ էր անում ակտիվորեն օգնել Խորհրդային Միությանը՝ նշելով. «Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհուրդը ուժգնապէս բողոքում է այս անիրաւութիւնների դէմ, որ հակառակ է կրօնի և քաղաքակրթութեան պահանջների և վիրաւորական՝ մարդկային խղճի: Մենք վստահ ենք թէ բոլոր կրօններն ու քաղա-

³³ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), Գիրք 2, էջ 178–179:

³⁴ «Էջմիածին», 1944, հունվար, էջ 10:

քակիրթ պետութիւնները բողոքի աւելի ուժգին ձայն կը բարձրացնեն այս զագանաբարոյ երեւոյթներին վախճան տալու համար»³⁵:

ԱՄՆ-ի հայ համայնքը, որը պատերազմական գործողութիւններից հեռու էր և տնօրինում էր ավելի մեծ նյութական կարողութիւնների, ոգևորված և մեծ նվիրումով արծագանքեց Ս. Էջմիածնի կոչերին՝ շէտ-ված տեսնելով իր կարևորությունը հայրենիքին օգնելու գործում:

1943 թ. մարտի 7-ին Նյու Յորքում կազմակերպվեց միտինգ, որի ժամանակ ընտրվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման ֆոնդի միջոցներ հանգանակող կոմիտե: Հանգանակող կոմիտեի մեջ ընդգրկվեցին ԱՄՆ-ի հայ մտավորականության ակնառու ներկայացուցիչներ, որոնց թվում էին պրոֆեսորներ Հարությունյանը, Դադուրյանը, Կարիկյանը, բանաստեղծ Սիտալը և ուրիշներ: Կոմիտեի աշխատանքներին ամենագործուն մասնակցություն ունեցավ Ամերիկայի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը: Շուտով կոմիտեն հեռագիր հղեց Ազգընտիր տեղապահին, որում ասվում էր. «Մենք ողջունում ենք Ձեր հայրենասիրական ելույթը Կարմիր բանակին օգնելու գործում: Մենք հանձն ենք առնում ամբողջովին օժանդակել այդ ձեռնարկմանը, մասսայականացնել ու տարածել Ձեր կոչը և ապահովել միջոցների հավաքման հաջողությունը»³⁶:

Միևնույն ժամանակ նշենք, որ բարեգործական նորընտիր կենտրոնական վարչությունը դեռևս ուներ այն մտավախությունը, թե խորհրդային Միության տարածքում արդյո՞ք կկարողանան կազմակերպել բարեգործական առաքելություն, ինչը արգելվել էր 1930-ական թթ. կեսերից: Եվ մինչ կկազմակերպվեին «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հանգանակությունները, վարչության կողմից 1943 թվականի փետրվարի 11-ին հրապարակվում է մի զեկույց, որտեղ նշվում էր. «Վարչութեան կողմէ Պ.Պ. Պալիօզեան և Լեւոն Կ. Կերտան Ուաշինկթըն կ'երթան և խորհրդային դեսպան Լիթվինովի կողմէ ընդունուելով, անոր կը բացատրեն թե բարեգործականը մինչև 1937 թոյլատրեցաւ օգնելու Խ. Հայաստանին և ընդամենը 1.200.000 տոլարի օժանդակութիւն ըրավ զանազան նպատակներու: Միաժամանակ կը խնդրեն որ թոյլատրուի շարունակել օգնութիւնը Հայաստանի պատերազմի աղէտեալներուն և այլ հաստատութեանց՝ Յունվ. 8-ին ալ նամակով մը կը հաղորդեն թե 25.000 տոլար ունին տրամադրելի, Հայաստան ղրկելու համար, փետրվարի 6-ին, Լիթվինով որ խոստացած էր գրել Մոսկուա, հետևյալ նամակը կը

³⁵ «Ազդարար», 1942-1943 թթ., N 3, էջ 8:

³⁶ «Էջմիածին», 1944, N 1, էջ 11:

հաղորդե բարեգործականի. «Ի վիճակի եմ հաղորդելու թե կառավարութիւնս հոծարվում է ընդունելու ձեր 25.000 տոլարը Սովիեթ Ռայաստանի այլ և այլ հաստատութեանց յատկացնելու համար»:

Այս առիթով Բարեգործականի պատասխանատու Վ. Զյուրքճյանը գրում է. «Մոսկուայի կառավարութեան որոշումով Ռայաստանի հետ Բարեգործականի յարաբերութեանց խզումը խոր ցավ կը պատճառէր արտասահմանի ազգային շրջանակներուն, բայց անոնց վերահաստատումը ձեռք բերելու մտքով Փարիզի Կեդր. Վարչութեան թափած ջանքերը ապարդիւն կը մնային: Ուստի՝ Ռայաստանի համար կտակած հիմնադրամներուն մեկ մասը վերջին տարիներս կը յատկացուէր Սուրիոյ և Յունաստանի հայ գաղութներու պետքերուն:

«Չիմա ամեն հայ անշուշտ պիտի երևուի իմանալով Մոսկուայի բարեհաճ հաւանութիւնը, ինչպէս ատեա՛ծ է Պ. Լիթվինով յատուկ պաշտօնագրով: Ազգային երախտագիտութիւն կը պտտինք Մեծ Վարչապետ Սթալինի, որ իր դեսպանին միջնորդութեամբ վերահաստատեց գաղութահայութեան եղբայրական կապը մեր ցանկալի բնաշխարհի հետ»³⁷:

Կոմիտէի ակտիվ աշխատանքները ծավալվեցին ամբողջ ԱՄՆ-ի հայաբնակ վայրերում, որոնք էլ, ոգևորված Գևորգ արքեպ. Չորեքչյանի կոչով, առատորեն հանձնում էին իրենց խնայողությունները տանկային շարասյուն կառուցելու օգտին:

«Ազգարար»-ում տպագրված «Կոչ համայն հայութեան» վերնագրով գրութեան մեջ Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը մասնակիորեն նշում էր. «Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը իր խորին շնորհակալութիւնն է յայտնում արտասահմանի հայութեան, նամանաւանդ ամերիկահայութեան, որ մայր երկրի իր հարազատ եղբայրների ապրումներով է տառապում և նորա վարած ազատագրական պատերազմի յաջողութեան ու թշնամու շուտափույթ ջախջախման համար չի խնայում իր նիւթական ու բարոյական աջակցութիւնը հերոս Կարմիր բանակին...»³⁸:

Չանգանակող կոմիտէի կազմավորումից մեկ ամիս անց ԱՄՆ-ի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսի միջոցով մայր հայրենիք փոխանցվեց հանգանակված 15 հազար 580 դոլար: 1943 թ. ապրիլի 18-ին Ազգընտիր տեղապահը շնորհակալություն հայտնեց ինչպէս Գարեգին սրբազանին, այնպէս էլ Ամերիկայի ողջ հայութեանը: Նա գրում էր. «Ուղարկածդ 15580 դոլարը հանձնեցի հայ կառավարութեանը: Ընդունե-

³⁷ «Ազգարար», 1942-1943 թթ., N 34, էջ 2:

³⁸ Նույն տեղում, էջ 8:

ցեք նորա շնորհակալությունը: Հաղորդեցեք նաև մեր շնորհակալությունը և օրհնությունը ամերիկահայությանը դեղորայքի և այլ նվիրատվությունների համար, նաև նոցա, որոնք մեր հայրենիքի շահերին նվիրված աշխատում են»:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման համար բարեգործական հանգանակություններ կազմակերպվեցին նաև ԱՄՆ-ի արևմուտքում: Կալիֆոռնիայի նահանգի Ֆրեզնո քաղաքում այդ նպատակով ստեղծվել էր գործադիր մարմին: Ֆոնդի նախագահ ընտրվեց Կալիֆոռնիայի թեմի առաջնորդ Մամբրե Եպիսկոպոս Գալֆայանը, որը 1943 թ. մայիսի 4-ին կոչով դիմեց նահանգի հայությանը. «Սիրելի՛ հայրենակիցներ, էջմիածնի հայոց կաթողիկոսական տեղապահ գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը ամերիկահայության ուղղեց հայրենասիրական կոչ մը, որպեսզի հայ ժողովրդի կամավոր նվիրատվությամբ կազմվի «Սասունցի Դավիթ» հրասայլի զորավիճ մը Կարմիր բանակի կողքին: Այժմ ուրախ եմ հայտարարելու, որ Միացյալ Նահանգաց մեջ սկսած է արդեն համազգային հանգանակություն մը: Գալիֆոռնիո հայոց Առաջնորդատանն ալ, անսալով էջմիածնի կաթողիկոսարանի հրահանգներուն, ձեռնարկած է հանգանակություն Գալիֆոռնիո վիճակին մեջ, գործակցությամբ հայ կազմակերպություններու: Եվ ահա այս կոչով կդիմենք Գալիֆոռնիո հայ ժողովրդին, որպեսզի առատաձեռնությամբ մասնակցի այս հայրենասիրական և մարդասիրական շարժումին»:

1943 թ. մայիսի 23-ին Ֆրեզնո քաղաքում հանգանակող կոմիտեի նախաձեռնությամբ անցկացվեց մասսայական միտինգ՝ հօգուտ տանկային շարասյան ստեղծման: Հանգանակված առաջին մուծումը՝ 40 հազար ամերիկյան դոլար, Նյու Յորքից 1943 թվականի հունիսին ուղարկվեց էջմիածին: Շուտով հետևեց երկրորդ՝ 20 հազար և երրորդ՝ 10 հազար 600 դոլարը: Իսկ Ֆրեզնոյից Ս. էջմիածին ուղարկվեց հանգանակված 10 հազար դոլար:

Ստանալով առաջին մուծումները՝ Ազգընտիր տեղապահը 1943 թվականի հունիսի 22-ին հեռագրով շնորհակալություն հայտնեց ինչպես Գարեգին արքեպիսկոպոսին, այնպես էլ բոլոր նրանց, ովքեր իրենց խնայողություններն էին տրամադրել ընդհանուր թշնամու ջախջախման գործին:

Ամերիկահայությունը ոչ միայն դրամական միջոցներ էր հատկացրել, այլև պատերազմին իրենց մասնակցությունն էին բերել ավելի քան 18.5 հազար ամերիկահայ երիտասարդներ³⁹:

³⁹ Հայ ժողովրդի պատմություն, հ. 8-րդ, Երևան, 1970, էջ 159:

Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր տեղապահ Գևորգ Չորեքչյանի՝ Հայրենական պատերազմի առթիվ արտասահմանի հայությանն ուղղված կոչերին շարունակում էր ջերմ արձագանքել Սփյուռքի հայությունը: Տեղապահի կոչերը հայրենասիրական խանդավառություն էին առաջ բերել արևելքում ապրող հայության մեջ, որոնք ակտիվ նվիրաբերություններ էին կատարում Կարմիր բանակի օգտին: Ստորև ներկայացնում ենք Գևորգ Չորեքչյանի ստացած հեռագիրը հայ հասարակությունից.

– Ձեր հայրենասիրական կոչով ոգեշնչված, Թեհրանի հավատացյալ հայերի զանազան խավերը հավաքել և ընթացիկ հաշիվ են մուծել հօգուտ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան մեկ միլիոն վաթսուներորդ հազար հարյուր քառասունհինգ ռեալ: Ամբողջ հոգով ցանկանում ենք, որ մեր այս համեստ լուսնան օժանդակի հերոսական հայրենասիրական ընձեռումին: «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան օգտին միջոցների զանձունը շարունակվում է⁴⁰:

Հայաստանին և Կարմիր բանակին «օգնութեան ձեռնարկ» կազմակերպվեց Պաղեստինի հայ գաղութում, որին իրենց մասնակցությունը բերեցին տեղի հայրենակցական և երիտասարդական կազմակերպությունները: «Հայրենիքի օգնութեան ձեռնարկ» հանգանակությունը հովանավորվում և ղեկավարվում էր եկեղեցու կողմից:

Երուսաղեմի, Եաֆիայի, Հայֆայի, Ամանի և Գազայի հայությունը, համաձայն տրված հրահանգների, կազմակերպեց հանդեսներ, հանգանակիչ մասնախմբեր և հավաքեց շուրջ 2700 ոսկի: Հանգանակած գումարը հանձնելով եկեղեցու դրամարկղ՝ շուտով ավելացրին և ձեռնարկեցին շուտափույթ նպատակին ծառայեցնելու⁴¹:

Բարեգործական հանգանակությանը մասնակցեցին նաև Արգենտինայի հայերը: 1943 թ. հունիսին Բուենոս Այրեսից տեղի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Խաչատրյանը էջմիածին ուղարկեց 5580 ԱՄՆ դոլար՝ տանկային շարասյուն ստեղծելու համար⁴²:

Նույն թվականի հունիսի 7-ին ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատից Ս. Էջմիածնին հայտնում էին. «Խարսևանից, մեր հյուպատոսի հաղորդման համաձայն, Ջուղայի և Հարավի հայերի հոգևոր խորհուրդը հանգանակել և հյուպատոսու գանձարկղն է մուծել 12 հազար 583 ռեալ, երկու ոսկեդրամ և խնդրել է տեղյակ պահել Ձեզ

⁴⁰ «Էջմիածին», 1944, N 1–2, էջ 6:

⁴¹ «Սիոն», 1943, մայիս–հունիս, էջ 91:

⁴² ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3753, թ. 2:

այդ մուծումների մասին»⁴³: Այս գումարը նույնպես նախատեսվում էր տանկային շարասյան համար:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման գործին ակտիվ մասնակցություն բերեցին նաև Հարավային Ամերիկայի, Կիպրոսի, Յորդանանի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Եթովպիայի և այլ երկրների հայ համայնքները:

Կարմիր բանակին և հայ ռազմագերիներին իր նշանակալից աջակցությունը բերեց ռումինահայ թեմական խորհուրդը՝ զլխավորությամբ թեմի առաջնորդ Վազգեն վարդապետ Պալճյանի: Անդրադառնալով ռումինահայ թեմի գործունեությանը՝ կարևորում ենք մեջբերում անել Վազգեն վարդապետ Պալճյանի զեկուցագրից՝ ուղղված Գևորգ Չորեքչյանին: Ի թիվս թեմական կյանքի գործունեությանը վերաբերող հարցերի՝ հոգեշնորհի Հայրը զեկուցագրում ներկայացնում է ռումինահայ թեմի կողմից պատերազմին ցուցաբերվող աջակցության ու ներդրման մասին:

«Պատերազմի սկզբին ի վեր 2-րդ նորաշեն ազգային նախակրթարանը վերածված է հիւանդանոցի (60 անկողինով, ուր կը խնամուխն վիրաւոր զինուորներ): Սույն հիվանդանոցի մէջ խնամուեցան նաև բազմաթիւ խորհրդային ռազմագերիներ (մեր ճիգերով և միջնորդութիւններով կարելի եղաւ այդ արտօնութիւնը բացառապէս ձեռք բերել), իսկ զինադարէն վերջ նոյն հիւանդանոցը խնամուեցան խորհրդային վիրաւոր բանակայիններ: Հիւանդանոցը այժմ ևս կը գործէ, որուն ծախքերը կը հոգացուին մեր հայ գաղութի նուիրատուութիւններով:

Կարծէ այստեղ յիշել նաև պարագան, որ 1942-էն մինչև 1944 թ. օգոստոսի 23-ը թեմական իշխանութեան կողքին գերիների օգնութեան մարմին մը կազմուեցաւ, որ մեր երկրի մէջ գտնուող խորհրդային ռազմագերիներուն եղբայրական օգնութեան գործը կազմակերպեց և ավելի քան 15000 հայ և այլ ազգութեանց պատկանող խորհրդային ռազմագերիներ իր հոգածութեան ներքն առաւ՝ անոնց ուղարկելով հազուստեղէն, կօշիկ, սնունդ և փող: Ասիկա մեր գաղութի հայրենասիրութեան ապացույցներէն մին եղավ և, հակառակ բազում դժուարութեանց և մեծ արգելքներու, ի վերջոյ յաջողուեցաւ այս օգնութեան գործի արտօնութիւնը ձեռք բերել և կազմակերպել»⁴⁴:

Սփյուռքահայությունը շարունակում էր մայր հայրենիքին ու խորհր-

⁴³ Ստեփանյանց Ս., Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, էջ 143:

⁴⁴ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5301, ք. 1-2:

դային բանակին ցուցաբերել թե՛ նյութական և թե՛ բարոյական մեծ օժանդակություն: Հայ ռազմանպաստ միությունից հայտնում էին.

«Հայոց ռազմանպաստ միությունը արդեն իսկ հատկացրել է 47 հազար դոլար Կարմիր բանակին բժշկական օգնության համար, ունենք նաև Հայաստանի ժողովրդի օգնության գործին հատկացրած գումարներ»:

1943 թ. օգոստոսի 28–ին Կրասնոդարի մարզի Արմավիր քաղաքի Ս. Վերափոխման հայկական եկեղեցու հավատացյալներից ստացվեց 3.412 ռուբլու փոխանցում՝ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան օգտին: Նույն թվականի սեպտեմբերի 18–ին ԽՍՀՄ պետբանկի հայկական գրասենյակը հանգանակված միջոցները՝ 63 հազար ամերիկյան դոլար, 120 հազար իրանական ռեալ, 341 հազար 223 ռուբլի ընդհանուր գումարով, փոխանցեց տանկային շարասյան կառուցման ֆոնդին:

1943 թ. հոկտեմբերի 27–ին պաշտպանության ժողկոմատից գեներալ Վ. Բիրյուկովը հեռագրում է կաթողիկոսական տեղապահ Պետրոս Զորեքչյանին. «Հայտնում ենք, որ Ձեր հանգանակած միջոցներով կառուցված է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը: Այն նախատեսված է հանձնել զինվորական մասին այս տարվա վերջին»⁴⁵:

Իսկ արդեն 1943 թ. դեկտեմբերին Ազգընտիր տեղապահը հեռագիր է հղում տանկային զորքերի գեներալ–լեյտենանտ Բիրյուկովին. «Խնդրում եմ ճշգրիտ հայտնել, թե երբ ուղարկեն ներկայացուցչին Սասունցի Դավթի անվան շարասյունը զորամասերին հանձնելիս ներկա գտնվելու համար»⁴⁶:

Նշենք, որ պատերազմի տարիներին ձեռնարկվեց նաև մեկ այլ՝ գեներալ Բաղրամյանի անվան տանկային շարասյուն կառուցելու գործը: Այս նախաձեռնության հեղինակները Թեհրանի հայ համայնքի մի խումբ հայրենասերներ էին, որոնք իրենց հայրենասիրական զգացումներով համակեցին ամբողջ համայնքին և կազմակերպեցին կենտրոնական հանձնաժողով, որին իր մասնակցությունը բերեց Հայ եկեղեցին: Որպեսզի ընդհանրամարտ այս նախաձեռնությունը և ամբողջ սփյուռքահայությունը մասնակցեր, Կենտրոնական հանձնաժողովը եկեղեցու հետ համախորհուրդ հատուկ հայտարարությամբ Թեհրանի մայր եկեղեցուն մատուցված Սուրբ Պատարագի ժամանակ կատարեց գոհաբանական մաղթանք և հայրենասիրական մեծ ոգեշնչման հայտարարություն:

Կենտրոնական հանձնաժողովը, որի ղեկավարն էր Ռոման Եսայանը,

⁴⁵ Նույն տեղում, գ. 1726, թ. 3:

⁴⁶ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), Գիրք 2, էջ 202:

կազմակերպեց հանգանակիչ խմբեր, որոնց տրվեցին հատուկ կանոնավոր մատյաններ և ընկալագրեր: Այս հանգանակությունը առաջինը մասնակցություն բերեց Ռոման Եսայանը 250000 ռեալով, որին հետևեց Թեփրանի ազգային եկեղեցին՝ 100.000 ռեալով: Շուտով Թեփրանի հանգանակող կոմիտեն հավաքեց 2.000.000 ռեալ:

Հանգանակությանն արծազանքեց ոչ միայն հայ, այլև օտար մամուլը, որոնք այդ գործին լայն աջակցություն ցույց տվին:

Կենտրոնական հանձնաժողովը, օգտագործելով այս ոգևորությունը, պաշտոնական գրությամբ կոչ արեց Իրանի բոլոր շրջանների եկեղեցական ու ազգային մարմիններին՝ սկսած Ատրպատականի առաջնորդարանից (առաջնորդ՝ Տեր Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան), Նոր Ջուղայի հոգևորականներին և բոլոր եկեղեցական վարչություններին: Ամեն տեղ սիրով արծազանքեցին կոչին և տեղերում կազմակերպեցին ենթահանձնաժողովներ: Նրանց հանգանակած գումարի չափը մոտավորապես կազմեց 1.000.000 ռեալ⁴⁷:

Կենտրոնական հանձնաժողովը հեռագիր ուղարկեց Նյու Յորքի, Լոնդոնի, Կահիրեի, Բեյրութի, Անթիլիասի, Երուսաղեմի, Բաղդադի, Հնդկաստանի ազգային եկեղեցու առաջնորդներին, ազգային մարմիններին և եկեղեցական վարչություններին՝ խնդրելով ամեն տեղ ստեղծել ու ընտրել զորավար Բաղրամյանի անվան տանկային շարասյան ֆոնդի ենթահանձնաժողովներ՝ հանգանակությունները ղեկավարելու նպատակով: Ահա այս համեստ գործը, շնորհիվ հայ ժողովրդի ու իր ազգային եկեղեցու միասնականության, գնալով մեծացավ ու դարձավ հանազային սրբազան գործ:

Մայր Աթոռի և նվիրապետական աթոռների կողմից հայ ժողովրդին ուղղված կոչերին ակտիվորեն արծազանքելով՝ իրենց նպաստն են բերում պատերազմի հաղթանակին հավատացած հայորդիները: Ամենուր՝ թեմերում ու թեմերից դուրս՝ ժողովրդի շրջանում, նախաձեռնվում ու կազմակերպվում էին տարաբնույթ հանգանակություններ:

Ատրպատականի թեմի առաջնորդ Տ. Ներսես Մելիք-Թանգյանը, արծազանքելով Գևորգ Չորեքչյանի հայրենասիրական կոչերին, «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու համար նախաձեռնեց հանգանակություն: Գերապատիվ սրբազան հայրը իր հավաքած միջոցների մասին հեռագրեց Ի. Վ. Ստալինին և ստացավ նրա շնորհակալական պատասխանը: Սրբազան հոր աջակցությամբ կազմակերպվեց նաև հանգանակություն Գ. Բաղրամյանի անվան տանկային շարասյան հա-

⁴⁷ «Էջմիածին», հուլիս-օգոստոս-սեպտեմբեր, 1944, էջ 17-18:

մար, ինչպես նաև Ատրպատականի թեմում միջոցներ հանգանակվեցին գոհված կարմիրքանակայինների երեխաների, Ստալինգրադի վերակառուցման և այլ հայրենասիրական գործերի համար:

Ազգընտիր տեղապահի կոչերն իրենց արծագանքները գտան նաև Եգիպտոսի թեմում, որտեղ թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Մամբրե եպիսկոպոս Սիրունյանը Կահիրեում և Ալեքսանդրիայում մի քանի անգամ հանգանակություններ կազմակերպեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու ֆոնդի համար⁴⁸:

Այսօրինակ մոտեցումներն ու արծագանքները գրեթե ամենուր էին, որոնք արտացոլվեցին ժամանակի մամուլի էջերում:

Կարմիր բանակի հաղթանակների մասին արտասահմանում ապրող հայերի արծագանքների վերաբերյալ Ամենայն Հայոց Հայրապետության տեղապահ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը ՍՍՍՄ ժողովոսովետի նախագահ Ի.Վ. Ստալինին ուղարկած հեռագրի մեջ գրում էր. «Գերագույն Գլխավոր հրամանատար, Սովետական Միության մարշալ ընկեր Ստալինի առաջնորդությամբ մեր քաջարի Կարմիր բանակը հուժկու հարվածներով ջախջախում և մեր հայրենիքի սրբազան հողից դուրս է վռնդում գերմանական զավթիչներին: Կարմիր բանակի փայլուն հաղթանակները հրծվանք ու հիացմունք են առաջ բերել նաև արտասահմանում ապրող մեր հայ եղբայրների մեջ: Հյուսիսային Ամերիկայի հայոց թեմական պատգամավորական ժողովը հեռագրով խնդրում է մեզ հետևյալը. «Հաղորդել մեր հիացմունքը Ստալինին, Միության իմաստուն առաջնորդին, որի անդուլ և արթուն ղեկավարության շնորհիվ Կարմիր բանակը քաջության հրաշքեր է ցուցաբերում հայրենիքի պաշտպանության գործում:

Կատարելով մեր հոտի կանքը, երջանիկ են կրկին միացնելու և իմ անձնական զգացմունքները հանդեպ Ձեզ տածած անկեղծ նվիրվածության, թանկագին Ի. Վիսարիոնովիչ, և իղծս տեսնելու Ձեր հետագա հաջողությունները թշնամուն մեր երկրից վտարելու և համայն մարդկության համար խաղաղություն և երջանկություն բերելու ջանքերում»⁴⁹:

Թերևս պետք է նշենք, որ եկեղեցու ակտիվ գործունեությունը և մասնակցությունը պատերազմին բավականին հարթել էր այն կոշտ հարաբերությունները, որոնք կային իշխանությունների և եկեղեցու միջև: Եվ պատահական չէր, որ Չերչիլը, խոսելով Խորհրդային Միության մասին, 1943 թ. մայիսի 24–ի իր ճառի մեջ հայտնում էր. «Խոր փոփոխություն-

⁴⁸ «Էջմիածին», հունվար, փետրվար, 1945, էջ 8–10:

⁴⁹ «Սովետական Հայաստան», 1944, 31 Մարտ:

ներ տեղի ունեցած են Խորհրդային Ռուսիո մեջ»՝ իբրև օրինակ մասնավորաբար շեշտելով, որ «Ռուս կրոնական կյանքը հրաշալի վերածնունդ մը կրեց»⁵⁰:

Այսպիսով, Հայ Առաքելական եկեղեցու նախաձեռնությամբ հայ ժողովրդի ցուցաբերած նյութական օժանդակությունը Կարմիր բանակին և պատերազմի աղետյալներին բավական մեծ էր: Ստորև ներկայացնում ենք այդ նպատակների համար 1942–1945 թթ. ընթացքում կատարված հանգանակությունների ցուցակը:

⁵⁰ «Ազդարար», 1943–1944 թթ., N 83, էջ 3:

Տարե- թիվ	Նվիրատուն	Անգլ. ֆունտ ստեռլինգ	Դոլլար	Ռեալ	Ռուբլի	Իրեղեն հատկա- ցումներ	Նպատակը	
1	2	3	4	5	6	7	8	
1942 թ.	Էջմիածնի կաթողիկոսարան	1000	-	-	850 000 50 000	Ադամանդե պանակե	«Սասունցի Դա- վիթ» տանկային շարասյուն կա- ռուցելու ֆոնդին	
1943 թ.	Ազգընտիր տեղապահը	-	-	-	300.000	թանկարժեք իրեր	«Սասունցի Դա- վիթ» տանկային շարասյան ֆոնդին	
	Նյու Յորքից	1000	10000	-	-	-		
	Հարավային Ամերիկա	-	-	-	50.000	-	Պատերազմի աղետյալների	
		-	-	2000	-	-		-
		-	-	1400	-	-		-
		-	-	5800	-	-	-	
Էջմիածնի կաթողիկոսարան	-	-	-	-	80.0000 ընդի.ար ժողու- թյանը	Ոսկյա մեկ պնակ երկու ադամանդա- կուռ խաչ	Հայ մարտիկների ընտանիքների	
Ֆրեզնո	10.000	-	-	-	-	-	«Սասունցի Դա- վիթ» տանկային շարասյան ֆոնդին	
Նյու Յորքից	-	40.000	-	-	-	-		

1	2	3	4	5	6	7	8
1943 թ.	Երուսաղեմի, Եաֆիայի, Հայֆայի, Ամանի և Գազայի հայությունը	-	-	120.000	75.000	2700 ոսկի	
	ԱՄՆ-ի հայ գաղթօջախներից	-	115000	-	-	-	
	Հարավային Ամերիկայի հայկական գաղթօջախներից	-	50.000	5800	-	-	
	Երուսաղեմից	2000	-	-	-	-	
	Կիպրոսից	3100	-	-	-	-	
	Սպահանից	-	-	31000	-	-	
	Թավրիզից	-	-	120000	-	-	
	Թեհրանից	-	-	1067145	-	-	
	Բուենոս Այրեսից	-	5580	-	-	-	
Ջուլայից	12583	30600	-	-	-		

1	2	3	4	5	6	7	8
1943 թ.	Հայոց ռազմանպաստ միություն	-	47000	-	-	-	Կարմիր բանակին բժշկական օգնություն
	Հայ եկեղեցու հավատացյալներ	-	-	-	3412	-	
	Ունան Եսայան	-	-	250000	-	-	
	Թեհրանի ազգային եկեղեցի	-	-	100000	-	-	«Սասունցի Դավիթ» տանկային 2-րդ շարասյան ֆոնդին
	Թեհրանի հանգանակող կոմիտե	-	-	2000000	-	-	
1944 թ.	Էջմիածնի կաթողիկոսարան	10000	40000	-	-	-	«Սասունցի Դավիթ» տանկային 2-րդ շարասյան ֆոնդին
	Իրանահայերի կողմից	-	-	1745000	-	-	
	ԱՄՆ-ի հայ գաղթօջախներից	-	25000	-	-	-	
	Համազգային հանգանակիչ հիանձնաժողով	-	15600	-	-	2350 Լ. ոսկի	

1	2	3	4	5	6	7	8
1943 թ. 1944 թ.	ԱՄՆ	-	87000 50000	-	-	դեղորայք	Կարմիր բանակին
	Լենինականի հանգույցի աշխատավորները	-	-	-	1462	-	Միկոյանի անունով հրասայլի
	Հայկական մի. դպրոց. հաստատությունները և մանկատների ղեկավարությունը	-	-	-	90000 100000	պարտաթղթեր	Բաղրամյանի անունով օդանավեր
1942 թ. 1945 թ.	Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայան	-	-	-	150000	պարտաթղթեր	Կարմիր բանակի օգնության ընդհանուր ֆոնդին
	Պետպլանի գործարան	-	-	-	77000	-	
	Արտասահմանյան հայության բարեգործական միությունների, ազգային խորհուրդների և անհատների կողմից	-	232621	-	-	-	
Ընդամենը՝		39683	841001	5438945	1598412	7400 ոսկի և...	

Այսպիսով, ամփոփելով երկրորդ գլխում լուսաբանված հիմնահարցերի արդյունքները, գալիս ենք այն հետևության, որ Հայրենական մեծ պատերազմի հենց առաջին իսկ օրվանից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ունեցավ հայրենանպաստ դիրքորոշում, որն արտահայտվեց հակաֆաշիստական գործունեությամբ, խորհրդային հայրենիքի պաշտպանության գործին սատար կանգնելու քարոզչությամբ և Կարմիր բանակին նյութական օգնություն կազմակերպելով: Դրանք նպաստեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիրքերի ամրապնդմանը, եկեղեցի-պետություն հարաբերությունների կարգավորմանը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սփյուռքի հայության սերտ հարաբերությունների հաստատմանը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԳ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ–ԵԿԵՂԵՅԻ ՆՈՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՊԱՏԵՐԱՉՄԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԿԱՏԱՊԱՏԱՍԽԱՆ

ա) ԵԿԵՂԵՑՈՒ ԴԻՐՔԵՐՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՔԱՅԼԵՐ

Հայրենական մեծ պատերազմում անձնագոհությամբ աչքի ընկած հայ ժողովուրդը պատերազմի հաջողության մեջ մեծ ներդրում ունեցավ անձնագոհ պայքարի, խնայողությունների ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ: Հատկապես արտասահմանի հայության և Ս. Էջմիածնի նվիրատվությունների շնորհիվ պատրաստվեցին «Սասունցի Դավիթ» երկու և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյունները: Հայրենական մեծ պատերազմի տարիներին ֆաշիզմի ջախջախման գործում անգնահատելի էր Հայ Առաքելական եկեղեցու կատարած դերը՝ եկեղեցու կողմից Կարմիր բանակին նյութական ու դրամական օգնության նշանակությունը: Ստեղծված մոր իրադրության հետևանքով եկեղեցու հանդեպ փոխվեց պետության կոշտ քաղաքականությունը. պատերազմի տարիներին վերացվեցին ոչ միայն հակակրոնական քարոզչությունը և հոգևորականության բռնաճնշումները, այլև եկեղեցուն տրվեցին մի շարք արտոնություններ՝ հնարավորություն տալով նրան ակտիվորեն ներգրավվել հայրենիքի պաշտպանության գործում, վերականգնել կորցրած հեղինակությունը և կրկին իր վրա վերցնել ազգապահպանության խնդիրը:

Ինչպես ամբողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ Հայաստանում սկսված համաժողովրդական շարժման գործընթացի հետևանքով Ռուս ուղղափառ և Հայ Առաքելական եկեղեցիները դրամական հանգանակությունների շնորհիվ կառուցեցին և Կարմիր բանակին հանձնեցին տանկային շարասյուններ, ավիատեկադրիլիաներ և այլն:

Թերևս ժամանակներն արդեն փոխվել էին, սկսած 1940–ական թվականների սկզբներից՝ պետություն–եկեղեցի հարաբերություններում նկատվում էին շփման որոշակի եզրեր: Եկեղեցու պաշտոնական ներկայացուցիչները տարբեր առիթներով դիմում էին իշխանության ներկայացուցիչներին և նույնիսկ Ստալինին՝ հղելով ինչպես եկեղեցուն վերաբերող, այնպես էլ պետական նշանակություն ունեցող տոներին նվիրված բազմապիսի նամակներ և հեռագրեր: Դեռևս 1942 թ. Ամենայն Հայոց Հայրապետության տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը շնորհավորական հեռագիր էր հղել Ստալինին՝ Հոկտեմբերյան հեղափոխության 25–ամյակի կապակցությամբ¹:

Պետություն–եկեղեցի հարաբերությունների կարգավորման և այդ գործընթացում իրենց ակտիվ մասնակցությամբ էին հանդես գալիս արտասահմանում ապրող հայերը: Նրանք ոչ միայն եկեղեցուն, այլև պետությանն առնչվող մի շարք հարցերում արտահայտում էին իրենց մտեցումներն ու դրսևորումները: Խորհրդային մամուլում հաճախ կարելի էր հանդիպել հրապարակումների, որտեղ այս կամ այն առիթով իրենց վերաբերմունքն էին արտահայտում արտասահմանում ապրող հայերը:

Թավրիզի հայերի՝ Սովետական Հայաստանի իշխանություններին ուղղված հրապարակումները դրա վառ դրսևորումներից էին, որտեղ ասվում էր. «1942 թ. նոյեմբեր 29–ին Թավրիզի հայ մշակութային միության նախաձեռնությամբ կազմակերպվում է բազմամարդ հավաք՝ նվիրված Հայաստանում սոցիալիստական կարգերի հաստատման 22–րդ տարեդարձին»²: Հավաքի ընթացքում անդրադարձ է կատարվում հայ ժողովրդի անցած դժվարին ուղուն, սովետական կարգերի հաստատման և այդ տարիների ընթացքում հայ մշակույթի և կրթության զարգացման բնագավառում նրա ունեցած ձեռքբերումներին: Գովաբանում են սովետական իշխանություններին և բանակի հաղթանակները՝ հույս հայտնելով, որ այս պատերազմից անպայման հաղթանակով դուրս կգան:

Ժամանակի թելադրանքը և ընթացիկ պատշաճությունն անշուշտ բացում էին նոր հեռանկար և թույլ չէին տալիս ետ տանել հիշողությունները, այլ մայելով ներկային՝ փորձում էին ընթացքի մեջ դնել կրոնի և եկեղեցու առջև ծառայած մի շարք հարցեր: Սհա և օգտվելով իշխանությունների վերաբերմունքի փոփոխություններից՝ Հայ Առաքելական եկեղեցին, Սուրբ Էջմիածնի գլխավորությամբ, Ազգընտիր տեղապահ

¹ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), Գիրք 2, էջ 167:

² "Коммунист", 1943 г., 6.01.

Գևորգ Չորեքչյանի ջանքերով հնարավորինս ամեն ինչ անում էր՝ վերականգնելու նախկին հեղինակությունը: Հայ հավատավորը շատ ճիշտ էր օգտագործում ստեղծված իրավիճակը, որին հաջորդեցին այնպիսի գործնական քայլեր, որտեղ բացահայտորեն խոսվեց եկեղեցիների վերաբացման, բանտարկված քահանաների ազատ արձակման, Ս. Եջմիածնում մոմ ձուլելու, ինչպես նաև նոր եկեղեցիներ բացելու թույլտվության մասին:

Աստրախանի հայ հավատացյալների համայնքը, դիմելով Ազգընտիր տեղապահ Գևորգ Չորեքչյանին, խնդրեց միջնորդել ազատ արձակելու իրենց հոգևոր հովիվ Սարգիս քահանա Ասլանյանին, որի առիթով Գևորգ արքեպ. Չորեքչյանը դիմեց ԽՍՀՄ Գերագույն դատարանի նախագահին. «Աստրախանի հայ հավատացյալների համայնքը դիմել է ինձ ԽՍՀՄ կառավարությանը միջնորդելու համար, որ աքսորից ազատի այնտեղի հոգևորական՝ 60-ամյա Սարգիս Հովհաննեսի Ասլանյանին, ով հոգևորական է 1905 թ. ի վեր», այնուհետև նշելով նրա անհիմն ձերբակալման փաստը՝ Ազգընտիր տեղապահն ավելացրեց. «Հիմնվելով Աստրախանի դատարանի և ԽՍՀՄ Գերագույն դատարանի հեղինակավոր որոշումների, հավատացյալների համայնքի՝ 38 տարի ազնվորեն ծառայած հոգևոր սպասավոր ունենալու համընդհանուր ցանկության վրա, ինչպես և անծանր ճանաչելով նրան, իբրև լոյալ և խորհրդային իշխանությանը լիովին նվիրված մարդ, սույնով միջնորդում եմ և խնդրում Ձեզ, որ Սարգիս Հովհաննեսի Ասլանյանին աքսորից ազատելով ուղարկեք Աստրախան, կամ ծայրահեղ դեպքում ինձ մոտ՝ իր հոգևոր կոչմանը համապատասխան աշխատանքի տեղավորելու համար»³:

1943 թ. օգոստոսին նա դիմեց ՀԽՍՀ պետանվտանգության ժողովրդական կոմիսար Գ. Մարտիրոսյանին՝ Նորքի Աստվածամոր տաճարի սեղանը Ս. Լուսավորչի եկեղեցի տեղափոխելու և այն վերանվանելու վերաբերյալ: Խնդրագրում մասնավորապես ասված էր. «Երևանի արվարձանում՝ Նորքում, պահպանվել է Աստվածամոր ավերված տաճարի սեղանը, որ վերջին ժամանակներս դարձել է առանձնակի պաշտամունքի առարկան Երևանի շրջակայքի հավատացյալների համար՝ անհանգիստ իրենց մերձավորների ճակատագրով, ովքեր մասնակցում են ռազմական գործողություններին:

Երևանում է գտնվում Ս. Լուսավորչի եկեղեցին, որն այժմ ծառայում է որպես կինոթատրոն: Այս եկեղեցին զուրկ է սեղանից, իսկ կինոթատրոնը քաղաքում առկա մշակութային-լուսավորական խիտ ցանցի

³ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), Գիրք 2, էջ 185–186:

պայմաններում, առանց գործին վնասելու, կարող է տեղափոխվել այլ շինություն:

Նորքի Աստվածամոր տաճարի սեղանը կարելի է տեղափոխել Ս. Լուսավորչի եկեղեցի, որ կարելի է օրհնել և վերանվանել Աստվածամոր տաճար... Խնդրում են Ձեզ կինոթատրոնից ազատել Ս. Լուսավորչի եկեղեցին և թուլատրել Նորքի տաճարի սեղանը տեղափոխել հիշյալ եկեղեցի, որ իմ նախատեսած օծումից և Աստվածածնի տաճար վերանվանվելուց հետո, հուսով եմ, վերջ կտա անցանկալի երևույթներին և հավատացյալների խմբին կտա հոգեկան հավասարակշռություն և անդորր»⁴:

Այդ ժամանակամիջոցում բավականին ակտիվացել էր ուշադրությունը դեպի թեմերը: Ազգընտիր տեղապահը փորձում էր համակարգել և իր անմիջական վերահսկողության տակ առնել թեմերում կատարվող աշխատանքները: Այդ նպատակով Քնորգ արքեպ. Չորեքյանը Սուրեն վարդապետ Թորոսյանին հատուկ հանձնարարականով գործուղում է Յրուսիսային Կովկասի մի շարք քաղաքներ և հանձնարարում զեկուցագիր պատրաստել իր շրջագայության վերաբերյալ: Ըստ Սուրեն վարդապետ Թորոսյանի զեկուցագրի՝ նշվում էր. «Ձերդ սրբազնութեան ներկայ թի սեպ. 22-ին N 169 գրութեան համաձայն մի ամսւայ ընթացքում շրջեցի Յիւսիսային Կովկասի Օրջոնիկիձէ, Գեորգեսկ, Բուդեննի, Պեաստիգորսկ, Կիսլովոդսկ, Էսենտուկի, Ստաւրոպոլ, Կրասնոդար, Արմավիր և Ռոստով-Նոր Նախիջևան քաղաքները, միայն Կիզլեար քաղաքը չհաջողվեց ինձ այցելել: Վերոհիշյալ քաղաքներից միայն Օրջոնիկիձէի, Արմավիրի և Նոր Նախիջևանի եկեղեցիներն էին վառ ու պայծառ մնացել և ապահովուած էին քահանաներով, ժամերգութիւնն ու ծիսակատարութիւններն անխափան կատարոււմ էին, իսկ մնացած քաղաքներն, առանց քահանայի մնալով, եկեղեցիները փակել էին, և հավատացեալ հայ համայնքի կանայք վառ կարօտով օրեցօր սպասոււմ էին իրենց եկեղեցու դռների բացուելուն:

Այցելած բոլոր քաղաքներումն էլ ընտրուած են կամ նշանակուած եկեղեցական խորհրդի նոր անդամներ, որոնց վրայ պարտք է դրուած աշխատել ծխատեր քահանայ հրաւիրել, եկեղեցիներ, կամ աղօթատներ բաց անել և եկեղեցու տնտեսութեան միւթական միջոցները բարեկեցիկ վիճակի մեջ դնել»⁵:

Քաղաքական իրավիճակի թելադրմամբ ակնհայտ դրական փոփոխություններ էին տեղի ունենում երկրի հոգևոր-եկեղեցական կյանքում:

⁴ Նույն տեղում, էջ 187:

⁵ ՉԱԱ, ֆ. 454, ց. 1, գ. 201, ք. 1:

Հանդուրժողականությունը հասել էր այն աստիճանի, որ գերմանացիների բռնազավթման շրջանում իշխանությունների կողմից առաջարկվում էր բացել եկեղեցիներ, ընտրել եկեղեցական խորհրդի անդամներ, ծառայության հրավիրել քահանաների:

Կրասնոդարի երկրամասի շատ քաղաքներում հայ քահանաներ չլինելու պատճառով սովորություն էր դարձել, որ հայ հավատացյալները եկեղեցական ծիսակատարության համար դիմեին ռուս քահանայի: Օրինակ՝ «Գերմանական տիրապետության օրով Ստաւրոպոլի թեմի ռուս առաջնորդը Պետտիգորսկի հայերի առաջարկութեամբ և նրանց ներկայութեամբ նոյն քաղաքի Հայ եկեղեցում քահանայ է ձեռնադրել ախալցխացի, երկար տարիներ թբիլիսիում սարկաւագութիւն անող Կուսիկեանին, որը մի քանի ամիս հովուել է Պետտիգորսկի հայ հաւատացեալ համայնքին և գերմանացիների նահանջի ժամանակ նրանց հետ հեռացել է, իր հետ տանելով եկեղեցական մի շարք իրեր»⁶:

Սուրեն վարդապետ Թորոսյանն իր զեկուցագրում նշում է. «Առանձնապէս հաւատի և եկեղեցասիրութեան բուռն ցանկութեան արտայայտութիւն երևաց տաճկահայ և Կարսի շրջանի հայ գաղթականութեան մէջ, որոնք թախանձագին շարունակ խնդրում էին իրենց համար քահանայ դրկել հովուելու, փակ ու կիսաւեր եկեղեցիները բաց անելու, վերականգնելու, պայծառացնելու»:

Այնուհետև զեկուցագրում մանրամասն նշվում էր վերոհիշյալ քաղաքների գործող ու փակ եկեղեցիների, հոգևոր սպասավորների, տնտեսական կարիքների, ծխական խորհրդի և հայ համայնքի վիճակի մասին:

Առհասարակ խոսելով Հյուսիսային Կովկասի թեմի մասին՝ թերևս անհրաժեշտ ենք համարում նշել, որ այն եղել է աչքի ընկնող և ազգօգուտ թեմերից մեկը: Դեռ վաղ ժամանակներից հովվել է այնտեղ հաստատված հայերի, նրանց հոգևոր-մշակութային կյանքը, նպաստել ծուլման անխուսափելի վտանգի կանխման և ազգապահպանման կարևոր գործին:

Գալով հոգևորականության խնդրին՝ որոնցից շատերը գտնվում էին աքսորավայրերում, Ազգընտիր տեղապահը բազմաթիվ նամակներ ու խնդրագրեր էր ստանում թե՛ համայնքի ներկայացուցիչների և թե՛ նրանց ընտանիքների կողմից՝ միջնորդելու իրենց աքսորավայրերից ազատելու խնդրանքով:

Լեմինական քաղաքի բնակիչ Տեր Ամբակունի կինը, դիմելով Գևորգ Չորեքչյանին, նշում է. «1937 թվի օգոստոսի 7-ին իմ ամուսին տէր Ամ-

⁶ Նոյն տեղում, ք. 4:

բակում Տեր–Գրիգորեանը բանտարկվեց, մի քանի ժամանակից յետոյ աքսորուեց, թե ուր՝ մեզ մինչև օրս անյայտ է: Ուստի դիմելով Ձերդ Գերապատութեանդ, խնդրում եմ, որ միջնորդէք համապատասխան մարմիններին՝ ծերութեան օրերին ազատելու ամուսնուս և յայտնել նրա որտեղ լինելը»⁷:

Իսկ Երևան քաղաքի բնակչուհի, տեր Մեսրոպի կին Ջարուհի Քալանթարյանն իր դիմումում հայտնում էր. «Միակ զավակս հայրենիքի պաշտպանութեան համար գտնուում է բանակում, ինքս էլ անաշխատունակ հիվանդ եմ, Տեր Մեսրոպ Քալանթարեանին բանտարկել են 1937 թի օգոստոսի 21–ին՝ որից մինչև այժմս անգամ լուր չունեմ, թե որտեղ է գտնվում: Ուստի դիմելով Ձերդ Գերապատութեանը, խնդրում եմ Ձեր միջնորդութիւնը՝ գտնելու ամուսնուս և ազատելու նրան Ձեր միջնորդութեամբ»⁸:

Իրավիճակի շտկումը հասել էր նրան, որ արդեն իսկ նոր եկեղեցիներ բացելու թույլտվություն ստանալու նպատակով Գևորգ արքեպ. Չորեքչյանը նամակ էր ուղարկել ժողովմանսպետին կից հայ եկեղեցու խորհրդի նախագահ Ս. Ն. Յովհաննիսյանին:

«Բաքուի և Կրաստանի թեմերը եկեղեցիների քանակի տեսակետով ամնխիթար վիճակի մեջ են եւ չեն բաւարարում ժողովրդի կարիքներին: Թբիլիսիում, ուր 23 գործող եկեղեցի ունէին հայերը, այժմ միայն մի եկեղեցի ունեն, որ ամենեւին չի բաւարարում հաւատացեալների կարիքներին... Նկատի առնել պետք է նաև այն, որ հայերն անցեալում ունէին 23 եկեղեցի եւ այժմ ունեն 1–ը, իսկ վրացիները ունէին 21–ը, իսկ այժմ 17–ը: Այս անհամաչափութեան տպաւորութիւնը թուլացնելու և հայ հաւատացեալների կարիքներին բաւարարելու համար, կըխնդրէի գոնէ երկու եկեղեցի բանալու միջնորդութիւն յարուցել, մեկը Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցին եւ միւսը Յաւաբարի էջմիածնեցոց եկեղեցին: Միայն այս եղանակով կըվերանան անհարթութիւնները:

Բաքուի թեմում, ուր մտնում է նաև Թուրքեստանը, ոչ մի եկեղեցի չկայ. Բաքում եղող միակ քահանան էլ վախճանուել է: Թեմը գոյութիւն կունենա այն ժամանակ, երբ առաջնորդ ունենայ: Որպեսզի առաջնորդ ունենայ՝ պետք է եկեղեցի ունենայ. ուստի կըխնդրէի, որ միջնորդութիւն յարուցուէր Բաքում մի եկեղեցի բանալ եւ յամձնել տեղի հոգևոր իշխանութեան»⁹:

⁷ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), Գիրք 2, էջ 203:

⁸ Նույն տեղում, էջ 204:

⁹ Նույն տեղում, էջ 199:

բ) ԵԿԵՂԵՑԻ — ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Արդեն 1943 թվականին խորհրդային զորքերի տարած պատմական հաղթանակները բեկում առաջացրին Հայրենական մեծ պատերազմի ընթացքի մեջ՝ հօգուտ խորհրդային Միության: Դրանից հետո խորհրդային զորքերը, առաջ շարժվելով, մոտենում էին Եվրոպայի սահմաններին, որտեղ ձևավորված էր խիստ հակախորհրդային կարծիք: Տարբեր երկրների և ժողովուրդների հետ հարաբերությունները շտկելու և իրավական պետության կարգավիճակ հաստատելու համար նոր պայմաններում խորհրդային Միության համար բարոյահոգեբանական հիմք կարող էին դառնալ միայն կրոնն ու նրա ունեցած կարևորագույն դերը: Սակայն դրա համար «սոցիալիստական արժեքները» կրոնի նկատմամբ պետք է դրսևորեին համբերատարություն և հարգանք: Բայց դրանով չէ, որ պետք է սահմանափակվեր եվրոպական ժողովուրդների հանդուրժողականությունը դեպի սոցիալիզմը: Ստալինը, հավատարիմ իր միապետական ձգտումներին, փորձում էր իշխել մարդկանց թե՛ հոգու և թե՛ մտքի վրա:

Եթե Եվրոպայում իշխում էր հզոր Վատիկանը, ապա Ստալինը ցանկանում էր կատարել հակառակը: Նա հնարավոր ամեն ինչ անում էր՝ կոտրելու հռոմեական կաթոլիկության կայսրությունը, իսկ դրա հնարավորությունները կարծես կային:

Եվ ահա Ստալինը որոշեց Ռուս ուղղափառ եկեղեցին դարձնել միջազգային ուղղափառության կենտրոն՝ քաղաքական ուղղվածությամբ. ստեղծելով «Ուղղափառ Վատիկան» միավորման ճանապարհով՝ բոլոր անկախ եկեղեցիները հավաքելով Մոսկվայի պատրիարքության շուրջը և տեղափոխելով համաշխարհային ուղղափառության կենտրոնը կոնունիստական կայսրություն, որը պետք է գտնվեր Ստալինի և Մոլոտովի անձնական հսկողության տակ, իսկ անմիջական կատարողը պետք է լիներ ռուսական ուղղափառ եկեղեցու գործերի հատուկ խորհրդի նախագահ Գ. Կարպովը: Այդ առիթով 1943 թ. սեպտեմբերի 4-ին միտրոպոլիտներ Սերգիև (Ստարոգորոդսկի), Ալեքսին (Սիմոնսկ), Ն. Նիկոլայը (Յարուշկի) հանդիպում ունեցան Ստալինի հետ Կոնցենտի ամառանոցում, որտեղ ներկա էին Մոլոտովը, Բերիան և Կարպովը¹⁰: Հանդիպման ժամանակ թույլ տրվեց անցկացնել պատրիարքի ընտրություն: Նույն թվակա-

¹⁰ Василева О. Ю., Русская православная церковь в политике советского государства в 1943–1948, ст. 106–107.

նի սեպտեմբերի 8–ին եպիսկոպոսական ժողովը պատրիարք ընտրեց Մոսկվայի և Կոլոմնայի միտրոպոլիտ, պատրիարքի տեղապահ Սերգիին: Եպիսկոպոսական ժողովում և եկեղեցում բարձր պաշտոններ զբաղեցրին Ստալինի կողմից ընտրված եպիսկոպոսները, որոնցից էին՝ Կազանից՝ Անդրեյ Կամարովը, Ստավրոպոլից՝ Անտոն Ռամանովսկին, Աստրախանից՝ Ֆիլիպ Ստավիցկին և ուրիշներ: Նրանց ներկայությունը եկեղեցում նպաստելու էր Կրեմլի որոշումների կայացմանը¹¹:

Ցույց տալու համար, որ շտկվել են պետություն–եկեղեցի հարաբերությունները, 1943 թ. նոյեմբերի 28–ին Ստալինի ցուցումով ժողկոմխորիը որոշում ստորագրեց եկեղեցիների վերաբացման կարգի մասին՝ հայտերի ներկայացման դեպքում:

Իրականում դա կատարվեց մասամբ. 1944–45 թթ. ընթացքում 5770 հայտ ներկայացվեց, սակայն բացվեց ընդամենը 414 եկեղեցի: Նման քայլերով Ի. Ստալինը ամեն կերպ եկեղեցին ցանկանում էր պահել իր հսկողության տակ և նրան դարձնել իր կամակատարը: Կրոնին և եկեղեցուն տալով որոշ արտոնություններ՝ նա փորձում էր այդ քայլով շտկել հարաբերությունները եվրոպական երկրների հետ և դրական կարծիք ստեղծել Խորհրդային Միության նկատմամբ:

Նշենք, որ նման նպատակ էր հետապնդում նաև Ի. Ստալինի դիրքորոշումը Հայ Առաքելական եկեղեցու հանդեպ: 1943 թ. հոկտեմբերի 29–ին Ի. Ստալինը որոշում ստորագրեց ՀԽՍՀ ժողկոմխորհին կից Հայ Առաքելական եկեղեցու գործերի խորհուրդ ստեղծելու մասին: 1943 թվականի նոյեմբերին ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոյի որոշմամբ այդ խորհրդի նախագահ նշանակվեց Սուրեն Յովհաննիսյանը¹²:

Փաստորեն, եկեղեցու գործերի խորհուրդ ստեղծելով, իշխանության ներկայացուցիչներն իրենց անմիջական վերահսկողությունն էին հաստատում եկեղեցու նկատմամբ՝ միջնորդի դեր կատարելով եկեղեցու և պետության միջև: Այսուհետև եկեղեցին պարտավորվում էր իր բոլոր ներքին և արտաքին խնդիրներին, կայացնելիք որոշումներին տեղյակ պահել ժողկոմխորհին կից Հայ Առաքելական եկեղեցու գործերի խորհրդին: Իսկ արդեն 1944 թ. հունիսին՝ եկեղեցու գործերի խորհրդի ստեղծման որոշման վավերացումից հետո, ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոյի նիստում հաստատվեց խորհրդի կազմը, որի մեջ մտան Ս. Յովհաննիսյանը, Կ. Ղաֆադարյանը, Հր. Աճառյանը՝ Այսպիսով, կկորոդինացվեին միութենական բոլոր հանրապետություններում ստեղծված եկեղեցու

¹¹ Նույն տեղում, էջ 110:

¹² Նույն տեղում, էջ 199:

գործերի խորհրդային աշխատանքները, և անմիջական կապ կհաստատվեր նրանց հետ:

ԽՍՀՄ կառավարության որոշմամբ 1944 թ. մայիսի 19-ին ժողկոմ-խորհին կից ստեղծվեց կրոնական պաշտամունքների գործերի խորհուրդ, որի նախագահ դարձավ Ի. Պոլյանսկին: Այդ քայլով ԽՍՀՄ բոլոր եկեղեցիներն ու կրոնները միավորվեցին մեկ աշխարհիկ կազմակերպության մեջ: Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդին տրվում էր գերագույն իշխանությանը կից բոլոր կրոններին սպասարկողի դերը: Փաստորեն, այդ քայլով Խորհրդային Միության ղեկավարը վերականգնեց նախկին վերաբերմունքը կրոնի նկատմամբ: Նշենք, որ նախկինում այդ դերը կատարում էր կառավարող սինդոդ¹³:

Իսկ 1944 թ. փետրվարի 4-ին Ավետիք Իսահակյանը Ս. Էջմիածնում հարցազրույցի նպատակով տեսակցություն ունեցավ Ազգընտիր տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի հետ, որտեղ շոշափվեցին պատերազմին և եկեղեցական խնդիրներին վերաբերող հարցեր: Գևորգ Արքազանը հանգամանորեն ներկայացրեց այն արդյունքները, որոնք Մայր Աթոռը ունեցել էր թեմերի և արտասահմանյան երկրներում ապրող հայերի շրջանում:

Եկեղեցի-պետություն հարաբերությունների վերաբերյալ Ավետիք Իսահակյանի այն հարցին, թե տեղապահը ինչպես է արժևորում հայկական ժողկոմսովետին կից հայ լուսավորչական եկեղեցու գործերի խորհրդի ստեղծումը, Արքազանը պատասխանեց. «Եկեղեցու գործերի խորհրդի ստեղծումը երաշխիք է սովետական իշխանութեան բարեացակամութեանը դեպի Էջմիածինը, դեպի եկեղեցին: Այդ խորհրդի ստեղծումը նպաստում է Հայ եկեղեցուն վերաբերող կարելուր հարցերի լուծմանը՝ նրա թե տնտեսական և թե կուլտուրական գործունեութեան ասպարեզում:

Պրա շնորհիւ դիրացաւ և արագացաւ Էջմիածնի օրացույցի լույս ընծայումը: Նախապատրաստուած է Մայր Աթոռի օրգան «Էջմիածին» ամսաթերթի 1944 թ. հրատարակութիւնը: Այդ օրգանը կրելով կրօնական-հայրենասիրական բնույթ, հետապնդում է հետեւեալ նպատակները՝

1. Ամրապնդել Էջմիածնի կապը արտասահմանում ապրող հայերի հետ:
2. Հայ ժողովրդի մէջ բարձրացնել իր ունեցած հայրենասիրական զգացմունքները սովետական հայրենիքի՝ հարազատ Հայաստանի հանդէպ:

¹³ Ստեփանյանց Ս., Հայ առաքելական եկեղեցին Ստալինյան բռնապետության օրոք, էջ 156:

3. Ընթերցողներին ծանօթացնել էջմիածնի կեանքի, գործունեության, Հայկական եկեղեցու պատմության հետ ընդհանրապես, ինչպես նաև հնութեան յիշատակարանների հետ:

Էջմիածնի հոգևոր վարչության էական խնդիրները հանդիսանում են պատրաստել Հայ եկեղեցու բարձր եւ միջին կարգի պաշտօնեաներ: Այդ հնարաւոր է իրականացնել ճեմարան հիմնելով: Այդ հարցով մենք եկեղեցու գործերի խորհրդի միջոցով դիմել ենք կառավարութեանը.

– Անկախ այս բոլորից, իբրև ապացոյց այն ոգետրութեան եւ նշան այն խոր յարգանքի, որ տածուն է հայութիւնը (զաղութահայութիւնը) դեպի ռուս մեծ ժողովուրդը և նրա հանճարեղ առաջնորդ Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինը, մէջ ենք բերում Ամերիկայի հայութեան ներկայացուցչական ժողովի, գումարուած անցյալ հոկտեմբերի 3–ին, հեռագիրը, որ ստացուած է դժբախտաբար շատ ուշ՝ սույն փետրուարի 2–ին. «Սրանով արտայայտում ենք մեր որդիական սէրը եւ երախտագիտութիւնը համայն հայութեան Մայր Աթոռին: Համաժողովը խնդրում է, որպէսզի հաճիք սիրայոժար հաղորդելու անարժաններիս գնահատանքը Ստալինին՝ Սովետական Միութեան իմաստուն լիդերին՝ որի եռանդուն ղեկավարութեան շնորհիւ Կարմիր բանակը կատարում է հրաշքներ հայրենիքի պաշտպանութեան գործում: Նաեւ հաղորդել Սովետական Հայաստանի նախագահին մեր նուիրվածութիւնը եւ եղբայրական զգացմունքները: Մենք պատրաստ ենք ամէն աջակցութիւն ցույց տալու մեր նոր Հայաստանի անվտանգութիւնը ապահովելու համար»¹⁴:

Թերևս ակնհայտ էր այն փաստը, որ վերջապես բացվում էին «երկաթե վարագույրներ»–ը, առերևույթ գնահատվում եկեղեցու հնարավորությունները և նշանակությունը՝ մի նոր ժամանակաշրջան բացելով նրա առջև: Իշխանությունների վերաբերմունքի փոփոխությունն ամրապնդեց եկեղեցու դերը, և հնարավորություն տրվեց ապրելու պատմական մի նոր շրջադարձային փուլ: Այդ փոփոխությունները հատկապես զգալի էին Հայ եկեղեցու հավատացյալների համար, որոնք առիթից օգտվելով դիմում էին կաթողիկոսական տեղապահ Գևորգ Զորեքչյանին՝ եկեղեցիները վերաբացելու, եկեղեցու բռնագրաված գույքը վերադարձնելու և հոգևորականներին աջտորավայրերից ազատելու խնդրանքներով: Ահա այդ առիթն էր, որից օգտվելով Հայ Առաքելական եկեղեցին արդյունք ունեցավ: Աշտարակի շրջանի Տեղեր գյուղի հավատացյալները 1943 թ. վերջին դիմեցին Ազգընտիր տեղապահին. «Սույն դիմումով խնդրում ենք

¹⁴ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), Երևան, 1999, Գիրք 2, էջ 207–208:

արքեպիսկոպոսի Ձեր միջնորդությամբ բաց անք մեր եկեղեցին»։ Այս դիմումի տակ ստորագրել էր 66 մարդ, որը այդ ժամանակների համար բավական համարձակ քայլ էր։ Նմանատիպ խնդրանքով արքեպիսկոպոս Չորեքչյանին դիմեցին նաև ապարանցիները։ Ապարանի շրջանի Ապարան գյուղի Ս. Նշան եկեղեցու ժխատեր Յովհաննես քահանա Յովհաննիսյանը գրում էր. «Սրբազան հայր, որ ամեն տեղ հայոց եկեղեցիները սովետական իշխանության թույլտվությամբ և Ձեր միջնորդությամբ արդեն բացված են և կատարում են հոգևոր ծիսակատարություններ, իսկ մեզանում դեռ այդպիսի կարգադրություն չի եղել մինչև օրս և ներկայի մեր եկեղեցին, որը կառուցվել է սրանից 1500 տարի առաջ, գտնվում է կոխտզի տրամադրության ներքո և ծառայում է որպես պահեստ»։

Այս դիմումից անմիջապես հետո Ազգընտիր տեղապահի հասցեով իրենց խընդրանքն ուղարկեցին ապարանցի հիսուն հավատացյալներ. «Սրբազան հայր, բոլոր եկեղեցիները բացված են մեր սուրբ օրենքով։ Բայց մինչև այժմ Բաշ Ապարանի Սուրբ Նշան եկեղեցին գոց է»։ Նույն թվականի դեկտեմբերին Թալինի շրջանի Մաստարա գյուղի հավատացյալները հեռագիր ուղարկեցին էջմիածին՝ նույնպես պահանջելով բացել իրենց ծխական եկեղեցին¹⁵։

Ամենայն Հայոց Հայրապետության տեղապահ Գևորգ Չորեքչյանը հետամուտ էր իրեն ուղղված բոլոր գրություններին և դիմումներին։ Ուստի պատահական չէ, որ 1943 թ. հանձնարարականով Սուրեն վրդ. Թորոսյանին գործուղում է Հյուսիսային Կովկասի թեմի մի շարք քաղաքներ՝ տեղում ծանոթանալու եկեղեցուն առնչվող խնդիրներին, ցուցակագրելու գործող և փակ եկեղեցիների թիվը, նկարագրելու նրանց վիճակն ու նորոգության կարիքները և հաշվարկելու անհրաժեշտ մոտավոր ծախսերը։ Գործող եկեղեցիներում պետք էր կազմակերպել եկեղեցական խորհուրդներ, այնտեղ պահել դրամական մուտքերի և ելքերի մատյաններ, ցուցակագրել գործող եկեղեցիների և ընդհանրապես հիշատակված թեմի բոլոր քահանաներին և այլն։

Թերևս, անդրադարձ կատարելով թեմում տիրող իրավիճակին Սուրեն վրդ. Թորոսյանի գեկույցին՝ ակնհայտ է դառնում, որ Հյուսիսային Կովկասի թեմը պատերազմի և տնտեսական քայքայման պատճառով կանգնել էր լուրջ վտանգների առջև։ Հայ բնակչության շրջանում անխուսափելի էր դարձել ծուլման վտանգը, նկատելի էր նրանց խորթացումը ազգային արժեքներից, չկային անհրաժեշտ թվով հոգևոր սպա-

¹⁵ Ստեփանյանց Ս., Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, էջ 144–145։

սավորներ: Սակայն այստեղ ևս նկատելի էր տեղական իշխանությունների դրական ու բարյացակամ վերաբերմունքը հոգևորականության նկատմամբ:

Ժամանակների փոփոխություններն ակնհայտորեն բերում էին այն թելադրանքները, որոնք ունեին հաստատուն արժեքներ, որոնք մաս էին կազմում ազգային մտածելակերպի ու գիտակցության: Սակայն կառավարության և եկեղեցու նկատելի մերձեցումն այնքան սերտ չէր, որ Ազգընտիր տեղապահը կարողանար եկեղեցիներ բացել, թեև նա արդեն իսկ համարձակ քայլեր էր կատարում՝ դիմելով իշխանություններին:

Գևորգ արքեպ. Չորեքչյանը հնարավոր բոլոր միջոցներով սերտացնում էր իր կապերը իշխանությունների հետ՝ կազմելով ապագայի ծրագրեր, Մայր Աթոռի հեղինակության վերականգնման և համայն հայության հոգևոր կենտրոնի կարևորությունը շեշտելու ուղղությամբ: Սրբազան հայրը պարբերաբար երկրի ղեկավար Ստալինին էր ուղղում տարաբնույթ բովանդակությամբ նամակներ և հեռագրեր՝ մեկ անգամ ևս շեշտելով Ս. Էջմիածնի կարևոր դերը աշխարհասփյուռ հայության և արտասահմանյան թեմերի աշխատանքները համակարգելու գործում: Սրբազան հայրը Ստալինին ուղղված իր հեռագրերից մեկում նրան է հաղորդում ամերիկահայության թեմական պատգամավորական ժողովի բարենադասքները՝ նշելով. «Ամերիկահայութեան հերթական տարեկան թեմական պատգամաւորական ժողովը, որ գումարուել է Բոստոնում տարւոյս յունուարի 25–28–ին, հեռագրել է մեզ՝ խնդրելով արտայայտել Ձեզ իր հիացումը Յերոս Կարմիր բանակի Ձեր իմաստուն ևս հանճարեղ ղեկավարութեան առթիւ, որի շնորհիւ նա յաղթանակ–յաղթանակի ետևից տանում է մարդկութեան վայրագ թշնամու դէմ:

Սիրայօժար կատարելով Մեր հօտի խնդիրը՝ ջերմագինս մաղթում ենք Ամենաբարձրեալին պարգեւել Ձեզ, թանկագին Իօսիֆ Վիսարիոնովիչ, արեւշատութիւն՝ յանուն տանջուած մարդկութեան բարօրութեան եւ երջանկութեան»¹⁶:

Խորհրդային իրավակարգը, դրսևորելով հաշտ կեցվածք, հնարավորություն տվեց Հայ Առաքելական եկեղեցուն վերականգնելու իր շեշտված նկարագիրը, ծավալելով հասարակական բարեգործական գործունեություն՝ հայ իրականության մեջ կարևոր դարձնելով Մայր Աթոռ Ս.Էջմիածնի դերը:

¹⁶ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 730, ք. 3:

գ) ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ — ՍՓՅՈՒՌԸ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այդ տարիներին դժբախտ գուգադիպությամբ շարունակում էին թափուր մնալ Կիլիկիո Չայրապետական, Պոլսո և Երուսաղեմի պատրիարքական աթոռները: Նման կացությունը, այն էլ պատերազմի ժամանակ, հազվադեպ երևույթ էր հայոց պատմության մեջ, մի ժամանակաշրջան, երբ տարագիր հայությունն ամենից շատ կարիք ուներ հաստատուն և ազգային կազմակերպությունների օժանդակության: Սակայն խաղաղության ու վերակազմության գնացող աշխարհը հայոց եկեղեցուն հնարավորություն տվեց նոր քայլեր կատարել, որը հաջորդաբար թափուր աթոռներն արժանացրեց ազգի նվիրյալներին, որոնք աշխարհի բովանդակ հայությանն առաջնորդելու էին նոր ուղիով:

4. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքական աթոռները շարունակում էին ղեկավարվել պատրիարքական տեղապահների կողմից, որոնք չնայած ավելի միաթարական վիճակում էին (ուներին բավականաչափ եկեղեցիներ և քահանայական կազմ, դպրոցներ, բարեգործական և մշակութային հաստատություններ), քան Մայր Աթոռի միաբանական կազմը և Խորհրդային Սիության կազմում գտնվող եկեղեցիները, այնուամենայնիվ այնտեղ ևս առկա էին մի շարք խնդիրներ, որոնք սպասում էին իրենց լուծմանը: Պատրիարքական աթոռներից Ս. Էջմիածին ուղարկված տեղեկագրերից ևս ակնհայտ էր դառնում վերը նշված խնդիրների առկայությունը, որոնք մեջ մասնավորապես նշվում էր. «Մեր վիճակը ներկայիս գոհացուցիչ է, աւելի ուղիղ պիտի ըլլայ ժողովրդական բացատրութեամբ ըսել մեր իւղին մէջ կը տապակուիմք: Մօտ ապագային սակայն պիտի գտնուիմք մեծ պահանջներու մէջ: Անհրաժեշտ են մեզ եկեղեցիներ և դպրոցներ, մեր թեմի զանազան կեդրոններու մեջ...»¹⁷:

Երեք տարի թափուր մնացած Կիլիկիո կաթողիկոսական աթոռը 1944 թ. զբաղեցրեց ամենաարժանավորը՝ Գարեգին արքեպիսկոպոս Յովսէփյանը:

Արժանախիշատակ հոգևորականը չէր կարող անտարբեր մնալ ազգի ճակատագրի համդեպ: Նրա կյանքը ԽՍՀՄ-ում 1920–30-ական թվականներին և ապա ԱՄՆ-ի թեմի առաջնորդի պաշտոնում բավականին անհանգիստ էր: Նա ամենուր սիրո ու եղբայրության առաքյալ էր և անբասիր ծառայությամբ բարձրացավ կաթողիկոսական աթոռին¹⁸:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3885, ք. 17–18:

¹⁸ «Ազգարար», 1942–1943 թթ., N 30, էջ 5:

Ամերիկահայ գաղութում լույս տեսնող ժամանակի պաշտոնաթերթ «Չայաստանեայց եկեղեցի»-ն, հանդես գալով մի քանի հոդվածաշարով, անդրադառնում էր գաղութի ազգային-եկեղեցական կյանքին և թեմի առաջնորդ Գարեգին Չովսեփյանի գործունեությանը՝ մատնանշելով. «Նախախնամական մեծ շնորհ մըն է, որ Չայ եկեղեցիի ամենեն արժանավոր եւ հեղինակաւոր դեմքերէն մեկը ունինք ներկայիս իբրեւ մեր Առաջնորդը: Մեր ներկայ Առաջնորդը թէ կարողութեամբ եւ թէ նուիրումով օժտեալ դեմք մըն է, իրական Առաջնորդ մը...»¹⁹:

Յոթ տարի լինելով ԱՄՆ-ի թեմի առաջնորդի պաշտոնում՝ նա համակարգող դեր ունեցավ և նպաստեց ազգապահպանման գործընթացին, ինչը շատ կարևոր էր հայության այդ հատվածի համար: Այդ տարիներին ամերիկահայ գաղութը միջոցներ էր փնտրում՝ Չայաստանյայց եկեղեցին արժանի և արդյունավետ դիրքի վրա դնելու:

Որոշում ընդունվեց ստեղծել Ազգային-եկեղեցական հիմնադրամ, որը պետք է աջակցեր եկեղեցականներ պատրաստելուն, որոնց թիվը խիստ սակավ էր, 80.000 մարդու համար կար ընդամենը 20 եկեղեցական: Հիմնադրամը պետք է նաև համագաղութային մշակութային ծրագրեր մշակեր և ծառայեցներ միջոցները համայնքային կյանքի, եկեղեցիների, դպրոցների և ընդհանուր հայ մշակույթի զորացմանը և առաջադիմությանը: Այդ տարիներին Ամերիկայում Չայաստանի հանգանակության շուրջ առաջացել էին վեճեր, մամուլում հաճախակի էին դարձել «Չայկական Յանձնախմբի» և «Բարեգործականի» կատարած աշխատանքների մասին անվստահություն արտահայտող հոդվածները: «Լրաբեր» և «Պայքար» պարբերականների էջերում հայտնված հոդվածներն անհիմն ու անհեռատես հայտարարություններով փորձում էին երկփեղկել «Չայկական Յանձնախմբի» և «Բարեգործականի» ձեռք բերած համաձայնությունները, որոնք վերաբերում էին Կարմիր բանակին և պատերազմի աղետյալներին օգնություն ցույց տալուն: Այնինչ վերոհիշյալ կազմակերպությունների աշխատանքները, միասնական գործելու բոլոր հնարավորությունները Գարեգին Սրբազանի ջանքերով և ղեկավարությամբ (այդ ժամանակ մեկ տարով Բարեգործականը հրաժարվեց առանձին հանգանակություն կազմակերպել, և ամբողջ գործի ղեկավարությունը հանձն առավ Առաջնորդարանը) ի մի էին բերվում՝ նպաստելու օգնությունը ճիշտ կազմակերպելու գործին:

Գարեգին արքեպիսկոպոս Չովսեփյանը այդ արատավոր երևույթը

¹⁹ «Էջմիածին», 1944, N 2-3, էջ 23:

կանխելու նպատակով ամերիկահայ մամուլում հրապարակեց «Լուսաբանութիւն Չայկական յանձնախմբի մասին» հոդվածը, որտեղ մասնավորապես նշում էր. «Չայկական յանձնախմբի հետ կապուած ամենագլխաւոր գաղափարը միասնականութիւնն է: Չայ ժողովրդին ի մի բերել ազգի գլխին եկած և գալիք աղետների հանդեպ, օգնելով Ռուսական բանակին, որի մեջն են եւ մեր ժողովրդի զավակները, եւ որի յաղթութիւնը եւ մեր հայրենիքի, Խ. Չայաստանի յաղթութիւնն է և նորա գոյութեան երաշխիքը, բայց և օգնութեան հասնիլ եւ պատերազմից աղէտեալ մեր եղբայրներին Սփյուռքում կամ Չայաստանի մեջ: Ահա երկու նուիրական նպատակներ, որոնք ըստ էութեան եւս կապ ունին իրարու հետ: Մեր ամբողջ ջանքն ու աշխատանքն է եղել խմբուիլ այս գաղափարի շուրջը: Մեր համոզումն է եղել և այժմ էլ այն համոզումն ունինք, թէ անհնարին չէր նույնիսկ հին պայմաններում, բայց ավելի սերտ և համերաշխ գործակցութեամբ այս տարի եւս արդիւնարար կը դարձնինք մեր աշխատանքը, բարի կամեցողութիւնը հնար կը գտնէ հարթելու դժուարութիւնները յօգուտ մեծ և նուիրական գործի, ինչպէս եւ գտաւ այլ պայմանների համար»²⁰:

Բնականաբար Գարեգին Սրբազանի համար դժվար էր կիսատ թողնել բազում այլ ծրագրեր և անցնել հովվելու՝ ավելի պարտավորեցնող մի նոր առաքելության, սակայն, ինչպէս ինքն էր նշում. «Իրապես զարմացայ ընտրութեանս հեռագիրը ստանալով, քանի որ լուր չունէի նույնիսկ կաթողիկոսութեան թեկնածութեանս մասին, բայց քանի որ միաձայնութեամբ և համերաշխութեամբ իմ ժողովուրդս զիս կանչեց այդ վեհ և սուրբ պաշտոնին, հաստատորեն հաւատացած եմ, որ իմ հոտս պիտի բերէ իր ամբողջ աջակցութիւնը, որուն պետք ունիմ, աշխատելու եկեղեցւոյ անուան, Աստուծոյ փառքին և ժողովուրդիս երջանկութեան համար: Երբ Ամենակարողն մեր կողմն է, երբեք նեղութիւն և դժուարութիւն չիպիտի ունենանք»²¹:

Թերևս հիշատակելի է Գարեգին Չոլսեփյանի այն պատգամը, որով հանդես եկավ 1944 թ. ապրիլի 26–ին Նյու Յորքում տեղի ունեցած Նորին Սրբազնութեան հիսունամյա հոբելյանին նվիրված տոնակատարության ժամանակ, որտեղ հանգամանորեն խոսեց իր նպատակների մասին. «Ինչո՞ւ ենք յանձն առել Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ծանր և դժուարին պաշտօնն ու աթոռը: Մենք չենք գնում այնտեղ մեր ծերութեան օրերը հանգիստ վայելելու, մենք գնում ենք այնտեղ մի նոր կեանք սկսե-

²⁰ «Ազդարար», 1943–1944 թթ., N 34, էջ 2:

²¹ Նույն տեղում, N 33, էջ 1:

լու, ավելի ճիշտ՝ մեր վերջին նախորդների՝ Տ. Սահակ, Գուրգեն և Պետրոս կաթողիկոսների օրով սկսած կեանքը բարգաւաճելու: Մեր նպատակն է Անթիլիասի կաթողիկոսարանը կրօնական կենդրոնի հետ, եթե կամենայ Աստուած, դարձնել և մշակույթի կեդրոն լայն հասկացողութեամբ: Մենք կըկամենայինք մեր կաթողիկոսարանը հոգելոր մի նոր շարժման կեդրոն դարձնել Սփիւռքի հայութեան համար»²²:

Գարեգին Դովսեփյանի կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ բազմաթիվ հեռագրեր ու շնորհավորագրեր ստացվեցին սփյուռքահայ գաղութներից: Թերևս նրանցից հիշատակենք էջմիածնի կաթողիկոսական տեղապահ Գևորգ Չորեքչյանի հեռագիրը. «Կ'ողջունենք ընտրութիւնը և կը բաղձանք յաջողութիւն»: Միննույն ժամանակ Սրբազան հայրը իր խոսքում հիշատակում էր, որ արդեն մեկ ու կես տարի է՝ ընտրություն կատարվել է, և ակնկալում է նորընտիր կաթողիկոսի շուտափույթ մեկնումը Անթիլիաս: Նշենք, որ Գարեգին Դովսեփյանի մեկնումը ձգձգվում էր և, ինչպես ինքն էր նշում. «Մի քիչ ուշ, քան շուտ եւ ձեռնունայն»²³:

Եվ հարկ է նշել, որ շատ մեծ կարևորություն ուներ Անթիլիասի կաթողիկոսական աթոռին տեսնել Գարեգին արքեպ. Դովսեփյանին, որը մեծ կարողություններ ուներ և այն կօգտագործեր ի նպաստ օտարության մեջ գտնվող հայության՝ նրանց համար եկեղեցին դարձնելով ազգային կյանքի, մշակույթի, հոգևոր վերագարթոնքի կենտրոն:

Այսպիսով, ամփոփելով երրորդ գլխում հետազոտված հիմնահարցերի արդյունքները, գալիս ենք այն եզրակացության, որ շնորհիվ ռազմաճակատում հայ ռազմիկների ցուցաբերած անձնագոհության և խիզախության, Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի կողմից Կարմիր բանակին ցուցաբերած նյութական օգնության, որի հետևանքով սփյուռքահայերի հանգանակած դրամի շնորհիվ կառուցվեցին «Սասունցի Դավիթ» երկու և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյունները, եկեղեցին ոչ միայն ամրապնդեց իր դիրքերը և կարգավորեց խորհրդային պետության հետ իր հարաբերությունները, այլև զգալի չափով նպաստեց սփյուռքահայերի՝ խորհրդային Հայաստանի հանդեպ դրական կողմնորոշմանը, որը դրսևորվեց ոչ միայն Կարմիր բանակին նյութական օգնություն ցույց տալով, այլև պատերազմի հաղթական ավարտից հետո կազմակերպված զանգվածային հայրենադարձությամբ, Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի հետ գործնական կապերի ամրապնդմամբ:

²² «Էջմիածին», 1944 թ., N 4, էջ 1:

²³ «Ազդարար», 1944–1945 թթ., N 110, էջ 3:

ԳՆՈՒԽ ԳՈՐԲՈՐԳ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՒ «ԵՐԿՐՈՐԳ ՎԵՐԱՍՏՆՈՒՆԴԸ»

ա) ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

1945 թ. մայիսի 9–ին ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած պատմական հաղթանակով ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը: Հաղթանակի ցնծություն ապրող Խորհրդային Միության ժողովուրդների թվում էր նաև հայ ժողովուրդը: Հաղթանակի առթիվ բազմաթիվ շնորհավորական հեռագրեր էին ուղարկվում Խորհրդային Միության ղեկավարությանը:

Մայիսի 10–ին Հայաստանի եկեղեցիներում Սուրբ Պատարագ մատուցվեց: Երևանի Ս. Աստվածածին եկեղեցու վանահայր Տաճատ ավագ քահանա Վարդանյանը Գ. Հարությունովին և Մ. Պապյանին հասցեագրված նամակում գրում էր. «Պանծալի Կարմիր բանակի այս մեծ հաղթանակի կապակցությամբ քաղաքի Ս. Աստվածածին տաճարում եկեղեցու միաբանության նախածեռնությամբ և հավատացյալ աղոթողների խառն բազմության մասնակցությամբ հանդիսավոր պատարագ մատուցվեց և վերջում կատարվեց մաղթանք՝ աղոթելով մեր սիրեցյալ հայրենիքի հզոր պաշտպան Կարմիր բանակի անսասանության, նրա իմաստուն առաջնորդ մեծ Ստալինի և Ձեր արևշատության համար ու ապա կատարվեց հոգեհանգիստ պատերազմում ընկած զոհերի հիշատակին:

Հավատացյալ աղոթավորների բուռն ցանկությամբ և նրանց հատուկ հանձնարարությամբ բախտավոր են համարում ինձ սրտի բոցավառ ուրախությամբ և անհուն բերկրանքով շնորհավորել Ձեր այսօրվա մեծ հաղթանակը»¹:

¹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 66, թ. 1:

Այդ առիթով Ս. Էջմիածնի Կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը հեռագիր հղեց Գ. Հարությունովին Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի և զոհվածների հիշատակին կատարված հոգեհանգստի մասին...²:

Երկրում հաստատված խաղաղությունը ստեղծեց այն պատեհ առիթը, որը պետք է կյանքի կոչեր Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի այն խնդրանքներն ու պահանջները, որոնք առաջ էր քաշել Ի.Ստալինի հետ հանդիպման ժամանակ:

Խորհրդային կառավարության անունով շնորհավորական հեռագիր ուղարկեց նաև Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանը: Հեռագրում մասնավորապես ասված էր. «Մեր և Սուրբ Էջմիածնի վանքի միաբանության կողմից շնորհավորում ենք Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի կապակցությամբ: Այսօր՝ մայիսի 9-ին, Սուրբ Էջմիածնի մայր տաճարում ողջ միաբանության մասնակցությամբ և բազմաթիվ աղոթողների ներկայությամբ կատարեցինք հանդիսավոր մաղթանք, վեր առաքելով մեր աղոթքները Բարձրյալին՝ պարգևելու մեծ առաջնորդ Ստալինին երկար կյանք և առողջություն, Կարմիր բանակին՝ ուժ ու զորություն»³:

Հայրենական մեծ պատերազմը ոչ միայն հայ ժողովրդի համար հնարավորություն էր՝ ցուցաբերելու իր պատմական մարտական ոգին, պաշտպանելու իր ազդեցությունն ու անկախությունը, այլև շատ լավ առիթ էր վերագտնելու իր հոգևոր արժեքներն ու սրբությունները, որոնք առժամանակ խլել էին իրենից:

Խաղաղության ու վերակազմության ժամանակաշրջան թևակոխած խորհրդային Միության վարած ներքին քաղաքականությունը նպաստեց նաև Հայ եկեղեցու վերագարթոնքին: Նման իրավիճակը, այն էլ պատերազմի ժամանակ, հազվադեպ երևույթ էր, որ հնարավորություն տվեց հայ եկեղեցուն թեկուզ փոքր-ինչ վերագտնելու այն ամենը, ինչն անքակտելի կապահպաներ ավանդական ու ազգային շեշտված նկարագիր ունեցող Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմքերը: Եկեղեցուն, որին գործելու ազատություն տրվեց երկրի օրենքների շրջանակներում, հնարավորություն ընձեռվեց կատարելու իր պատմական դերը՝ պաշտպան ու աջակից լինելով վտանգի ենթարկված իր ժողովրդին: Մայր Աթոռի և Հայաստանի կառավարության միջև հաստատված նոր հարաբերությունները միասնական ու անվերապահ պայքարի մեջ ավելի ամրապնդեցին ազ-

² ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 745, ք. 2:

³ «Սովետական Հայաստան», 1945 թ., մայիս 12, N 94, էջ 1:

գային ինքնագիտակցությունը, որը օր օրի իր շուրջն էր համախմբում հայ գաղութները վստահություն և հավատ ներշնչելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Խորհրդային Հայաստանի նկատմամբ:

Մայր Աթոռի իրավունքների վերականգնումը սկսվեց 1944 թվականից և առաջին հերթին նշանավորվեց «Էջմիածին» ամսագրի հրատարակումով: «Էջմիածին» ամսագիրը 1868–1919 թթ. հայոց կաթողիկոսության լույս ընծայած «Արարատ» ամսագրի ժառանգորդն էր: Դա ոչ միայն բարի կամքի դրսևորում էր Խորհրդային իշխանության կողմից, այլև, իհարկե, Ազգընտիր տեղապահի կատարած աշխատանքի գնահատականը: Այս քայլով ճանաչվում էին Էջմիածնի իրավունքները, այժմ արդեն Հայ եկեղեցին, ունենալով պաշտոնական խոսափող՝ ինչ–որ չափով անկախ, կարող էր հայտնել իր գոյության մասին*:

«Էջմիածին» ամսագիրը նշանավորվեց որպես «պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ սրբոյ Էջմիածնի, հրամանիւ ազգընտիր տեղակալի Աննայն Հայոց Հայրապետութեան տ. Գևորգ Արքեպիսկոպոսի»⁵: Այդ առթիվ սփյուռքից ողջույնի տասնյակ հեռագրեր ու շնորհավորանքներ ստացվեցին:

«Ազդարարը» այդ առթիվ գրեց. «Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի վերահրատարակումը, միայն մեկ բառի փոփոխումով կրնանք գործածել՝ Հայ կրօնական կեանքը հրաշալի վերածնունդ մը կրեց»: Այնուհետև նշեց. «Ընթացիկ պատշաճութիւնը կը պահանջե, անշուշտ, աւելի ետ չտանիլ յիշողութիւնը, այլ միայն նայիլ ներկային և անոր լոյսին տակ գծել վերածնունդի հեռանկարը:

Անցիալի փոխարեն ահա կը մարմնանայ Սիածնին Էջքը Էջմիածին, թռչնագրերով պճնեալ և ընդ հովանեալ «Ազգընտիր Տեղակալ Գևորգ արքեպիսկոպոս»–ի, որ մուտքին վրայ կեցած է շուքով՝ իբրև պատկառելի և արթուն պահակը դարավոր տաճարին կամ իր բացատրութեամբ՝ որպես «հովիւ քաջ»⁶:

«Էջմիածին» ամսագրի հրատարակման առիթով ընդարձակ հոդվածով հանդես եկավ Երուսաղեմի Հայ պատրիարքության պաշտոնական «Սիոն» ամսագիրը, որտեղ մասնավորապես նշվում էր. «... «Էջմիածին» ամսագրի հրատարակութիւնը, Հայաստանի Կառավարութեան Հայ եկեղեցւոյ նկատմամբ ունեցած իր բարեացակամ ուշադրութիւնն է: Էջմիածին հանդեսը՝ իբրև ծայն մեր եկեղեցւոյ, սրտի ուրիշ բերկրանքով կը

* Ստեփանյանց Ս., Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, էջ 147:

⁵ Էջմիածին, հունվար, 1945, էջ 1–2:

⁶ «Ազդարար», 1943–1944 թթ., N 84, էջ 3:




Գևորգ Զ Չորեքյան



«ՄԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» տանկային շարասյունը








«ԴՄԻՏՐԻ ԴՈՆՍԿՈՅ» տանկային շարասյունը



Եպիսկոպոսական նախապատրաստական ժողով. 1945 թ., հունիս



Ժողովի նախագահության կազմը





Դոկտոր Բյուլենտ Զոնտոնը նիստերի դադարի ընթացքում պատգամավորների հետ



Ժողովականներն ընդմիջման պահին



Հայկական ՍՍՀ մինիստրների սովետին կից
եկեղեցու գործերի խորհրդի նախագահ
Ս.Ն. Հովհաննիսյանը ողջունում է ժողովը



Ժողովի պատգամավորները քվեարկում են





Գևորգ Զ-ն օրհնում է եկեղեցական
ժողովի մասնակիցներին



Ժողովականները շնորհավորում են
նորընտիր Գևորգ Զ Չորեքյան կաթողիկոսին



Գևորգ Զ-ի օծումը

խանդավառե զմեզ: Իբր կենդանի եւ բարախուն այն հաւաստիքը, թե խորհրդային վարչակարգի ներքին Չայաստանեայց եկեղեցին պիտի չուշանայ վերադառնալու իր դարաւոր խորհուրդներուն եւ սփյուռքին, ոչ միայն հրայրքը, այլ նաև մեզ իրարու զօդող մագնիսը: Չանդեսը իր կրօնական, ազգագրական և բանասիրական երեսներով աւելի քան գոհացուցիչ է: Մեր ուրախութիւնը մեծ է մանաւանդ, որ իոն ներկայ են մեր մտքին ու հոգիին խօսող աւագ ներկայացուցիչները, էջմիածնայ միաբաններ, գիտնականներ, ակադեմականներ և արուեստի վաստակավոր գործիչներ: Սըրտապնդիչ այս խրախոյսը, բարի ձեռքերէ արժարծուած Լուսաւորչի այս կանթեղը, պետք ունի ինչպէս Մայր Չայրենիքի, այնպէս ալ Սփիւռքի հայութեան լայն աջակցութեան և գուրգուրանքին, որպէսզի անկկա կարենայ ոչ միայն գերագոյն հանդիսատեսը դառնալ Չայ հոգիին և արժեքներուն, այլ նաև Մայր Երկիրն ու Սփիւռքը կամրջող քաղցր ծիածանը»⁷:

«Էջմիածին» ամսագրի հրատարակութեան առթիվ Ազգընտիր տեղապահը մի հստակ բանածն է կազմում և ուղարկում արտասահմանյան թեմեր, որտեղ ասվում էր. «Չայրապետական ամսագիրը հանդիսանում է այն միջոցը, որ պետք է համախմբի Սփիւռքի բոլոր հայերին իրենց սրբազան հայրենիքին շուրջը, Մայր Աթոռի շուրջ: Չայութեան ուղղած մեր կոչի մեջ ասել ենք. «Չայը Սովետական Չայաստանից դուրս չունի այլ հայրենիք: Չայը Չայաստանից դուրս չունի այլ հաստատուն կռուան, բացի Մայր Չայրենիքը, Չայ եկեղեցին եւ նրան գլխաւոր Ամենայն Չայոց Չայրապետութիւնը»:

Այս պատգամով հրապարակ է գալիս Չայրապետական ամսագիրը, նույն այդ պատգամով նա կը շարունակի իր գոյութիւնը եւ յետագայում: Չայրապետական Աթոռը հրաւիրում է աշխարհի բոլոր մասերում ցրուած հայերին համախմբել Մայր Չայրենիքի՝ Չայաստանի շուրջը, Չայրապետական Մայր Աթոռի Ս. Էջմիածնի շուրջը, պայքարել ֆաշիզմի, մեր սրբազան հայրենիքի, որջ ազատասեր մարդկութեան ատելի թշնամու դէմ»⁸:

Էջմիածինն աստիճանաբար դուրս էր գալիս կղզիացումից, միաժամանակ զբաղվելով բարեգործություններով և արտաքին աշխարհի հետ կապեր հաստատելով՝ դառնում է մեծ կարևորություն ունեցող կենտրոն, ինչը թույլ էր տալիս ամրապնդելու կապերը և համախմբելու իր թեմերը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շուրջը:

⁷ «Սիոն», հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, էջ 110, 1944 թ.:

⁸ «Ազդարար», 1943-1944 թթ., N 84, էջ 3:

Իրադարձությունների դրական տեղաշարժը Մայր Աթոռ Ս. Էջմիածին մոլուճ էր իրավական դաշտում կայունացնելու իր դիրքերը, արտահայտելու սեփական դիրքորոշումները, որոնք վերաբերում էին ոչ միայն եկեղեցական, այլև քաղաքական հարցերին:

Ինչպես արդեն նշեցինք, Խորհրդային Հայաստանում կրոնական կյանքը ապրում էր վերածննդի մի նոր ժամանակաշրջան: «Ազատության» շրջանակները գնալով ավելի էին ընդարձակվում՝ ներառելով նորանոր հորիզոններ:

Եկեղեցի-պետություն հարաբերությունների շփման հետ զուգահեռ Ս. Էջմիածինն աստիճանաբար վերագտնում էր տարիներ առաջ կորցրածը: Նորովի էին իշխանությունների մոտեցումները եկեղեցուն առնչվող բազմապիսի հարցերին, ինչը և հնարավորություն էր տալիս եկեղեցու առաջնորդին բարձրացնել այնպիսի հարցեր, որոնք շատ կարճ ժամանակ առաջ ուղղակի արգելված էին:

Ազգընտիր տեղապահ Գևորգ Չորեքչյանը, մտահոգված լինելով թե՛ մերում և հոգևորականության հետ կապված խնդիրներով, դիմում է ինչպես տեղի, այնպես էլ Խորհրդային Միության իշխանության մարմիններին՝ փորձելով աքսորավայրերից ազատել բանտարկյալ հոգևորականներին և վերաբացել երբեմնի առանցքային նշանակություն ունեցող որոշ վանքեր ու եկեղեցիներ:

Ազգընտիր տեղապահը, դիմելով հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Ն. Հովհաննիսյանին, թույլտվություն էր խնդրում նոր եկեղեցիներ բացելու համար.

«Տարւոյս մարտի 2–ին ուղարկել էի մի գրութիւն յարակից այլեւ այլ համայնքներից ստացուած դիմումներով, յիշեալ վայրերում եկեղեցիներ բանալու համար. ցարդ պատասխան չունեմ: Գրութեամբս ուղարկում եմ նոր դիմումներ՝ խնդրելով, որ եկեղեցիների բացման դիմումների պատասխանները արագացուին, նկատի առնելով, որ Ջատկական տօները մոտենում են...»:

Իսկ վերջում ավելացնում է. «...«Էջմիածին» ամսագրի հետաքրքրութիւնը չափազանց մեծ է. ապացոյց, որ Թբիլիսիից պահանջում են մինիմում ուղարկել զոնէ 300 օրինակ. ուստի ցանկալի էր զոնէ տպագրել 1200 օրինակ. նույնիսկ եթէ 2/3–ը հասարակ թղթի վրա տպվի...»⁹:

Գևորգ Չ Չորեքչյանը, նախկինում լինելով վիրահայոց թեմի առաջնորդ, քաջատեսչակ էր այնտեղ կատարված բարբարոսություններին: Թիֆլիսի 23 եկեղեցիներից գործում էր միայն մեկ՝ Մեյրան թաղամասի

⁹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 728, ք. 13:

Ս.Գևորգ եկեղեցին, իսկ թեմում՝ Շանաբադի Ս. Գևորգ և Ախալքալաքի Ս. Լուսավորիչ եկեղեցիները:

Օգտվելով առաջին իսկ հնարավորությունից՝ Ազգընտիր տեղապահը իր հայացքն ուղղեց հայաշատ այդ թեմի վրա: Թեմի առաջնորդ կարգելով Սահակ ավագ քահանա Սահակյանին՝ ցանկանում էր շտապ տեղեկանալ թեմի վիճակին, կարիքներին և առկա խնդիրներին: Թեմի առաջնորդ տեր Սահակը, Գևորգ Չորեքյանին տեղեկացնելով թեմում առկա իրավիճակի մասին, հաղորդում էր. «Եկեղեցի բանալու կարիք կա Բաթում, Սուրամ, Գորի, Թելավ, Վելիայիխե, Ախալքալաք, Սղնաղ, Թելեթ, Ծալկայի շրջան, Շուլավեր» բնակավայրերում:

Վիրահայոց առաջնորդական փոխանորդը, մտահոգված լինելով թեմի ճակատագրով, դիմեց Վրաստանի կառավարությանը՝ հայկական եկեղեցիները վերաբացելու խնդրանքով: 1944 թ. մայիսի 9-ին նա դիմեց Վրաստանի ժողկոմխորհին՝ Թելեթ գյուղում Ս. Գևորգ ծխական եկեղեցին վերաբացելու ակնկալությամբ¹⁰:

Ազգընտիր տեղապահը, դեռևս 1920-ական թվականներին ականատես լինելով բոլշևիկյան հակակրոնական գործողություններին, ամեն կերպ փորձում էր կրկին օգտագործել իր հնարավորությունները՝ օժանդակելու հոգևոր կյանքի վերականգնմանը վիրահայոց թեմում: Ազգընտիր տեղապահը Թբիլիսիում նոր եկեղեցիներ բացելու թույլտվության խնդրանքով դիմում է Վրաստանի ժողկոմխորհի նախագահին.

«Թբիլիսիում հայ հավատացեալները ունեին 23 եկեղեցի. այսօր ունեն միայն մի եկեղեցի, որ է Մեյդանի ս. Գեորգ եկեղեցին: Նկատի առնելով հայ հավատացեալների թիւը Թբիլիսիում՝ յիշեալ մի եկեղեցին անբաւարար է գոհացնելու հայ հավատացեալների հոգեւոր-կրօնական կարիքները: Անկախ վերոյիշեալից ս. Գևորգ եկեղեցին, հեռաւորութեան պատճառով, մատչելի չէ քաղաքի հեռաւոր մասերում ապրողներուն:

Այս երկու պատճառները դրդել են հայ հավատացեալներին դիմել Մեզ եւ խնդրել, որ միջնորդութիւն յարուցանեն ժողկոմսովետիդ առաջ՝ բաց անելու Գալաքարում էջմիածնեցոց եկեղեցին եւ Միխայլովսկու վերայ՝ Թանդոյենց Ս. Աստուածածին եկեղեցին եւ յանձնելու հավատացեալներուն»¹¹:

Վիրահայոց թեմի հավատացյալները ևս անմասն չէին կատարվող իրադարձություններից. նրանք ակտիվորեն ստորագրություններ էին

¹⁰ Ստեփանյանց Ս., Դայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, էջ 152-153:

¹¹ Վավերագրեր Դայ եկեղեցու պատմության (1938-1955), էջ 214:

հավաքում միջնորդագրերի տակ, որոնք առաջնորդական փոխանորդը ներկայացնում էր Վրաստանի եկեղեցական գործերի կոմիտեին՝ եկեղեցիները բացելու և բանտարկված հոգևորականներին ազատ արձակելու համար: Նույն ակնկալիքներով Ազգընտիր տեղապահին էին դիմում տարբեր թեմերի հավատացյալներ, որոնց նպատակներն ու ցանկությունները գրեթե նույնն էին:

1944 թ. մարտի 11-ին Էջմիածնի Մրգաստան գյուղի հավատացյալները խնդրագրով դիմեցին Գևորգ Չորեքչյանին. «Մեր ներկայացրած տիրացու Սահակ Տեր-Խաչատրյանին ձեռնադրել, որ բոլորիս կողմից ճանաչված է և հարգված մեր գյուղի հավատացյալների կողմից»: Լեւինականից Սահակ քահանա Տեր-Խաչատրյանի դուստրը խնդրագիր է ուղարկում՝ իր հորը աքսորավայրից ազատելու միջնորդությամբ, Սիբիրի Տուրինսկ քաղաքից Ապարանի Չամրլու գյուղի Ս. Գևորգ ծխական եկեղեցու քահանա Թադևոս Տեր-Գրիգորյանը աքսորից ազատվելու խնդրանքով դիմում է Ազգընտիր տեղապահին և խնդրում նրա միջնորդությունը՝ հայրենիք վերադառնալու՝ իր ծխի մոտ: Աստրախանի հավատացյալները խնդրում էին, որ Ղազախստանի աքսորից վերադարձնեն իրենց քահանա Սարգիս Ասլանյանին¹²:

Հայ եկեղեցին սկսեց ապրել խաղաղ կյանքով: Կրած մեծամեծ վնասներն ու զրկանքները քրիստոնեական «հիվանդության» տակ այն դարձրել էին ինքնապաշտպանության ենթարկված մի կառույց: Հայ եկեղեցու հոգևոր արժեքները ենթարկվել էին հալածանքների և մոլեռանդ հակակրոնության. ընծեռված խաղաղության պատեհ առիթը օգտագործվեց՝ վերստին ամրացնելու հայ եկեղեցու կանոնական և ավանդական կարգերը, սահմանադրական սկզբունքները և բռնության տարիներին կորցրած հոգևորականներին փոխարինելու նոր ձեռնադրված հոգևորականներով:

1944 թվականի սեպտեմբեր–նոյեմբեր ամիսներին Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը հոգևոր կոչումներ շնորհեց Վահան Տեր-Աստվածատրյանին և Սահակ Խաչատրյանին, որոնք արժանացան սարկավագի հոգևոր աստիճանի, իսկ Վահան վարդապետ Կոստանյանը, Մատթոս վարդապետ Աճյանը և Սուրեն վարդապետ Թորոսյանը՝ ծայրագույն վարդապետի կոչման: Բացի այդ Ազգընտիր տեղապահը արտասահմանյան հոգևոր առաջնորդների թափուր տեղերի համար նույնպես նշանակումներ կատարեց: Իրանա–հնդկական թեմի առաջնորդ

¹² Ստեփանյանց Ս., Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, էջ 151:

նշանակվեց Վահան վարդապետ Կոստանյանը, Արմավիրի թեմի առաջնորդ՝ Սուրեն վարդապետ Թորոսյանը, Շիրակի թեմի առաջնորդ՝ Ռուբեն վարդապետ Դրամբյանը¹³:

Էջմիածինը գործնական քայլեր էր ձեռնարկում: 1944 թ. կեսերին Նոր Նախիջևանի Չալդր գյուղում քահանա ձեռնադրվեց Գ. Ջհանգուլյանը: Նույն թվականի օգոստոսին Ազգընտիր տեղապահին էր դիմել Բասարգեչարի (այժմ՝ Վարդենիս) շրջանի քահանա Հարություն Տեր-Միրզոյանը՝ խնդրելով սրբազան հոր միջնորդությունը իշխանությունների մոտ՝ բաց անելու Բասարգեչարի Ս. Աստվածածին եկեղեցին¹⁴:

Մինևույն ժամանակ մի շարք հոգևորականներ, որոնք ինչ-որ պատճառներով թողել էին իրենց հոգևոր ծառայությունը, նամակներ էին ուղղում Գևորգ Չորեքչյանին նորից միաբանության շարքերն ընդունվելու խնդրանքով: Նրանցից էին՝ Բենիկ վարդապետը, որ նշում էր, թե իբր Ավ. Իսահակյանը և Ս. Մալխասյանը դեմ են իր վերադարձին (եղել է անվտանգության կոմիտեի անդամ), հիշելով իր ընկերական կապը Գևորգ Չորեքչյանի հետ: Թելավիի (Վրաստան) նախկին քահանա, հայկական դպրոցի տեսուչ Գևորգ Վաթյանը խնդրում էր իրեն կրկին վերցնել եկեղեցում ծառայության՝ ցանկանալով վարդապետական կարգ ընդունել¹⁵:

Երկրում տեղի ունեցող դրական տեղաշարժը՝ կապված խորհրդային բանակի տարած հաղթանակների հետ, մեկ անգամ ևս հնարավորություն տվեց եկեղեցուն իր դիրքերն ամրապնդելու քայլեր կատարել: Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը, դիմելով եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս.Ն. Յովհաննիսյանին, արդեն հարց էր բարձրացնում Էջմիածնում հոգևոր ճեմարանը վերաբացելու և նրա կարիքները հոգալու, նաև Ս. Էջմիածնի համար տնտեսական բազա ստեղծելու համար: Կարևորելով Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի դերը՝ Ազգընտիր տեղապահը նշում էր. «Միութենական երկրների և արտասահմանի հայոց եկեղեցական կեանքի կարիքները մեզ թելադրում են խնդրել կառավարութունից, որ թույլատրե բանալ ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարան, որպէսզի հնարաւորութիւն ունենայ ս. Էջմիածինը, որ Հայ եկեղեցու ղեկավար կեդրոնական հաստատութիւնն է, մատակարարել թէ միութենական եւ թէ արտասահմանի բոլոր թեմերին առաջնորդներ, փոխանորդներ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, քարոզիչներ, եկեղեցական եւ աշխարհիկ մատենագրութեամբ զբաղւող գիտնականներ և այլն: Ահա այդ

¹³ Նույն տեղում, էջ 156:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 1110, ք. 6:

¹⁵ ՀՀ ԱԱ, ֆ. 454, ց. 1, գ. 208, ք. 3:

Ճեմարանաւարտներն են, որ ամենուրեք պիտի կառավարեն Յայ եկեղեցիներն ու եկեղեցական հաստատութիւնները, հոգան հայ ժողովրդի կրօնական, բարոյական և կրթական կարիքները:

Նոր բացուելիք ճեմարանը կը կարօտի դրամական մեծ միջոցների, որ պիտի հոգայ արտասահմանի եւ տեղական հայութիւնը: Ներկայ մեր պետական կառուցուածքը նկատի առնելով պարզ է, որ տեղական հայութեան բաժինը պէտք է կառավարութիւնը իր վերայ վերցնել՝ ստեղծելով ս. Էջմիածնի համար տնտեսական բազա»¹⁶:

Իսկ 1944 թ. կեսերին արդեն տասնյակ նմանատիպ նամակներ էին ուղղվում Գևորգ Չորեքչյանին ակնկալելով նրա միջնորդութիւնը կալանավայրերից նախկին հոգևորականներին ազատ արձակելու գործում: Գնալով ակտիվացող եկեղեցական կյանքը վերականգնելու հավատացյալների ձգտումներին՝ գյուղերի և ավանների ղեկավարութիւնը ստիպված էր տեղի տալ: Արդեն 1945 թ. Էջմիածնի շրջանի Մրգաստանի գյուղխորհրդի նախագահ Յայկազ Թաղևոսյանը, կոլտնտեսության նախագահ Եսայի Գրիգորյանը և նույն գյուղի Ս. Յովհաննես եկեղեցու քահանա տեր Սահակ Խաչատրյանը կազմեցին մի արձանագրութիւն. «Յամաձայն բարձր իշխանության կարգադրության, մենք՝ գյուղխորհրդի նախագահ և կոլտնտեսության նախագահ, մեր եկեղեցին հանձնում ենք եկեղեցական խորհրդին: Ըստ սրա, եկեղեցու շենքը, որ նախկինում գործածվել էր իբրև ակումբ և ապա՝ կոլտնտեսության պահեստ, բարվոք վիճակում է, պահանջվում է թեթև նորոգում և բեմի վերասարքավորում, եկեղեցու շենքը հանձնեցինք...»: Էջմիածնի շրջանի Յայթաղ գյուղի հավատացյալները, թվով 15 մարդ, նույնպես խնդրում էին Ազգընտիր տեղապահին. «Միջնորդել ուր հարկն է կարգադրելու վերաբանալու մեր գյուղի հավատացյալ համայնքի եկեղեցին»¹⁷:

Դրիմն ազատագրվեց գերմանական զավթիչներից 1944 թվականի ապրիլ-մայիս ամիսներին: Դրանից անմիջապես հետո դրիմաբնակ հայերը մեղադրվեցին ֆաշիստներին օժանդակելու պատրվակով և հույնների, թաթարների հետ մեկտեղ քստրվեցին Ուֆա:

Աքստրված հայերը մի շարք դիմումներ ու նամակներ էին ուղղում իշխանության տարբեր ատյաններին, Ազգընտիր տեղապահին, Յայաստանի մշակույթի և գիտության գործիչներին:

Կրասնոկամսկ քաղաքում (ՌԴ Պերմի մարզ) վերաբնակված մի խումբ հայեր Յայաստան վերադառնալու խնդրանքով Գևորգ Չորեքչյան

¹⁶ Վավերագրեր Յայ եկեղեցու պատմության (1938–1955), էջ 223:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 303, թ. 6–7:

նին ուղղված իրենց նամակում հայտնում էին հետևյալը. «1944 թ. տվյալներով դրիմահայության թիվը 16 հազար էր: 1944 թվականի ապրիլի 13-ին Ղրիմը ազատագրվեց գերմանացիներից և շատ չանցած՝ 1944 թվականի հունիսի 27-ին հայերի տեղահանության հրաման տրվեց, որի պատճառով 16 հազար հայեր ստիպված եղան հայտնվել Ուրալում: Ակնկալում ենք կաթողիկոսական տեղապահի միջնորդությունը»¹⁸:

Ազգընտիր տեղապահը չէր կարող անտարբեր մնալ և 1945 թ. մարտի 26-ին Ստալինին ուղղված նամակում գրում էր. «Թանկագին Իոսիֆ Վիսարիոնովիչ, մեր փառապանծ Կարմիր բանակի կողմից գերմանաֆաշիստական զավթիչներից Ղրիմն ազատագրելուց հետո տեղի հայ բնակչությունը հույների և թաթարների հետ մեկտեղ շտապ դուրս բերվեց Ղրիմից և փոխադրվեց Ուֆա: Տեղահանվեց ողջ հայ բնակչությունը՝ տղամարդիկ և կանայք, ծերերն ու երեխաները, և նրանք բոլորը բնակվում են անսովոր դաժան կլիմայի պայմաններում... Տեղահանվածների վիճակը ծանրանում է նաև այն բանով, որ նրանց մոտ չկա հայրենիքի հանդեպ մեղքի որևէ զգացողություն... Ընդհակառակը, ամբողջության մեջ նրանք իրենց զգում են քաղաքացիներ, ովքեր ազնվորեն կատարել են իրենց պարտքը հայրենիքի առջև՝ ողջ հայության հետ միասին ինչպես գերմանացիների հետ պատերազմի ժամանակ բաց ճակատում, այնպես էլ օկուպացիայի ժամանակաշրջանում: Ահա թե ինչու իրենց բաժին ընկած պատժին նրանք նայում են որպես մի դժբախտության, որից ազատվելը նրանք, բնականաբար, սպասում են Ձեզանից...»¹⁹:

Իր նամակի վերջում Գևորգ Չորեքչյանը Ստալինին խնդրում էր հայությանը թույլ տալ վերադառնալու բնակության իր նախկին վայրերը՝ Ղրիմ կամ Հայաստան: Սակայն իրավիճակը հետագայում ավելի բարդացավ հայ ժողովրդի համար, այս տեղահանությունը միայն սկիզբը եղավ հետագա տեղահանությունների, որոնք կատարվեցին ԽՍՀՄ եվրոպական մասերից և Կովկասից:

Այնուամենայնիվ, զնալով պետություն-եկեղեցի հարաբերությունները դրվում էին որոշակի հարթության վրա, և առաջ էին քաշվում այնպիսի հիմնահարցեր, որոնց մասին որոշ ժամանակ առաջ նույնիսկ մտածելը անհնար էր դարձել: Եթե նախկինում (1938 թ.)՝ Խորեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի առեղծվածային մահից հետո, Հայաստանի կոմկուսի

¹⁸ ՀԱԱ, ֆ. 825, ց. 1, գ. 16, թ. 1, 2:

¹⁹ Ստեփանյանց Ս., Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, էջ 159-160:

քարտուղար Գր. Հարությունյանը Մոսկվային հաճոյանալու համար թույլտվություն էր խնդրում ՀամԿ(բ)Կ կենտկոմից և հարց էր բարձրացնում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եկեղեցին իբրև հետադիմության օջախ ընդհանրապես վերացնելու համար (Ս. Էջմիածնի վանքը փակելու և կաթողիկոսությունը լուծարելու որոշումը ընդունվել է 1938 թ. օգոստոսի 4-ին, որին հետևել է Գ. Հարությունյանի նույն օրվա նամակը Ի. Ստալինին որոշման կիրառման համար կենտրոնի թույլտվությունը ստանալու մասին)²⁰, ապա 1945 թ. նա խնդրում էր վերականգնել Վաղարշապատի շրջանի նախկին անունը՝ նրան տալով Էջմիածնի շրջան անվանումը, իսկ Վաղարշապատը՝ Էջմիածին:

Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ 1945 թ. փետրվարի 13-ի բյուրոյի նիստի արձանագրությունը վերաբերում էր Վաղարշապատի շրջանի և Վաղարշապատ քաղաքի նախկին անվանման վերականգնմանը: Արձանագրություն N 388 Կ 24-ում ասվում էր. «Վաղարշապատի շրջանի և Վաղարշապատ քաղաքի նախկին անվանումը վերականգնելու մասին:
(Ընկ. Ռ. Գալստյան)

Արտահայտվեցին – Ընկ. Պապյանը, Յ. Մամիկոնյանը, Բ. Աստվածատրյանը, Մ. Աբեղյանը, Վ. Ծաղիկյանը, Ք. Աղեկյանը, Ս. Միքայելյանը, Գ. Հարությունովը:

Վերականգնել Վաղարշապատի շրջանի և Վաղարշապատ քաղաքի նախկին (մինչ 1928 թ.) անվանումը և, այսուհետև, Վաղարշապատի շրջանը անվանել Էջմիածնի շրջան, և Վաղարշապատ քաղաքը՝ քաղաք Էջմիածին:

Խնդրել ՀԿ(բ)Կ ԿԿ հաստատել:

Հայաստանի Կ(բ)Կ քարտուղար՝
(Գր. Հարությունով)»²¹:

Կաթողիկոսական տեղապահ Գևորգ Չորեքչյանը 1945 թվականի ապրիլին մեկնեց Մոսկվա՝ ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ Ի.Վ. Ստալինի հետ հանդիպելու: Այդ հանդիպումը կայանում էր ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Գ.Ա.Հարությունովի նախածեռնությամբ: Հայրապետական տեղապահը Ստալինին ներկայացնելու համար պատրաստել էր մի զեկուցագիր՝ բաղկացած 11 կետից:

²⁰ Ավետիսյան Հ., Վիրաբյան Ա., Հարությունյան Կ., Գրիգոր Հարությունյանի կյանքը և գործունեությունը, էջ 41:

²¹ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), Գիրք 2, էջ 254:

1. Վերականգնել Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանը՝ ուսուցման 6-ամյա ժամկետով:

2. Սուրբ Էջմիածնին վերադարձնել նախկին հոգևոր ճեմարանի գրադարանը, որը այնքան անհրաժեշտ է նոր բացվելիք հոգևոր ճեմարանին (այդ գրադարանը գտնվում է Մատենադարանում և չի օգտագործվում):

3. Թույլ տալ Սուրբ Էջմիածնին ունենալ իր տպարանը՝ հոգևոր ճեմարանի դասագրքերը, եկեղեցական գրքերը, կաթողիկոսի կոնդակները, «Էջմիածին» ամսագիրը և եկեղեցական օրացույցը տպագրելու համար:

4. Թույլ տալ «Էջմիածին» ամսագրի հատուկ բաժնուն տպագրելու գիտահետազոտական հոդվածներ՝ հայագիտական հարցերի ուսումնասիրության բնագավառից, որովհետև առանց դրա ամսագիրն արտասահմանում հաջողություն չի ունենա և չի կարող իրագործել իր հիմնական դերը, այն է՝ ամրապնդել արտասահմանյան հայերի կապը հորիորային Հայաստանի հետ:

5. Որոշել Սուրբ Էջմիածնի վանքի սահմանները՝ տալով նրան իսկական վանքի կերպարանք: Իսկ եթե հնարավոր չէ Սուրբ Էջմիածնին վերադարձնել իր նախկին տարածքները, ապա, հակառակ դեպքում, պետք է ընդլայնել նրա ներկա սահմանները, տրամադրել նրան արևմտյան, հարավային, արևելյան և հյուսիսային հարող տարածությունները:

Ներկայումս այդ բոլոր շենքերը զբաղեցնում են զորամասերը և խորհրդային-կուսակցական հիմնարկությունների աշխատողները:

6. Սուրբ Էջմիածնին վերադարձնել «Յոթփսիմ»-ը, «Գեղարդ» և «Խոր Վիրապ» վանքերը, որպես պատմական սրբավայրեր, ուր հանգչում են սրբերի աճյունները և ուխտագնացության վայրեր են:

7. Թույլ տալ Սուրբ Էջմիածնին նորից կառուցել «Զվարթնոց» վանքը՝ ըստ ճարտարապետ Թորոս Թորամանյանի մոդելի:

8. Թույլ տալ կաթողիկոսի միջնորդությամբ, անհրաժեշտության դեպքում խորհրդային Հայաստան (Սուրբ Էջմիածին) գալ արտասահմանյան հոգևորականներին՝ եպիսկոպոս ձեռնադրելու համար, ինչպես նաև եկեղեցական գործերով արտասահման մեկնել Սուրբ Էջմիածնի նշանակած թեմակալներին և Սուրբ Էջմիածնի պատգամավորներին:

9. Թույլ տալ Սուրբ Էջմիածնին, առաջիկա Մյուռնոսիմության կապակցությամբ, 1946 թ. արտասահմանից հրավիրել եպիսկոպոսների և թեմակալ առաջնորդների և վերջիններիս միջոցով կազմակերպել հայականավոր հարուստների ժամանումը, որպես ուխտավորների, նպատակ ունենալով նրանցից ստանալ դրամական խոշոր միջոցներ՝ Սուրբ Էջմիածնի և խորհրդային Հայաստանի շինարարական կարիքների համար:

10. Թույլ տալ Պետքանկի երևանի բաժանմունքում բացել Սուրբ Էջմիածնի հատուկ օտարերկրյա վալյուտային հաշիվ և այնտեղ կենտրոնացնել Սուրբ Էջմիածնի անվանը արտասահմանյան թեմերից ստացվող դրամական միջոցները:

11. Թույլ տալ Գերագույն Պատրիարքին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, վանքի և Վեհարանի կարիքների համար արտասահմանից ստանալ ավտոմեքենաներ, գրամեքենաներ, թուղթ և այլն, ինչպես նաև ծանրոցներ՝ Էջմիածնի միաբանության կարիքների համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ազգընտիր տեղակալ՝ Արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյան.

Բնագրի վրա նակագրված է՝

«Համաձայն եմ: ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ՝ Իոսիֆ Ստալին»²²:

Ձեկուցագրում արտահայտվում էին այն պահանջներն ու խնդրանքները, որոնք թույլ կտային Ս. Էջմիածնին վերականգնելու իր իրավունքներն ու արտոնությունները, որոնք կնպաստեին հայ եկեղեցու վերածննդին: Բացի եկեղեցու հիմնախնդիրներից, Ազգընտիր տեղապահը զեկուցագրում առաջ էր քաշում կրթամշակութային մի շարք հարցեր, որոնց լուծման դեպքում բարձրանալու էր Ս. Էջմիածնի հեղինակությունը մտավորականության և սփյուռքահայության շրջանում:

Հայ եկեղեցու պատմության մեջ 1945 թվականի ապրիլի 19-ը շրջադարձային էր: Այդ օրը ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ի.Վ. Ստալինը ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար Գ. Ա. Հարությունովի միջնորդությամբ Կրեմլում ընդունեց Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին: Հանդիպմանը ներկա էր նաև ԽՍՀՄ ժողկոմխորհին կից կրոնական պաշտամունքի գործերի խորհրդի նախագահ Ի. Պոլյանսկին: Ստալինը բարեհաճությամբ ընդունեց Ազգընտիր տեղապահին, բարձր գնահատեց նրա հայրենասիրական գործունեությունը պատերազմի սկզբից ի վեր: Ստալինը համաձայնեց բավարարել զեկուցագրում առաջ քաշված բոլոր խնդիրները, բացի էջմիածնապատկան կալվածքների հարցից, քանի որ նշված հողատարածությունները գտնվում էին կոլտնտեսության տրամադրության տակ: Հանդիպման ժամանակ խոսք բացվեց նաև հայ ժողովրդի կարիքների, ինչպես նաև արևմտյան հողերի մասին: Այս հանդիպումը բավական կարևոր էր եկեղեցու վերահաստատմամբ և երկրի բարձ-

²² ՀՍԱ, ֆ. 409, ց. 1, գ. 739, թ. 17,18,19:

րագույն իշխանության կողմից փաստացի եկեղեցու իրավունքների ճանաչմամբ²³:

Ի. Վ. Ստալինի հետ հանդիպումը տվեց իր դրական արդյունքը: Հաստատանում 1945 թվականի մայիսից մինչև տարեվերջ վերաբացվեցին Աշտարակի շրջանի Քաղսի, Ներքին Ախտայի Փարուխ, Մաստարա գյուղերի, Քանաքեռի, Ստեփանավանի, Ախալքալաքի Գոման գյուղի, Նոր Բայազետի և Երևանի Ս. Ջորավոր եկեղեցիները:

Աստիճանաբար եկեղեցուն էր վերադարձվում զինվորականների ծեռքում գտնվող եկեղեցական շենքերի մի մասը: Վերադարձվեց նաև առգրավված արխիվային նյութերի և գրականության մի մասը:

Ակնհայտորեն նկատելի էր Հայ եկեղեցու գործերի խորհրդի եկեղեցանպաստ գործունեությունը: Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Հովհաննիսյանն իր գործողություններում դադարել էր լինել զուտ միջնորդ իշխանությունների և եկեղեցու միջև: Նա իր նախածեռնությանը հաճախ էր իշխանության մարմիններին ներկայացնում եկեղեցու հիմնախնդիրներին վերաբերող հարցեր՝ արտահայտելով իր դրական վերաբերմունքը:

ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ա. Սարգսյանին ուղղված զեկուցագրում Ս. Հովհաննիսյանը ընդունելություն էր խնդրում Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի համար. «1945 թ. մայիսի 17–ին, պաշտոնական ընդունելության ժամանակ տեղի ունեցած զրույցի ընթացքում, որը վերաբերում էր կայանալիք եկեղեցական ժողովին, էջմիածնի կաթողիկոսի տեղապահ Գևորգ Չորեքչյանը Ձեր ընդունելությունն է խնդրում՝ հետևյալ հարցերի կապակցությամբ.

Առաջին՝ նա ցանկանում է շնորհակալություն հայտնել կառավարությանը՝ էջմիածնի համալիրի հիմնովին վերանորոգման, մեծ քանակությամբ կահույք ձեռք բերելու, միջոցներ տրամադրելու գործում ցուցաբերած օգնության համար:

Երկրորդ՝ ծանոթացնելու ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ ընկ. Ստալինի հետ կայացած զրույցի ելույթանքը:

Երրորդ՝ էջմիածնի վանքի և անձամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հարկահանման հարցն է: Նա խնդրում է ազատել տաճարն ու կաթողիկոսին հարկերից ոչ թե այն բանի համար, որ միջոցներ չկան, այլ որ, իբրև բացառություն, այս երկու օբյեկտները երբեք հարկահանության

²³ Ստեփանյանց Ս., Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, էջ 161–169:

չեն ենթարկվել՝ նկատի ունենալով, որ տաճարը անձամբ կաթողիկոսի աղոթավայրն է, և վանքի ու կաթողիկոսի ազատու՛նը հարկերից բարձրացնում է էջմիածնի հեղինակությունը:

Իր խնդրանքը հիմնավորելով փաստերով, միաժամանակ նա պատրաստակամություն հայտնեց հարկերի ընդհանուր հանրագումարը փոխանցել Կառավարությանը ցանկացած այլ եղանակով:

Եվ վերջապես՝ նա անձնական բնույթի խնդրանք ունի...»²⁴:

բ) ԷԶՄԻԱԾԻՆ–ԱՆԹԻԼԻԱՍ ՓՈԽՉԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Չայ ժողովրդի ազգապահպանության ճակատագրական խնդիրները իր վրա վերցրած Չայ Առաքելական եկեղեցին իր նվիրապետական աթոռներով՝ զլխավորությամբ Ս. Էջմիածնի, Չայրենական մեծ պատերազմի տարիներին հանդես եկավ ի պաշտպանություն հուրհրդային Միության:

Էջմիածին–Անթիլիաս կապը կրկին վերականգնվեց, ինչը խորհրդային կարգերի հաստատվելուց հետո վարչահրամայական գաղափարախոսության հետևանքով մտել էր փակուղի: Ստանալով Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքությունների աջակցությունը՝ կաթողիկոսական տեղապահ Գևորգ Չորեքյանը և Գարեգին Չովսեփյան կաթողիկոսը՝ իրենց եկեղեցանվեր ու ազգանվեր գործունեությամբ, զորակցելով մեկը մյուսին, արդյունավետ աշխատանքներ տարան Չայ եկեղեցու միասնականությունը և միությունը ամրապնդելու ուղղությամբ:

Ս. Էջմիածինը 1943 թվականին մասնակցեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական ընտրություններին այն նույն իրավունքներով, ինչ իրավունքներով մասնակցում էին արտասահմանյան թեմերը դեռևս 1932 թ. Ս. Էջմիածնում գումարված Ազգային–եկեղեցական ժողովի ժամանակ:

Սակայն պատերազմի ծանր ու անհանգիստ ժամանակաշրջանում Սփյուռքում հայ կուսակցական տարբեր խմբավորումների մեջ կային հուրհրդային Չայաստանի նկատմամբ կոպիտ վերաբերմունք ունեցողներ, ովքեր չէին կիսում ողջ հայությանը Ս. Էջմիածնի շուրջը համախմբելու գաղափարը: Նրանք փորձում էին ԱՄՆ–ի հոգևոր թեմն անջատել Ս. Էջմիածնից և ենթարկել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը՝ թուլացնելու համար Չայ եկեղեցու միասնականությունը:

²⁴ Վավերագրեր Չայ եկեղեցու պատմության (1938–1955), Գիրք 2, էջ 268–269:

«Հայաստանեաց Առաքելական Ս. Եկեղեցին Հիւսիսային Ամերիկայի մեջ, տարիներ է ի վեր մատնուած է անօրինակ տագնապի մը, որու հետեւանքով խորունկ պառակտում մը առաջ եկած է Հիւս. Ամերիկայի երկու հարիւր հոգանոց հայ գաղութին մէջ: Պառակտում եւ փոխադարձ ատելութիւն, որու նմանը քիչ տեսնուած է Հայոց եկեղեցւոյ պատմութեան մէջ»²⁵:

Վերը նշված տագնապները և թեմերը մեկը մյուսից անջատելու հրապարակումները հաճախակի տեղ էին գտնում սփյուռքահայ մամուլում. հատկապէս ակտիվ էր ամերիկահայ մամուլը:

Բոստոնում լույս տեսնող «Պայքար» օրաթերթի 1944 թ. հունիսի 21-ի համարում Փափազյանը հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Ամերիկայի թեմը կապել Կիլիկիո կաթողիկոսարանին մինչև այն ատեն, երբ Էջմիածինը ի վիճակի պիտի ըլլայ իր հեղինակավոր դերը կատարելու արտասահմանի մեջ»:

Նյու Յորքում հրատարակվող երկու թերթեր՝ «Լրաբեր» և «Երիտասարդ Հայաստան», խիստ կերպով բողոքեցին. «Եզրակացութիւն, որ առաջարկը «քաղաքական ցույց» մըն է Էջմիածնի և Խորհրդային Հայաստանի դէմ»²⁶:

Գնահատելով այդ երևույթի վտանգավորությունը՝ Գարեգին Հովսեփյան կաթողիկոսը, ինչպէս նաև Սփյուռքում լույս տեսնող մի շարք թերթեր իրենց դժգոհությունն են արտահայտում՝ մերժելով նման մոտեցումները:

Մեծի Տանն Կիլիկիո նորընտիր կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը, որպեսզի օր առաջ հարթեցներ կրքերը և հասկացներ, որ նույն եկեղեցին չի կարող ունենալ երկու առաջնորդ, առավել ևս մրցակից, հանդես եկավ հայտարարությամբ. «Ամերիկայի թեմը հանելուն Էջմիածնի վերահսկողությունից և ենթարկելուն Կիլիկիոյ կաթողիկոսությանը, ոչ միայն համամիտ չենք, այլև համարում ենք ոչ օգտավետ: Հայոց հայրապետութիւնը և եկեղեցին մի է: Էջմիածնի հայրապետը նորահոգնոր գլուխն է և Կիլիկիոյ կաթողիկոսը աւագ եղբայրը իւր պաշտոնով և իւր դիրքով»²⁷:

Նորընտիր կաթողիկոսը իր շրջահայացությամբ հայ քաղաքական կուսակցություններին և հասարակական կազմակերպություններին կոչ էր անում հրաժարվել այդ վտանգավոր մտադրությունից, քանի որ

²⁵ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), Գիրք 2, էջ 259:

²⁶ «Ազդարար», 1943–1944 թթ., N 109, էջ 3:

²⁷ Նույն տեղում, էջ 4:

այն կարող էր հանգեցնել Հայ Առաքելական եկեղեցու տրոհմանը, և հասարակական-քաղաքական տարբեր խմբավորումների անհաշտությունը կծներ մի պայքար, որը արմատապես կթուլացներ այն, ինչը դարերի ընթացքում ոգևորում և պահպանում էր հայ ազգը, Հայ Առաքելական եկեղեցին:

Գարեգին Ա-ն իր խոսքում կարևորում էր այն միտքը, որ ինչպես Կիլիկիո Կաթողիկոսությունը, այնպես էլ Երուսաղեմի և Կ.Պոլսի պատրիարքությունները, իրենց հնարավորությունների և պայմանների սահմանների մեջ պահելով իրենց ներքին վարչական ծնականությունները, պետք է օժանդակեն հայ եկեղեցու ամբողջության և բարոյական ներգործության զորացմանը՝ չենթարկվելով որևէ քաղաքական խարդավանքի²⁸:

Հարկ է նշել, որ նախընթաց շրջանում Ս. Էջմիածնում ստեղծված պայմանները, փաստորեն, Մայր Աթոռը մեկուսացրել էին հայկական սփյուռքից: Այդ տարիներին Սփյուռքի հոգևոր եկեղեցական, ինչպես և ազգային մշակութային կյանքի կազմակերպման առումով խոշոր աշխատանք կատարեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը:

Զմասնատելով հայ եկեղեցու ընդհանրական դիրքորոշումը՝ այնուհանդերձ նշեմք, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, այնուամենայնիվ, փորձում էր իր գերակայությունը պահպանել թե՛ Խորհրդային Միության տարածքում և թե՛ արտասահմանյան թեմերում:

Թերևս հանգամանքներն արդեն այնպես էին դասավորվել, որ գաղութահայ թեմերին առաջնորդներ ու հովիվներ պիտի մատակարարեին Երուսաղեմի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հոգևոր դպրոցները: Ուստի Ս. Էջմիածինը պարտավոր էր հետամուտ լինել, թե ինչ ոգի և ուղղություն էր իշխում նշված դպրոցներում: Եվ պատահական չէր, որ Ս. Էջմիածինը աշխատում էր թեմերի ղեկավարությունը կենտրոնացնել անկուսակցական առաջնորդների ձեռքում: Առավել ևս, որ Ս. Էջմիածինն այլևս չէր ղեկավարում երկրի կրթամշակութային և քաղաքական ասպարեզները, նրան մնացել էին միայն կրոնաբարոյական խնդիրները²⁹:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ անառարկելի էր Էջմիածնի հեղինակությունն ինչպես Խորհրդային Հայաստանում, այնպես էլ Սփյուռքի հայության մեջ: Ինչպես «Ազգարար»-ն էր գրում. «...Մեզի համար անհուն գուրգուրանքի առարկայ կը դառնան ամենեն աննշան իրերը անգամ որ հայրենիքեն կուզան: Ամեն յաջողութեան լուր, որ կը ստանանք

²⁸ «Էջմիածին», N 7-8, 1944 թ., էջ 9:

²⁹ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938-1955), Գիրք 2, էջ 168-169:

հայրենիքեն, մեր սրտերը կը լեցնէ ուրախութեամբ: Եվ վերջապէս բավական է, որ Էջմիածինը ճկույթը շարժե և լեռներ կրնան տեղահան ըլլալ արտասահմանի հայության մեջ»³⁰:

Հայրենական մեծ պատերազմի ընթացքում երկու աթոռների նոր գործակցության հետևանքով էլ ավելի կարևորվեց հարթել այն խնդիրները, որոնք առաջ էին եկել հասարակական տարբեր միջավայրերում գործող Հայ եկեղեցու կաթողիկոսական աթոռների միջև: Թերևս դրանով էին պայմանավորված հետագա այն բոլոր քայլերը, որոնցով երկու աթոռների գահակալներն էլ փորձում էին հնարավոր ամեն ինչ անել՝ պահպանելու Հայ եկեղեցու միասնականությունը:

Հետագայում, դրա վառ ապացույցն էր Գևորգ Չորեքչյան կաթողիկոսի Կոնդակը, որի մասին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության խմբագրականում նշվում էր. «Մեզ անհուն ուրախութիւն է պատճառում Կոնդակի ընդհանուր մտայնութիւնը, որը սիրոյ և միութեան գաղափարն է, և արտահայտում է ամեն պարբերութեան մեջ, բայց յատկապէս, սրտագին յարաբերութիւնը բոլոր աթոռների հետ և ջանք այդ յարաբերութիւնը դարձնելու անելի սերտ, իրար լրացնող և դէպի նոյն նպատակն ուղղուած, որ Հայաստանեայց եկեղեցու միասնականութիւնն է, համերաշխութիւնը և բարերար ազդեցութիւնը հօտի ամբողջութեան վերայ:

Ս. Հայրապետը անցած ժողովը համարում է իրաւամբ բացառիկ երեւոյթ մեր պատմութեան մեջ, իւր լրիւ կազմով և ներկայացուցչութեամբ բոլոր Աթոռների և եպիսկոպոսութիւնների, հոգեւոր և աշխարհիկ պատգամաւորներով, շեշտելով, մանաւանդ, մեծ Աթոռների գահակալների անձամբ մասնակցութիւնը»³¹:

Այնուհետև, խմբագրականում մասնավոր շեշտադրում է կատարվում այն հանգամանքի վրա, որ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունն ընդունում է Ս. Էջմիածնի գերակայությունը՝ նշելով. «Ընդունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի գերագահ դիրքը, կը կամենայինք, որ ըստ ամենայնի պահպանվէր նրանց պատշաճ յարաբերութիւնը ըստ պաշտօնի և կոչման, ինչպէս այդ գծուեցաւ Սահմանադրութեան մեջ: Միասնականութիւնը չպետք է շփոթել միապետութեան հետ և ոչ էլ հակառակը: Միասնականութիւնը կամենում ենք իրականացած տեսնել գիտակցական փոխադարձ հասկացողութեամբ և յարգանքով կատարուած պարտքերի, նպատակների եւ ձգտումների միութեան մեջ, իրար գորավիզ և նեցուկ լինելու և Աթոռների սերտ գործակցութեան մեջ, իւրաքանչիւրը իր

³⁰ «Ազդարար», 1944–1945 թթ., N 108, էջ 3:

³¹ «Հասկ», 1945 թ., թիվ 7–8, էջ 1:

պարտքի և իրավունքի շրջանում: Մենք՝ Կիլիկիոյ Յայրապետական Աթոռի գահակալ, պատրաստ ենք Մեր կարելին բերել, յավերժացնելու ավելի սերտ, ավելի գիտակցական և միննույն ժամանակ ավելի շրջա-հայեաց հարաբերութիւն Մայր Աթոռի հետ»³²:

Էջմիածնի Գրգևոր բարձրագույն իշխանությունը ձգտում էր պահպանել Յայ եկեղեցու կանոնական և ավանդական կարգերը՝ պահպանելով սահմանադրական սկզբունքները և նախանձախնդիր լինելով Յայ եկեղեցու միասնականության պահպանմանը, ջանալով պահպանել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Ս. Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքությունների, արտասահմանի և երկրի ներքին թեմերի և նրանց առաջնորդների հետ սերտ կապերի ամրապնդմանը:

Պատերազմի տարիներին ընթացքում կաթողիկոսական աթոռների ավելի սերտ և համերաշխ գործակցության զաղափարն առաջնահերթ է եղել Ս. Էջմիածնում և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի կողմից առանց պատասխանի չի մնացել: Դրա արդյունքում Ամենայն Յայոց Կաթողիկոսի ընտրության կանոնադրության մեջ մտավ Կիլիկիո Կաթողիկոսության մասնակցությունը և որ այդպիսի հնարավորություն եղավ իրագործված տեսնել երկու Աթոռների միասնությունը՝ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռը անձամբ մասնակցելով և նախագահելով ընտրական ժողովը³³:

Միասնականության և միության այդպիսի հասկացողությամբ էր, որ առաջարկվում է Յայաստանյայց բոլոր եկեղեցիներում Ամենայն Յայոց Կաթողիկոսի անվան հետ հիշել և մյուս աթոռակալների ամունները, որը ժողովի կողմից միաձայն ընդունվեց: Եվ այդ նույն մտքով էր, որ Կաթողիկոսական Աթոռի՝ Սսից Էջմիածին փոխադրելու հինգ հարյուրամյակը տոնախմբելու առաջարկին ընդառաջ գնալով՝ շեշտվում է նաև Մեծի Տանն Կիլիկիո և մյուս Աթոռների կատարած դերն ազգապահպանության մեջ:

Եվ վերջապես, 1945 թ. Ազգային-եկեղեցական ժողովի և կաթողիկոսական ընտրության ժամանակ ապացույցն էր այն բանի, որ երկու աթոռների համերաշխ գործակցությունը գալիս էր Ս. Էջմիածնից՝ Տ.Տ. Քնորգ Կաթողիկոսի կողմից և աջակից էր Մեծի Տանն Կիլիկիո Աթոռին, երբ առաջարկվեց ձեռնամուխ լինել Կաթողիկոսական Աթոռի՝ Սսից Էջմիածին փոխադրելու հինգ հարյուրամյակի տարեդարձին նվիրելիք գիտական ժողովածուի կազմությանը՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը³⁴:

³² Նույն տեղում, էջ 2:

³³ Նույն տեղում:

³⁴ Նույն տեղում, էջ 3:

Չնայած այն բոլոր ջանքերին, որ գործադրում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, փորձելով իր ուշադրությունը կենտրոնացնել Սփյուռքի թեմերին, այնուհանդերձ սեպը խրված էր, և հաճախակի էր հնչում Մայր Աթոռի գերակայությունը վերացնելու, դրանով Սփյուռքի թեմերը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության տակ տեսնելու հարցը: Ցավոք այս խնդրումները մերթընդմերթ գլուխ էին բարձրացնում՝ սրելով պայքարը երկու նվիրապետական Աթոռների՝ Ս. Էջմիածնի և Կիլիկիո Կաթողիկոսության միջև, ինչը հետագայում բերեց Հայ եկեղեցու միասնականության կորստին:

գ) 1945 Թ. ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ, ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Այժմ սկսվում է Մայր Աթոռի երկրորդ վերակենդանության շրջանը»: Ահա այսպես սկսեց Ամենայն Հայոց կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը վաղուց սպասված Ազգային-եկեղեցական ժողովի բացումը, որը ի վերջո կայացավ 1945 թ. հունիսի 16-22-ը:

Ազգընտիր տեղապահը, դիմելով ներկաներին, կարևորեց Ազգային-եկեղեցական ժողովի կայացումը՝ զուգահեռ անցկացնելով 1441 թ. Կիլիկիայից կաթողիկոսական Աթոռի փոխադրության հետ³⁵:

1945 թ. մայիսի 20-ին Երևանի Ս. Սարգիս եկեղեցում զունարվեց ժողով, որտեղ բազմաթիվ հավատացյալներ էին հավաքվել: Այստեղ զեկուցումով հանդես եկավ Ս. Էջմիածնի ներկայացուցիչ Ռուբեն Ծ. վարդապետը, որը ներկաներին ծանոթացրեց Ս.

Էջմիածնում հունիսի 18-ին զունարվելիք Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորական ընտրությանը և Մայր Աթոռի անելիքներին: Ժողովի ժամանակ, Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցելու նպատակով, պատգամավորներ ընտրվեցին Ստեփան Մալխասյանը, Ավետիք Իսահակյանը, Մարտիրոս Սարյանը և ուրիշներ, ընդամենը՝ 18 պատգամավոր³⁶:

Խորհրդային Միության հաղթանակը և առաջիկա Ազգային-եկեղեցական ժողովը մեծ արձագանք էին գտել ոչ միայն Խորհրդային Հայաստանի, այլև արտասահմանում ապրող հայերի շրջանում:

³⁵ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 304, ք. 4:

³⁶ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 303, ք. 2:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա–ն շնորհավորական հեռագիր է ուղարկում Ի. Ստալինին և Մ. Կալինին՝ հայտնելով իր երախտագիտությունը թույլատրված առաջիկա Ազգային–եկեղեցական ժողովի և կաթողիկոսական ընտրություններ անցկացնելու կապակցությամբ: Մինևույն ժամանակ Գարեգին Ա–ն իր շնորհավորանքն է ուղղում «Մեծ առաջնորդին» ամբողջ ԽՍՀՄ ժողովուրդների տարած հաղթանակի առթիվ³⁷:

Առաջիկա Ազգային–եկեղեցական ժողովին և կաթողիկոսական ընտրությունների աշխատանքներին մասնակցելու, պատգամավորական ընտրություններ անցկացնելու նպատակով Ս. Էջմիածնի կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը դիմում է ԽՍՀՄ տարածքում և արտասահմանում գտնվող թեմերին՝ տեղերում պատգամավորական ընտրություններ անցկացնելու և իրենց ներկայացուցիչներին Ս. Էջմիածին ուղարկելու նպատակով:

Վաղուց սպասված Ազգային–եկեղեցական ժողովին ակտիվորեն արծազանքեցին աշխարհի տարբեր անկյուններից՝ Ս. Էջմիածին հղելով ոչ միայն եկեղեցական ժողովին մասնակցելու իրենց պատրաստականությունը, այլև արտահայտելով իրենց աջակցությունը և երախտագիտությունը Ազգընտիր տեղապահին, որը ամեն հնարավորը արեց՝ Ս. Էջմիածինը պահպանելու համար:

Կաթողիկոսական ընտրությունների կապակցությամբ անգլիկան եկեղեցու հովվապետ Ջեռֆրի արքեպիսկոպոսը, կարևորելով հայ–անգլիական եկեղեցիների բարեկամությունը, Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին ուղղված նամակում նշում էր. «Կը հաւատամ որ այն երջանիկ և եղբայրական յարաբերութիւնը որ գոյութիւն ունէր մեր նախորդներու միջև, կըշարունակուի և կըզօրանայ մեր մէջ, և այն եղբայրակցութիւնը, որ մեր Տիրոջ Փրկչին միջոցաւ իրար կը միացնէ մեր եկեղեցիները, թող միշտ աճի և զարգանայ փոխադարձ հաստատողութեամբ և ծառայութեամբ ի փառս Աստուծոյ, որպէսզի տարածուի Քրիստոսի թագաւորութիւնը երկրիս վրայ և ճշմարիտ խաղաղութիւն և երջանկութիւն իրականանայ ազգերուն մէջ: Հայցելով Ձեր աղօթքները ինձ համար և այն եկեղեցւոյն որուն հովվուապետութեան կոչուած եմ, և միանգամայն աղօթելով առ Աստուած, որ զՁեզ լիովին օրհնէ, Հայոց Ուղղափառ եկեղեցին, Ձեր եպիսկոպոսները, կղերն ու ժողովուրդը»³⁸:

³⁷ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 754, ք. 12:

³⁸ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921–1938), էջ 254–255:

Իսկ Անգլիայի հայության կողմից Մատթեոս արքեպիսկոպոս Ինճեյանը, Ազգընտիր տեղապահին տեղեկացնելով ընտրված պատգամավորների և իր՝ Ս. Էջմիածին գալու ցանկության մասին, գրում էր. «Հակառակ ծերացած և անառողջ ըլլալուս, մեծապես կը փափաքիմ, չորրորդ անգամ ըլլալով, տեսնել նուիրական Հայրենիքնիս և խնկելի էջմիածիննիս:

... Ամէնքս ալ գոհունակութեամբ տեսանք՝ թե որքան ձեռնհասութեամբ վարեցիք Ձեր դժուարին պաշտօնը, ամենադժուարին ժամանակներու մէջ և թէ որքան ճիշտ էր Ձեր բռնած ուղղութիւնը»³⁹:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանը, մեկ անգամ ևս հավաստելով Անթիլիասի և Ս. Էջմիածնի անքակտելիությունը, առաջիններից մեկը եղավ, որ շատ կարճ ժամանակամիջոցում կազմակերպեց Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցող աշխարհիկ և հոգևոր պատգամավորների ընտրությունները և տեղեկացրեց Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին. «Համածայն Ձեր Սրբազնութեան 9 յունուար 1945 թուակիր հեռագրին, որով կը հրահանգէիք եկեղեցական եւ աշխարհիկ պատգամաւորներ ընտրել յառաջիկային գումարուելիք Ազգային-եկեղեցական համագումարին մասնակցելու համար 1941 թ. դրկուած կանոնագրութեան նախատեսած թուով՝ Կիլիկեան թեմի Ազգային ընդհանուր ժողովը իր 13 փետրուարի բացառիկ նիստին մեջ ընտրեց պատգամաւորները...»⁴⁰:

Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցելու համար Լենինականում ընտրվեց 14 պատգամավոր: Թբիլիսիում վիրահայության կողմից ընտրվեց 15 պատգամավոր, որոնց թվում էին պատմաբան Իվան Եմիկուլոյանը, գրողներ Սմբատ Դովլաթյանը, Գարեգին Սրվանձտյանը և Սահակ ավագ քահանա Սահակյանը⁴¹:

Ռումինիայի թեմը առաջնորդական տեղապահ ընտրեց Վազգեն վարդապետ Պալճյանին: Նոր թափ հաղորդվեց ռումինահայ գաղութի հոգևոր, կրթամշակութային և տնտեսական գործունեությանը: Թեմական խորհուրդը առաջնորդի ընտրության առթիվ իր զեկուցագրում նշում է. «Այսպիսի մի առաջնորդի ներկայութիւնը կուժեղացներ ընդհանուր ոգեւորութիւնը, եւ թեմը աւելի լրիւ կը ներկայացուեր յաչս տեղական իշխանութեան...»:

Ռումինիայի թեմական խորհուրդը, կաթողիկոսական ընտրությունների առթիվ Ս. Էջմիածին ուղարկելով առաջնորդական տեղապահ Վազ-

³⁹ Նույն տեղում, էջ 253:

⁴⁰ Նույն տեղում, էջ 167:

⁴¹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 303, ք. 5-11:

զեն վարդապետ Պալճյանին և դոկտոր Արտաշես Տիրացյանին, շնորհակալական նամակ է ուղարկում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մացակ Պապյանին, որտեղ ասվում էր.

«Վստահ կրնանք ըլլալ թե ամբողջ գաղութահայութիւնը մեկ մարդու մեան այսօր ցնծութեան մեջ է և խոր երախտագիտութեամբ ոգելորված, որովհետև շնորհիւ խորհրդային իշխանութեան բարձր օժանդակութեան հնարաւորութիւն կը տրուի մեզ մեր կապը ամրացնել Մայր երկրի և Ս. Էջմիածնի հետ:

Իւր ազգային և եկեղեցական Գերագոյն շահերու պայծառ գիտակցութեամբ և հայրենասիրական ամենաազնիւ ոգով առաջնորդուած, ռումանահայ գաղութի անունով կը մաղթենք Ձեզի՝ խորհրդային Հօրը Հայրենիքի մեծ ու փոքր վարիչներուդ կար և ուժ, և Ձեր բոլոր հայրենաշէն ծրագիրներու՝ կատարյալ յաջողութիւն»⁴²:

Այսպիսով, 1945 թ. հունիսի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հայոց հոգևոր ճեմարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ Ազգային-եկեղեցական ժողովի բացումը, որի օրակարգում շատ հարցեր կային, բայց ամենակարևորը կաթողիկոսի ընտրության հարցն էր: Այս ժողովի բացառիկությունն այն էր, նախ՝ որ խորհրդային իշխանությունները թույլատրել էին եկեղեցու վերագարթոնքը, և երկրորդ՝ այդ ժողովը շատ ներկայացուցչական էր: Ներկա էին պատգամավորներ հայոց եկեղեցու ներքին և արտաքին բոլոր թեմերից: Առաջին անգամ հայոց եկեղեցու պատմության մեջ իր մասնակցությունն էր բերել Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա Հովսեփյան կաթողիկոսը⁴³:

Ժողովին ներկա էին նաև Երուսաղեմի պատրիարք Կյուրեղ Բ-ն, Կոստանդնուպոլսի պատրիարքի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանը, արտասահմանի թեմերից՝ Եգիպտոսի, Ամերիկայի, Արևելյան, Բուլղարիայի, Իրանա-Հնդկաստանի և Թեհրանի, Ռումինիայի և Ատրախանի թեմական ներկայացուցիչներն իրենց թեմերի պատգամավորներով: ԽՍՀ Միության թեմերից՝ Արարատյան, Շիրակի, Վրաստանի, Բաքու-Թուրքեստանի, Հյուսիսային Կովկասի և Նոր Նախիջևանի, Բեսարաբիայի թեմական առաջնորդներն իրենց պատգամավորներով: Ընդամենը 102 պատգամավոր, որոնցից՝ 28 հոգևորական և 74 աշխարհական⁴⁴:

⁴² Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921-1938), Գիրք Ե, էջ 267:

⁴³ Նշանավոր ճեմարանականներ, Պրակ Ա, Գևորգյան հոգևոր ճեմարան (Աստվածաբանական համալսարան), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005, էջ 96:

⁴⁴ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 311, ք. 1-2:

ժողովի նախագահությունում տեղ զբաղեցրին Ազգընտիր տեղապահ Քևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա–ն, Երուսաղեմի պատրիարք Կյուրեղ Բ–ն և Եգիպտոսի թեմի առաջնորդ Մամբրե եպիսկոպոս Սիրունյանը: Հյուրերի թվում էին նաև ԽՍՀՄ կառավարության ներկայացուցիչ, Միության ժողովմխորհին կից կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ Ի.Վ.Պոլյանսկին, այդ խորհրդի անդամ Կ. Յա. Պուգոն: Այստեղ էր նաև ՀԽՍՀ ժողովմխորհին կից հայ լուսավորչական եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Ն. Հովհաննիսյանը:

Ամենայն Հայոց Հայրապետության տեղապահ Քևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Տ. Գարեգին Ա–ի օրհնությունից հետո, ողջույնի խոսքով դիմեց Ազգային–եկեղեցական ժողովի մասնակիցներին՝ շեշտելով, որ «Այս պատմական ժողովը տեղի է ունենում երկու խոշորագույն դեպքերին համընթաց. առաջինը՝ Հայրենական պատերազմի հաղթական ավարտն է, և երկրորդը՝ Ս. Էջմիածնի վերականգնումը: Մեկնաբանելով Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի նշանակությունն ամբողջ աշխարհի խաղաղության վերականգնման համար և մեր ժողովրդի տոկունությունն ու հերոսությունը պայքարի ընթացքում՝ նա նշում է այն կարևոր ու մեծ ծառայության մասին, որ մատուցել է ռուս մեծ ժողովուրդը՝ խաղաղությունն ապահովելու և քաղաքակրթությունը փրկելու գործում: Համուսն հայրենիքի պաշտպանության ծավալած մեծ ու վիթխարի շարժման անտարբեր և անմասն չմնաց նաև հայ ժողովուրդը, ապա շարունակելով Ազգընտիր տեղապահը շեշտում է, որ հայ ժողովուրդը հայրենիքի պաշտպանությանն ի սպաս դրեց իր ֆիզիկական և նյութական ողջ կարողությունը և ապացուցեց, որ ռուս ժողովրդի իսկական բարեկամն է և կապված է նրա հետ անքակտելի կապերով»⁴⁵:

Այնուհետև նշելով Ազգային–եկեղեցական ժողովի պատմական նշանակությունը և Ս. Էջմիածնի վերականգնումն ու այսուհետև նրա կատարելիք դերը հայ ժողովրդի հոգևոր կյանքում՝ Ազգընտիր տեղապահն իր ողջույններն է հղում Ազգային–եկեղեցական ժողովին, Սովետական Միության կառավարության ներկայացուցիչ Ի.Վ. Պոլյանսկուն, Սովետական Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ս.Ն. Հովհաննիսյանին, Մեծի Տանն Կիլիկիո Տ.Տ. Գարեգին Ա–ին, Երուսաղեմի պատրիարք Տ. Կյուրեղ Բ–ին, արտասահմանի և միութենական թեմերի առաջնորդներին և փոխթեմակալներին, ինչպես նաև ժողովրդին և ներկա գտնվողներին:

⁴⁵ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921–1938), Գիրք Ե, էջ 269–270:

Ամենապատիվ տեղապահի բացման խոսքից հետո ներկաներին իր ողջույնի խոսքն է ուղղում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ս. Տ. Գարեգին Ա-ն:

Ս.Տ. Գարեգին Ա-ն, նշելով Ազգային-եկեղեցական ժողովի պատմական նշանակության մասին, հայտարարում է. «Այս օրերը երջանկութեան ու ցնծութեան օրեր էին, քանի որ երկար տարիներ յետոյ հայ ժողովրդի յոյսերն իրականացած ենք տեսնում: Ուրախալի և ոգեւորիչ է, որ աշխարհի ամեն կողմերը ցրուած հայ ժողովրդի ներկայացուցիչներն այսօր մասնակցում են ժողովին, որ նրանք եկել են ոչ միայն իրենց կաթողիկոսն ընտրելու, այլև ս. Էջմիածնին միւթական և բարոյական ուժ տալու: Այս ժողովը մեր եկեղեցու և ժողովրդի ազգային միասնութեան ժողովն է»⁴⁶: Դրվատելով հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումները՝ Վեհափառը իր գոհունակությունն է արտահայտում Սովետական Հայաստանի բարգավաճման ու առաջընթացի համար և օրհնելով Ազգային-եկեղեցական ժողովը՝ հաջողություն մաղթում նրա ընթացքին:

Իրենց ողջույնի խոսքն են ուղղում ներկաներին Սովետական Միության կառավարության ներկայացուցիչ, ՍՍՄ ժողկոմսովետին կից կրոնի պաշտամունքի գործերի խորհրդի նախագահ Ի. Վ. Պոլյանսկին, Սովետական Հայաստանի կառավարության ներկայացուցիչ, ՀՍՍՌ ժողկոմսովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Ն. Հովհաննիսյանը, ովքեր, նշելով ժողովի կարևորությունն ու դերը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, հաջողություն են ցանկանում նրա հետագա աշխատանքներին:

Ի. Վ. Պոլյանսկին իր ճառը սկսում է պատմական ակնարկով՝ նշելով հայ ժողովրդի կյանքում եկեղեցու ունեցած կարևոր դերակատարման մասին, ապա անդրադառնում ՍՍՌ ժողկոմսովետին կից և Հայ եկեղեցու կրոնի պաշտամունքի գործերի խորհրդի կարևորությանը և նրա կատարած աշխատանքներին, որտեղ ասվում էր. «Հայ եկեղեցու մեծարգո գործիչներ: ՍՍՌ Միության կառավարության անունից և նրա լիազորությանը դիմում են Ձեզ՝ ողջունելով և ցանկանալով ձեր աշխատանքին հաջողություն:

Հայ եկեղեցու օրրան Մայր Էջմիածնում, որը սրբություն է բոլոր հավատացյալների համար, Դուք հավաքվել եք բարձրապատիվ հովվապետներ, հոգևոր հովիվներ, աշխարհականներ, ձեզանով ներկայացնելով ամբողջ հայ եկեղեցին, որը հայ ժողովրդի գոյության ողջ ընթաց-

⁴⁶ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 311, ք. 3-4:

քում, այն ժողովրդի, որը անցյալում կրել է շատ ծախսորդություններ, տառապանքներ, զրկանքներ, մշտապես աջակցել է ժողովրդի ազգային ինքնության պահպանմանը...»⁴⁷:

Ի. Վ. Պոլյանսկու և Ս. Ն. Յովհաննիսյանի ելույթներից հետո տեղապահը ժողովին առաջարկեց ողջույնի հեռագիր ուղարկել ԽՍՀ Միության ժողովմխորիի նախագահ Ի. Ստալինին, որտեղ մասնավորապես ասված էր.. «Այսօր մենք՝ սուրբ էջմիածնի դարավոր կամարների տակ հաւաքուած Խորհրդային Միութեան և արտասահմանի հավատացեալ հայութեան պատգամաւորներս, սկսում ենք մեր աշխատանքները՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան և եկեղեցական մի շարք խնդիրների կարգաւորութեան համար: Մենք պարզ գիտակցում ենք, որ առանց Ձեր բարեացակամ վերաբերմունքի անկարելի կլինէր Հայ եկեղեցական կեանքի համար առաջնակարգ և պատմական նշանակութիւն ունեցող այս իրադարձութիւնը: Եվ մեզ, Սովետական Հայաստանի և Սփյուռքի հայութեան պատգամաւորներիս, առաջին զգացմունքը, որ համակել է, այդ երախտագիտական և շնորհակալական զգացմունքն է հանդէպ Ձեզ, հայ ժողովրդի մեծագույն բարեկամին: Ձեր շնորհիւ իրականացաւ հայ ժողովուրդի ազատագրումը և հայ պետականութեան վերածնունդը, և մեր անխախտ հաւատն է, որ Ձեր օրով պիտի իրականանան Սփյուռքի թափառական և հալածական հայութեան հայրենական յոյսերը»⁴⁸:

Հեռագրի տեքստն ընթերցելուց հետո ընտրվեցին ժողովի ատենապետներ, որոնց թվում էին՝ Ավետիք Իսահակյանը, Ստեփանոս Մալխասյանը, Ջանիկ Չաքըրին, իսկ մանդատային հանձնաժողովի կազմում ընտրվեցին Բեյրութի առաջնորդ Արտավազդ արքեպիսկոպոսը, Ռումինիայի առաջնորդ Վազգեն վարդապետը և պատգամավորներ Արմենակ Աղաջանյանն ու Սեդրակ Թարյանը:

Ազգային-եկեղեցական ժողովի երկրորդ նիստի ժամանակ Ազգընտիր տեղապահը զեկուցեց Մայր Աթոռի վերջին չորս պատերազմական տարիների գործունեության մասին:

Գևորգ Չորեքչյանը, անդրադառնալով Ս. էջմիածնի քառամյա գործունեությանը, հանգամանորեն նշում է. «Դեռևս 1941 թ. ապրիլի 10-ին էջմիածնում զումարվեց Ազգային-եկեղեցական ժողով՝ Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրելու համար: Սակայն կաթողիկոսական ընտրությունն ու օծումը հետաձգվեց պատեհ ժամանակի, որովհետև պատերազմի պատճառով արտասահմանի և միութենական հանրապետությունների

⁴⁷ «Սովետական Հայաստան», հունիս 17, 1945 թ., N 121, էջ 2:

⁴⁸ Նույն տեղում, գ. 754, p. 2:

պատգամավորներից շատերը չէին կարողացել ներկա գտնվել Ազգային-եկեղեցական ժողովին: Հայ եկեղեցու կանոնների համաձայն՝ բավարար չէր նաև եպիսկոպոսների թիվը, որոնք պետք է օժտին Հայոց Հայրապետին:

Այսօր, երբ Հայրենական մեծ պատերազմը փառավոր հաղթանակով ավարտվեց և եվրոպայում խաղաղություն հաստատվեց, Ս. Էջմիածնի Բարձրագույն հոգևոր իշխանությունը հնարավոր գտավ խորհրդային իշխանության համաձայնությունն ստանալ և Ազգային-եկեղեցական ժողով հրավիրել Հայոց Հայրապետի ընտրությունը կատարելու և իր քառամյա գործունեության հաշիվն ու ապագայի ծրագրերը ներկայացնելու նպատակով:

Ապա, Ազգընտիր տեղապահը ներկայացնում է Ս. Էջմիածնի գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին.

Ա) Ս. ԷՋՄԻԱԾՆԸ ԵՒ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1941 թ. ապրիլի 10-ին գումարված Ազգային-եկեղեցական ժողովը նոր էր վերջացել, երբ գերմանական հորդաները ներխուժեցին մեր երկիր: Ս. Էջմիածինը չէր կարող անտարբեր լինել Հայրենիքին սպառնացող վտանգին: Նա անմիջապես հրահանգեց արտասահմանի և միութենական բոլոր թեմերին մաղթանքներ կատարել, ջերմագին աղօթքներ վեր առաքել Բարձրյալին, Կարմիր բանակի զենքն օրհնել և հաջողություն մաղթել:

Պատերազմի հաղթական ելքն ապահովելու համար Ս. Էջմիածինը հայրենասիրական կոչ ուղղեց՝ ամենուրեք հայ ժողովրդի սիրտը հայրենասիրական զգացմունքներով վառելու, հայությանը ոտքի հանելու, իր գույքն ու կամքը, իր մտավոր և ֆիզիկական աշխատանքը և իր կյանքը տրամադրելու Հայրենիքի պաշտպանությանը:

Ս. Էջմիածնի ծայրը լսեց հայ հոգևորականությունը և իր հոտին ուղղած հայրենասիրական հուզիչ քարոզներով ոգևորեց հայ հավատացյալներին Հայրենիքի պաշտպանության վեհ գաղափարով:

Հայ ժողովրդի պայքարող ոգին ապրում է նաև այսօր: Հայ ժողովուրդը չխնայեց իր սիրասուն զավակներին ուղարկել Հայրենական պատերազմի դաշտ: Պարծանքով պիտի շեշտեն, որ հայ զինվորը պատվով կատարեց հայրենի ժողովրդի սրբազան պատգամը: Իր անձնվեր հերոսությամբ Հայրենական պատերազմում հայ մարտիկը հայ ժողովրդի մարտական ոգու նոր ու փայլուն օրինակներ հանդես բերեց և հաղթանակի փառքով պսակեց հարազատ ժողովրդին և իրեն: Անձնուրացության և

ջերմ հայրենասիրության վեհ զգացումներով տոգորված բազմաթիվ հայ մարտիկներ հերոսացան, նրանց անունները զարդարեցին հայոց պատմության էջերը: Հայ ժողովրդի սիրելի մարտիկները արժանացան ամենամեծ պատվի՝ «Մեծ Առաջնորդի» զովքին և պարգևատրվեցին:

Եթե Հայրենական մեծ պատերազմում հայությունը աչքի ընկավ իր անձնագոհությամբ, ապա արտասահմանի հայությունն էլ նվեր բերեց Հայրենական պատերազմի հաջողությանը իր խնայողություններն ու քրտնաջան աշխատանքի պտուղները: Արտասահմանի հայության և Ս. Էջմիածնի նվիրատվությունների շնորհիվ պատրաստվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարայունը, որոնք երդվյալ ղեկավար քաջամարտիկներով անձնվիրաբար կռվեցին թշնամու դեմ, ջախջախեցին ու դուրս քշեցին նրան մեր հարազատ հողից:

Բ) Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԿԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ամենայն Հայոց հայրապետները, ղեկավարվելով Ս. Էջմիածնի հնավանդ սովորությամբ, Սփյուռքի հայությանն այցելության էին ուղարկում նվիրակներ, որոնք տանում էին ս. Մյուռոն և Հայրապետի ողջույնը ի մխիթարություն հայ ժողովրդի: 1941 թվականի ապրիլի 10-ին Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովը որոշել էր «Յանձնարարել Գերագույն հոգեւոր խորհրդին պարբերաբար ուղարկել լիազոր ներկայացուցիչներ միութենական և արտասահմանեան թեմեր՝ ծանօթանալու նոցա իրական վիճակին, հոգեւոր իշխանութեան, թեմերի և Մայր Աթոռի մէջ գոյութիւն ունեցող կապը առաւել խորացնելու և սերտացնելու նպատակով, և այս բոլորի մասին զեկուցանելու Ս. Էջմիածնի Հոգեւոր բարձր իշխանութեան»:

Վերոհիշյալից ելնելով՝ որպես Ամենայն Հայոց Հայրապետության տեղապահ, Մերձավոր Արևելքի թեմերին, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության և Ս. Երուսաղեմի պատրիարքության այցելություն տալու նպատակով գործուղեցինք Ս. Էջմիածնի գիտական քարտուղար, պրոֆ. Աշոտ Աբրահամյանին, որպես Ս. Էջմիածնի լիազոր ներկայացուցիչ՝ տալով նրան որպես անձնական քարտուղար և խորհրդակից, ուսուցիչ Անուշավան Տեր-Գրիգորյանին...

Գ) ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայ եկեղեցու սահմանադրությունը անհրաժեշտություն է: Մեր թեմերում բազմաթիվ կանոնադրություններ կան, որոնց մեջ շատերը, տեղական պայմաններին հարմարեցնելու նպատակով, կազմված են այնպես,

որ խախտված են Հայ եկեղեցու սահմանադրության հիմնական սկզբունքները, թուլացած են Ս. Էջմիածնի և թեմի կապը, սահմանափակված են Ամենայն Հայոց Հայրապետի իրավունքները և այլն...

Դ) ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Գերագույն հոգևոր խորհուրդը 1932 թ. Ազգային-եկեղեցական ժողովին համառոտ զեկուցում էր ներկայացրել Հայ եկեղեցու բարեկարգության խնդրի մասին: Ազգային-եկեղեցական ժողովը որոշեց հիշյալ զեկուցումը տրամադրել բոլոր թեմերի թեմական ժողովների քննարկմանը, լսել մամուլում արտահայտված տեսակետները, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի և Երուսաղեմի ու Կ. Պոլսի պատրիարքների կարծիքները և ապա Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ գումարվելիք Գերագույն հոգևոր ժողովում մշակել և արդյունքը հայտարարել Հայրապետական կոնգրակով: Սակայն այս խնդրով անցյալ Ազգային-եկեղեցական ժողովը հնարավորություն չէր ունեցել զբաղվելու: Այս ժողովին է մնում հարցի տնօրինությունը՝ կարճել այն կամ ընթացք տալ արժարժված խնդրին:

Ե) ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՃԱԿԸ

Արտասահմանում մենք ունենք Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, Ս. Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքություններն ու 13 թեմ, միութենական երկրներում՝ վեց թեմ: Արտասահմանի և միութենական թեմերի նկարագրերը...

Ձ) Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՀՈԳԵԻՈՐ ԾԵՄԱՐԱՆ. Ս. ԷԶՄԻԱԾԻՆԸ

Որպես համայն հայության կենտրոն, այն պիտի ունենա բավարար թվով կուսակրոն հոգևորականություն և քահանայություն: Հոգևոր դաս պատրաստող հաստատությունը Մայր Աթոռի հոգևոր ճեմարանն էր դառնալու, որը դադարել էր գոյություն ունենալ 1917 թվականին, ինչի հետևանքով մեծ կարիք էր զգացվում կուսակրոն հոգևորականության և թե քահանայության, մանավանդ միութենական ներքին թեմերում և Մայր Աթոռում:

Է) Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԸ

Վերակառուցվող Էջմիածնի համար տպարանը ամենակարևոր հաստատություններից մեկն է: Եկեղեցական գրքերի տպագրության կարիքը

վաղուց զգացվում էր, իսկ այժմ առավել ևս, երբ հետզհետե նոր կարիքներ են ավելանում, նոր եկեղեցիների և մանավանդ հոգևոր ճեմարանի բացմամբ, որ հատուկ ձեռնարկների է կարոտ: Տպարանը պետք է նաև դյուրացնի և կանոնավորի «Էջմիածին» ամսագրի հրատարակությունը իր ժամանակին: Հիշատակված հանգամանքներն ինքնին զգացնել են տալիս տպարանի կազմակերպման արագացումը:

Ազգընտիր տեղապահ Գևորգ Չորեքչյանը Ազգային-եկեղեցական ժողովում իր ներկայացրած զեկույցում մանրամասն անդրադարձավ նաև ստորև նշված դրույթներին.

- ՄԵՐ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ
- Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ
- Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԲԱՐՁՐ ՀՈԳԵԻՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐԱԾ ԳԻԾԸ
- ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՀԱՐՑԸ
- ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ
- ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԺՈՂՈՎԻՆ
 - ա) Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ
 - բ) ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՈՒ ՓՈԽԱՂՈՒԹՅԱՆ 500-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԸ»⁴⁹:

Այնուհետև, քննարկվեցին Մայր Աթոռի պահպանության և հոգևոր ճեմարանի մատենադարանը եկեղեցական, կրոնական և աստվածաբանական գրականությամբ հարստացնելու հարցերը:

1945 թ. Դունիսի 16--22-ը Էջմիածնում շարունակվում էին Հայ եկեղեցու՝ Ազգային-եկեղեցական ժողովի աշխատանքները: Եկեղեցական ժողովը լսեց ու միաձայն հավանություն տվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի զեկույցմանը Հայրենական մեծ պատերազմի օրերին Հայ եկեղեցու գործունեության մասին: Եկեղեցական ժողովը լսեց ու քննարկեց նաև մի շարք այլ եկեղեցական հարցեր⁵⁰:

Ազգային-եկեղեցական ժողովի երկրորդ նիստը կարևորվեց մի շատ կարևոր հարցի՝ «Հայկական հողերի վերադարձի» մասին ելույթով, որի պաշտպանությամբ հանդես եկավ Ստալինի վաղեմի բարեկամ, Քենտրբերյան տաճարի վանահայր Հյուլեթ Ջոնսոնը:

Անգլիկան եկեղեցու վանահայրը, որը միաժամանակ ԽՍՀՄ-ին օգնություն ցույց տվող անգլիական կոմիտեի նախագահն էր և ԽՍՀՄ-ի հետ Լոնդոնի մշակութային կապերի փոխնախագահը, անձնական

⁴⁹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 335, թ. 1--11:

⁵⁰ «Սովետական Հայաստան», 24 հունիս, 1945 թ., N 126, էջ 4:

համակրանք ուներ Ստալինի նկատմամբ և բազմիցս էր արտահայտել իր դիրքորոշումը դեպի խորհրդային Միությունը՝ պաշտպանելով նրա շահերը: Այդ էր պատճառը, որ Անգլիայում նրան «Կարմիր վանահայր» էին կոչում:

Պատերազմի տարիներին խորհրդաթուրքական հարաբերությունները բավականին սրվել էին, և 1945 թվականի հունիսին Մոսկվայում թուրքիայի դեսպան Սելիմ Սարպերի հետ տեղի ունեցած բանակցությունների ժամանակ ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովոմ Վ. Մոլոտովը թուրքիային ներկայացրեց տարածքային պահանջներ: Որպեսզի այս քայլը ԽՍՀՄ-ի համար չդիտվեր որպես ագրեսիա, անհրաժեշտ էր, որ հայերը հենց իրենք բարձրացնեին իրենց հողերի վերադարձի հարցը: Նամանավանդ Գևորգ Չորեքչյանը Ստալինի հետ հանդիպման ժամանակ արդեն իսկ խոսել էր հայկական հողերը վերադարձնելու մասին՝ ակնկալելով ԽՍՀՄ-ի միջամտությունը՝ որպես թուրքիային հակադիր կողմ:

Ինչևիցե, ԽՍՀՄ ղեկավարությունը, ելնելով իր քաղաքական շահերից, հայերին մղում էր դեպի ազգային այնպիսի մի հարցի արժարժանը, որը անընդհատության մեջ էր իր հրատապությամբ: Ազգային-եկեղեցական ժողովն էլ հենց այդպիսի հարմար մի առիթ էր, որտեղ շատ ավելի լավ կլիներ խոսել այդ խնդրի մասին և նրանց պաշտպաներ արտասահմանյան որևէ երկրի ազդեցիկ մի գործիչ: Ահա այդ գործիչն էլ եղավ Քենտրբերյան տաճարի վանահայր Դ. Ջոնսոնը, որը խորհրդային կառավարության և անձամբ Ստալինի կողմից հրավիրվել էր Մոսկվա: 1945 թվականի հունիսի 6-ին Դ. Ջոնսոնի ղեկավարած պատվիրակությունը ժամանեց Լենինգրադ, ապա Մոսկվա: Մոսկվայում տեղեկանալով հայ եկեղեցու Ազգային-եկեղեցական ժողովի մասին՝ Դ. Ջոնսոնը ցանկություն հայտնեց մասնակցելու ժողովին և հունիսի 14-ին ժամանեց Երևան:

Քենտրբերյան տաճարի վանահայրն իր խոսքում ասաց. «Սրբազան հայրեր ի Քրիստոս և քրիստոնյա եղբայրներ: Այս խիստ պատմական պահին, այս փառավոր ու մեծ եկեղեցու զարթոնքի առիթով տեսա վերականգնումը այս երկրի ճարտար արվեստի և կրթության, հիմա էլ տեսնում եմ այս եկեղեցու վերազարթնումը:

Քսանվեց տարիներից ի վեր այս երկիրը հառաջադիմում է. խորհրդային Միությունը շատ բան պետք է շահի եկեղեցու վերականգնումով:

Չեզ վստահեցնում եմ, որ մեր երկիրը շատ մեծ հետաքրքրությամբ հետևում է այս շարժմանը: Անգլիայի մեջ չպիտի գտնվի մի եպիսկոպոս, որը չուզենար ներկա լինել այս պատմական պահին»:

Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը, շնորհակալություն հայտնելով Զ. Ջոնսոնին, հայտարարեց, որ նրան կմատուցվի նվեր, որը նրան միշտ կհիշեցնի Ս. Էջմիածինը:

Հունիսի 22–ին՝ վեցերորդ նիստում, հայտարարվեց ժողովի օրակարգը.

« 1) Եկեղեցական սահմանադրության քննություն ու վավերացում,

2) Ս. Էջմիածնի պահպանման բյուջեն և նրա ընդունումն ու հաստատումը,

3) Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությունը»⁵¹:

Որոշվեց այդ նույն օրը՝ երեկոյան նիստում, անցկացնել Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրություն: Այդ առիթով «Հուսարբեր»-ը գրեց. «Այս հանդիսավոր ընտրությունը, զոր Ստալինը ուզեց, որ այս ձևով տեղի ունենա, նախաբայլ մը կը նկատուի իրագործելու համար համահայկական միութիւնը, որ Մերձավոր Արևելքի մեջ Ստալինի քաղաքականության պիտի ծառայէ: Հայ Ծայրագույն կրօնապետին ընտրութիւնը կը նմանի Մոսկվայի պատրիարքին ընտրութեան...

Հայոց կրօնական համաժողովին անդամները այս հավաքոյթի առիթն պիտի օգտվեն ամբողջ աշխարհի հայոց կացութեան հետ առնչութիւն ունեցող կարգ մը խնդիրներ քննելու համար»⁵²:

Հայ եկեղեցու կանոնների համաձայն՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության նիստը տեղի ունեցավ Մայր տաճարում հունիսի 23–ին, ժամը 15.30–ին: Պատգամավորների ընդհանուր թիվը կազմում էր 111 մարդ: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի կարգադրությամբ Մայր տաճարի դռները փակվեցին: Եզիպտոսի առաջնորդ, գերաշնորհ Մամբրե եպիսկոպոս Սիրունյանը սկսեց նախընտրական աղոթքը և սաղմոսերգությունը: Այնուհետև ընթերցվեց երդման թուղթը: Դրանից հետո յուրաքանչյուր պատգամավոր մոտենում էր նախագահության սեղանին և ստանում քվեարկության թերթիկը, որի վրա պետք է գրվեր մեկ թեկնածուի անուն–ազգանունը և իջեցվեր քվեատուփի մեջ: Այս ձևով բոլոր պատգամավորները կատարեցին իրենց պարտքը:

Նախագահող Կիլիկիո կաթողիկոսի կարգադրությամբ բացվեց քվեատուփը, և սկսվեց հաշվարկը: Ժամը 16.45–ին Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա–ն ներկա գտնվողներին հայտնեց, որ 111 պատգամավորներից 110 ձայնով Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանն ընտրվել է Ամենայն Հայոց կաթողիկոս: Ժողովի պատգամավորները միաձայն Լուսավորչի

⁵¹ «Էջմիածին», 1945 թ., N 6–7, էջ 35:

⁵² «Հուսարբեր», 1945 թ., N 77, էջ 1:

գահի արժանավոր գահակալ են ընտրում Գևորգ Զ Ամենայն Հայոց կաթողիկոսին (1945–1954):

Հունիսի 23–ին Էջմիածնի Մայր տաճարում հանդիսավոր պատարագով տեղի ունեցավ Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոս Գևորգ Զ–ի օծման արարողակարգը:

Իսկ հունիսի 25–ին տեղի ունեցած յոթերորդ՝ վերջին նիստի ժամանակ, նորընտիր կաթողիկոս Գևորգ Զ–ն առաջարկեց հեռագիր հղել Ի. Ստալինին, որտեղ գրվեց. «Հայաստանյայց եկեղեցու Համազգային ժողովի պատգամաւորներս, ավարտելով մեր աշխատանքները, յաճույքն ու պատիվն ունենք յայտնելու Ձեզ մեր սրտագին երախտագիտութիւնը: Սովետական Միութեան մեջ տրված դյուրութիւններով մենք հնարավորութիւն ունեցանք կատարյալ համերաշխութեամբ և միաձայնութեամբ ընտրելու Ամենայն Հայոց Պատրիարք–Կաթողիկոս Տեր Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին»:

Իսկ վերջում ասվում էր. «Մենք մեծ հույս ունենք, որ Սովետական Միության պետական և քաղաքագիտական իմաստությունը կգտնի նաև միջոց ու ճանապարհ վերացնելու այն անարդարությունը, որին ենթարկվեց մեր ժողովուրդը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում»⁵³:

Անշուշտ, այս ընտրությունները սովորական չէին, և պատահական չէին ողջ հայության ջերմ արծազանքները, որ այդ օրերը կոչեցին որպես «Հուլիսի օրեր»:

«Յուսաբեր»–ը այդ առիթով գրեց. «Գևորգ Չորեքչյանի ընտրությունը՝ պարզ, սովորական ընտրութիւն մը չեղավ աս, այլ հանդիսաւոր և քիչ անգամ պատահած ասկէ առաջ: Հակառակ պատերազմի օրերուն և դժուարութիւններուն, խորհրդային իշխանութեանց և դաշնակից պետութեանց բարեհաճ օժանդակութեամբ, կարելի եղաւ Էջմիածին համախմբել աշխարհի բովանդակ հայութեան ընտրեալ ու իրաւասու պատուիրակները, հայ ժողովուրդի հոգեւոր պետը ընտրելու և յարակից կենսական կարգադրութիւններն ընելու համար...»⁵⁴:

Իսկ «Սիոն» ամսագիրը, մկարագրելով կաթողիկոսական ընտրությունները ամենայն մանրամասնությամբ, գրում էր. «Մայր Տաճարի բոլոր զանգերը սկսւան հնչել, վարագուրուած սեղանները բացուեցան, ջահերը վառուեցան և եկեղեցականները Իջման Սեղանի շուրջ խմբուած, սկսան երգել «Էջմիածին ի Զօր!»: Նոյն ատեն Վեհափառին մատու-

⁵³ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), Գիրք Զ, էջ 290:

⁵⁴ «Յուսաբեր», 1945, N 77, էջ 1:

ցուեցան կաթողիկոսական գավազանը և ձեռաց խաչը: Ամբողջ երգեցողութեան ընթացքին բոլոր ներկաները անդիմադրելի յուզումով մը համակուած կարտասուէին»⁵⁵:

Այսպիսով, հայոց եկեղեցին արժանացավ վաղուց սպասված կաթողիկոսին, Ո՞վ, ի մի բերելով իր առջև ծառայած բոլոր հրատապ խնդիրները, Ազգային-եկեղեցական ժողովի հենց սկզբում իր բացման խոսքը սկսեց այսպես. «Այժմ սկսվում է Մայր Աթոռի երկրորդ վերակենդանութեան շրջանը», ապա ավելացրեց. «Այս Ազգային-եկեղեցական ժողովի վերայ պարտականութիւն կա ըմբռնելու պահը և օգտագործելու այն»⁵⁶:

Հայ Առաքելական եկեղեցու հովվապետը իր ընտրութեան կապակցութեամբ բազմաթիվ շնորհավորական հեռագրեր ու նամակներ ստացավ աշխարհի տարբեր անկյուններից, որոնց մեջ արտահայտված էին հավատի ու վստահութեան մեծ հույսեր դէպի Ս. Էջմիածինն ու նորընտիր կաթողիկոսը:

Ազգային-եկեղեցական ժողովը և նորընտիր կաթողիկոս Գևորգ Չորեքչանը, օգտագործելով ընծեռված առիթը, հանդես եկավ սեփական ժողովրդի անունից՝ պահանջելով վերադարձնել հայ ժողովրդի կորցրած հողերը: Նորից բարձր մակարդակով առաջ քաշվեց «Հայոց հարցը» և կրկին հայտնվեց օտարների ձեռքում, որոնց միակ նպատակն էր շահարկել այն իրենց քաղաքական նպատակների համար: Այս անգամ «Հայոց հարցը» հայտնվեց Խորհրդային Միության ձեռքում, որի լուծումը պետք է ներկայացներ Ի.Ստալինը պատերազմում հաղթողների Պոտսդամի խաղաղութեան միջազգային կոնֆերանսում:

Ինչպես վերը նշեցինք, «Հայոց հարցի» պաշտպանութեամբ Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցում էր Քենտրբերյան տաճարի վանահայր Հ. Ջոնսոնը, որը հունիսի 24-ին՝ Երևանից մեկնելուց առաջ, հանդիպում կազմակերպեց մամուլի գործիչների հետ: Մամուլի ասուլիսին ներկա էին խորհրդային մամուլի ներկայացուցիչներ, ինչպես նաև եկեղեցական ժողովին մասնակցող արտասահմանյան հայկական թերթերի թղթակիցներ: Հանդիպմանը ներկա էր նաև դոկտոր Ջոնսոնին ուղեկցող, Օքսֆորդի համալսարանի դասախոս, դոցենտ պարոն Ա. Դայլը:

Դոկտոր Ջոնսոնը թերթերի թղթակիցներին հաղորդեց խորհրդային Հայաստանից ստացած իր տպավորությունները: Իսկ «Լրաբեր» թերթի խմբագիր Պատրիկ Սեյլանի այն հարցին, թե նա ինչպես է վերաբերվում աներկակահայ ազգային խորհրդի կողմից ընդունված պաշտոնական

⁵⁵ «Միոն», մայիս-հունիս-հուլիս-օգոստոս, 1945, էջ 78:

⁵⁶ «Էջմիածին», հունիս-հուլիս, 1945, էջ 8:

հայտարարությանը հայկական հողերը վերադարձնելու խնդրին, Գ. Ջոնսոնը պատասխանեց. «Ես ամբողջությամբ, ի սրտե համաձայն եմ, որ Թուրքիայի կողմից զավթված մարզերը պետք է, որքան հնարավոր է շուտ վերադարձվեն Հայաստանին...

Թուրքիան անհավատալի դաժանությամբ ոչնչացնում էր հայ բնակչությանը: Առաջին համաշխարհային պատերազմից հետո հաղթող պետությունները հայտնեցին, որ արդարությունը պահանջում է վերադարձնել այդ մարզերը նրանց օրինական տերերին: Այն, ինչ գրանցվել է այն ժամանակ, պետք է իրագործվի այսօր: Ես ողջունում եմ հայտարարության հրապարակման փաստը և կարծում եմ, որ դրա ի հայտ գալը ճիշտ ժամանակին է»⁵⁷:

Թերևս նշենք, որ դոկտոր Ջոնսոնի հայտնած կարծիքն արտահայտում էր միլիոնավոր մարդկանց մտքերը, որով աշխարհին հայտնի դարձավ, որ Հայաստանը տարածքային պահանջ ունի Թուրքիայից:

Նորընտիր Վեհափառ Հայրապետը իր անունով նամակներ էր ստանում հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներից, որոնք մտահոգված էին վերոհիշյալ խնդրով և դիմում էին իրեն՝ մեծ տերությունների առջև հարց բարձրացնելու խնդրանքով: Նախկին թուրքահայ Մաղաք Փափազյանն իր նամակում գրում էր. «Ներեցեք և թույլ տվեք հարցնելու ամեն մի հայի շատ հուզող մի հարց, թե արդյո՞ք Ամենայն Հայոց Նորընտիր Կաթողիկոսը՝ Գևորգ 6-ը, մտադրություն չունի՞ դիմելու երեք մեծ տերությունների ղեկավարների խորհրդակցության, Թրքահայաստանի թրքական տեռորից փախած, օտար երկրներում պանդխտության մեջ գտնվող, հայության հայրենիք՝ Սովետական Հայաստանի վերադարձի հնարավորություն ստեղծելու խնդիրը, երեք մեծ տերությունների ղեկավարների խորհրդակցությունում քննարկության ենթարկելու և դրական իմաստով լուծելու համար»⁵⁸:

Եկեղեցու նկատմամբ վերաբերմունքի փոփոխության և նրա համղեպ ցուցաբերած անաչառ վերաբերմունքի դրսևորումներն այնքան ակնհայտ էին դարձել, որ եկեղեցու և եկեղեցականների դեմ բռնաճնշումներ և հալածանքներ ծավալող երբեմնի իշխանությունները մի սեղանի շուրջ էին նստում եկեղեցականների հետ, քննարկում եկեղեցուն կատարվելիք բարեփոխումները և հետագա անելիքները: Թերևս այդ փաստն է վկայում Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցելու նպատակով հորհրդային Հայաստան ժամանած պատգամավորների ընդունելու-

⁵⁷ "Коммунист", 1945 г. N 127, июнь 26, ст. 2.

⁵⁸ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), Գիրք 2, էջ 293:

թյունը Հայկական ՍՍՌ ժողկոմսովետում: Հանդիպումը կայացավ հունիսի 26-ին, որտեղ հայկական գաղութներից էջմիածին ժամանած հոգևոր և աշխարհիկ հյուրերին ընդունեց ժողկոմսովետի նախագահի տեղակալ Ս.Կ.Կարապետյանը: Ընդունելության ժամանակ ներկա էին մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ: Ընդունելության ժամանակ ելույթներ ունեցան ինչպես արտասահմանից եկած հյուրերը, այնպես էլ Հայկական ՍՍՌ-ի Գերագույն սովետի նախագահ Ս. Սահակյանը, ժողկոմսովետի նախագահի տեղակալ Հ. Մարջանյանը և մի շարք գերատեսչությունների անդամներ: Պատգամավորներն ու հյուրերը բազմաթիվ հարցեր շոշափեցին, ինչպես Սովետական Հայաստանին, այնպես էլ արտասահմանի հայ գաղութներին առնչվող⁵⁹:

Այս ամենը կրկին վկայում է, որ հասարակական փոփոխություններն իրենց հետ բերում են նաև մի շարք գաղափարական փոփոխություններ, որոնց ազդակներից մեկն էլ ազգային-եկեղեցական ժողովի գումարումն էր «Երկաթյա վարագույրի» հետևում:

Եվրոպական ու գործունյա Ամենայն հայոց կաթողիկոսն անմիջապես լծվեց գործի և ի պաշտոնե հանդես եկավ դիմումով՝ Արևմտյան Հայաստանի հայկական հողերը վերադարձնելու խնդրով: Գևորգ Զ Չորեքչյանը իր դիմումում մասնավորապես նշում էր. «Հայ եկեղեցու պետերը՝ կաթողիկոսներն ու պատրիարքները, դարերի ընթացքում, հայ ժողովրդի ներկայացուցիչներն են հանդիսացել պետութունների առաջ և նորաբաղձանքների ու տառապանքների, խնդիրների ու պահանջների արտահայտիչները:

Այս պատմական մոմենտին, երբ դեմոկրատ և ազգասեր մեծ պետությունները՝ Խորհրդային Միությունը, Մեծ Բրիտանիան և Միացյալ Նահանգները, հաղթանակ տարան չարի և բռնութեան՝ ֆաշիզմի և նացիզմի վերայ, երբ լուծվում են ժողովուրդների գոյութեան հարցերը՝ Թիւրքիայից վտարուած, թափառաշրջիկ հայ ժողովուրդը ամենայն իրաւունքով դնում է իր արիւնոտ հարցը մեծ պետութիւններիդ արդարութեան առաջ:

Մենք՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ Չորեքչյան, հաւատարիմ մեր ժողովրդապաշտպան տրադիցիաներին, սրբազան պարտք ունենք՝ ի սփյուռս աշխարհի ցրուած, դժբախտ հայ ժողովրդի դատը ներկայացնելու Ձեզ, խնդրելով նորա արդար լուծումը, մանաւանդ թե՛ այդ իմաստով բազմաթիվ դիմումներ ենք ստացել աշխարհի ամեն կողմը ցրուած հայերի կողմից...»⁶⁰:

⁵⁹ «Սովետական Հայաստան», 1945 թ., հունիս 27, N 128, էջ 1:

⁶⁰ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), Գիրք 2, էջ 300:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությամբ և եկեղեցական համագումարի հետագա որոշումներով Հայ եկեղեցին, որի գործելու ազատությունը տրվում էր երկրի օրենքների շրջանագծի մեջ, այսպիսով, հնարավորություն ունեցավ իր պատմական դերը կատարելու հայ ժողովրդի հոգևոր ու մշակութային կյանքում: Հայկական գաղութները, որոնց հետ կապերը խզված էին տասնյակ տարիներ ի վեր, այս կերպով ունեցավ հոգևոր կյանքի վերակազմության կենտրոնի՝ Ս. Էջմիածնի հովանավորության և հրահանգների ներքո:

Հոգևոր կյանքի այս վերակազմությունը և նոր պայմանների ստեղծումը նոր կապ պետք է ստեղծեին նվիրապետական աթոռների, հայ գաղութների և Խորհրդային Հայաստանի միջև:

Նորընտիր 76-ամյա հայրապետի ուսերին ծանրանում է մեծ պատասխանատվություն, ինչը միշտ ուղեկից է եղել նրան: Այսպիսով, 1945 թ. Ազգային-եկեղեցական ժողովը նոր թափ հաղորդեց Ս. Էջմիածնին: Ընդունվեց Հայ Առաքելական եկեղեցու նոր սահմանադրություն, շուտով վերականգնվեցին հոգևոր ճեմարանը, տպարանը, վանքի գրադարանը, կանոնավորվեց «Էջմիածին» ամսագրի տպագրությունը: Եկեղեցու կառուցվածքում հայտնվեցին նոր թեմեր, թույլ տրվեց ստանալու նյութական օժանդակություն և այլն:

Դեռևս 1944 թ. Հայաստանի կառավարությանն ուղղված դիմումի մեջ ազգընտիր տեղապահն այսպես էր հիմնավորում հոգևոր ճեմարանի բացման անհրաժեշտությունը. «Միութենական երկրների և արտասահմանի Հայոց եկեղեցական կյանքի կարիքները մեզ թելադրում են խնդրել կառավարությունից, որ թույլատրե բանալ Ս. Էջմիածնում հոգևոր ճեմարան, որպեսզի հնարավորություն ունենա Ս. Էջմիածինը, որ Հայոց եկեղեցու ղեկավար հաստատությունն է, մատակարարել թե՛ միութենական և թե՛ արտասահմանի բոլոր թեմերին առաջնորդներ, փոխանորդներ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, քարոզիչներ, քաղաքների և գյուղերի քահանաներ, եկեղեցական և աշխարհիկ մատենագրությամբ զբաղվող գիտնականներ և այլն: Ահա այդ ճեմարանավարտներն են, որ ամենուրեք պիտի կառավարեն Հայոց եկեղեցիներն ու եկեղեցական հաստատությունները, հոգան հայ ժողովրդի կրոնական, բարոյական և կրթական կարիքները: Նոքա է, որ պիտի մտնեն միաբանության շարքը, բարձրացնեն նորա կրթական ցենզը, նորա դերը և ճշմարիտ կրոնական ոգի ներշնչեն հայ ժողովրդին»⁶¹:

⁶¹ Նշանավոր ճեմարանականներ, Պրակ Ա, Գևորգյան հոգևոր ճեմարան (Աստվածաբանական համալսարան), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005, էջ 95-96:

Այդ առիթով Ազգընտիր Վեհափառ հոր մասին իր վկայությունն է բերում նրա ժամանակակից և սան Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը. «Որպես Գևորգ Զ Մեծագործ Հայրապետի ժամանակակիցը և աշակերտը, կարող եմ հաստատել այն մեծ ուրախությունը, որ նա ապրեց 1945 թ. Մոյեմբերի 1–ին՝ հոգևոր ճեմարանի բացման օրը: Ուղեկցությամբ վերադարձողների և հայոց մի քանի մեծերի՝ Ավետիք Իսահակյանի, Դերենիկ Դեմիրճյանի, ակադեմիկոս Ստեփան Մալխասյանցի, պատմաբան, ազգագրագետ Երվանդ Շահագիզի, Մինաս Մինասյանի (նորաբաց ճեմարանի տեսուչը) և մի քանի այլ անձանց, հանդիսավոր ներս մտավ՝ ուրախության ժպիտը դեմքին: Մենք՝ հոգևոր ճեմարանի առաջին սաներս, քարացել էինք մեր տեղերում, երբ ծերունազարդ Վեհափառ սկսեց «Հայր մեր»-ն ու «Զգործս ձեռաց մերոց» մաղթանքը: Զրոպ օրհնեց ու լվաց և՛ նորաբաց ճեմարանի շենքը, և՛ մանավանդ մեր լսարանն ու նոր ընդունված սաներիս: Շատ գեղեցիկ խրատական ճառախոսեց և հաճախ թաշկինակով սրբում էր աչքերը: Հուզված էին բոլորը:

Հպարտ եմ, որ ժամանակակիցն եմ եղել այդ իմաստուն, հայրենասեր, եկեղեցասեր մեծ հայրապետի: Նա 1944 թ. կարողացավ Մայր Աթոռի նախկին՝ «Արարատ» ամսագրի փոխարեն հրատարակել «Էջմիածինը»՝ որպես Մայր Աթոռի պաշտոնաթերթ: Վեհափառի ջանքերով վերաբացվել է Մայր Աթոռի տպարանը, վերադարձվել գրադարանը, վանքապատկան շենքերի մի մասը, մասնավորապես՝ Ս. Հռիփսիմե, Ս. Գեղարդավանք, հոր վիրապի վանքերը և այլն⁶²:

Քաղաքական ահա նշված անբարենպաստ պայմաններում, օգտագործելով իր բարձր հեղինակությունը, Վեհափառը կարողացավ սկսել Մայր տաճարի՝ անհնար և անիրագործելի թվացող վերանորոգումը, որը օրվա հրամայականն էր դարձել: Հենց այդ նորոգությունն էլ դարձավ մեր եկեղեցու վերազարթոնքի և վերաշինության սկիզբը:

Գևորգ Զ հայրապետը իր մասնակցությունն է բերել նաև ներգաղթի կազմակերպմանը, Թուրքիայի կողմից հայկական բռնազավթված հողերը վերադարձնելու հարցի բարձրացմանը, որի համար հայրապետը պաշտոնական գրությամբ 1945 թ. դիմեց ԽՍՀՄ–ի, ԱՄՆ–ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարներին, որ նվիրական այդ տարածքները վերադարձվեն և միացվեն հորհրդային Հայաստանին: Նույն հարցով պաշտոնական և պատմական հաստատված փաստերով հովվապետը դիմել է նաև Նյու Յորքում 1947 թ. ապրիլին հրավիրված Հայկական համաշխարհային կոնգրեսին:

⁶² Նույն տեղում, էջ 97–98:

Այդ մեծ հոգևորականի գործունեությունը հավուր պատշաճի գնահատվեց. խորհրդային իշխանությունները «Սասունցի Դավիթ» շարասյունը կառուցելու համար Սրբազան հորը պարգևատրեցին «Կովկասի պաշտպանության համար» մեդալով, որը, ինչպես հայտնի է, «նա միշտ կրում էր իր սքեմի վրա»:

«Կովկասի պաշտպանության համար» մեդալի հանձնումը Ամենայն Յայտց կաթողիկոսի տեղապահ արքեպիսկոպոս Գ. Չորեքչյանին տեղի ունեցավ ըստ պատշաճի և հանդիսավորությամբ. «Յայկական ՍՍՌ Գերագույն Սովետում, Գերագույն Սովետի նախագահության նախագահ ընկ. Ս. Պապյանը ՍՍՌ Միության Գերագույն Սովետի նախագահության անունից հանձնեց «Կովկասի պաշտպանության համար» մեդալ Ամենայն Յայտց Կաթողիկոսի տեղապահ Արքեպիսկոպոս Գ. Չորեքչյանին, որը պարգևատրվել է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը կառուցելու և երկրի պաշտպանության ֆոնդի համար միջոցների հանգանակությունը կազմակերպելու համար:

Ստանալով մեդալը՝ Ամենայն Յայտց կաթողիկոսի տեղապահը դիմեց ընկ. Պապյանին հետևյալ խոսքերով. «Յայ հոգևորականը պիտի հավատարիմ լինի իր Յայրենիքին, իր ժողովրդին, իր պետությանը: Այս ուղիով ես գնացել եմ սկզբից և պիտի գնամ ցմախ: Սովետական պետությունը, գնահատելով իմ ճիշտ ուղին, արժանացրեց պարգևատրության: Ինձ համար թանկ է այս պարգևը:

Յայրենական պատերազմի ամբողջ ընթացքում Յայ եկեղեցին, հայ հոգևորականությունը և իմ հավատացյալ հոտը ոչինչ չեն խնայել ընդհանուր հաղթանակի համար: Յավատացած եղեք, որ այսուհետև ևս նրանք ոչինչ չեն խնայի երկրի վերաշինության ասպարեզում»:

Մեդալի հանձնման ժամանակ ներկա էին Յայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության քարտուղար ընկ. Բ. Գալստյանը և Յայկական ՍՍՌ ժողովումն կից Յայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ ընկ. Ս. Զովհաննիսյանը⁶³:

Կարևորն այն էր, որ Ամենայն Յայտց հայրապետ Գևորգ Զ Չորեքչյանը աստիճանաբար, բայց հաստատուն քայլերով հասնում էր իր կանխորոշած նպատակներին:

Եվ ահա ընդհանրական եկեղեցու պահպանման գործընթացն էր, որ հանգիստ չէր թողնում անձնվեր հայրապետին, որի ժամանակակից, Ս. Էջմիածնի միաբան Ռուբեն Ծ. վարդապետը այդ մասին գրել է. «Ականատեսը միայն կարող էր զգալ նրա գործի ծանրությունը և տեսնել նրա

⁶³ «Սովետական Յայաստան», 1945, հուլիս 5, էջ 1:

ամսահման աշխատանքը: Նա ն՛քարոզիչ է, ն՛խրախուսող, ն՛ղեկավար: Նա կարողանում է ն՛ առօրյա խնդիրներին ընթացք տալ, ն՛ իր բազմաթիվ այցելուներին բավարարել, ն՛ միաժամանակ իր հիմնական աշխատանքները կատարել: Էջմիածինը բարեկարգել, վանական կադրեր ընտրել, դաստիարակել և պետությանն առնչվող խնդիրները լուծել և, որ գլխավորն է, վանքը և եկեղեցիները պահպանելու և զարգացնելու համար նյութական միջոցներ հայթայթել: Եվ այս բոլորը կատարելու համար նա հարկադրված է նվիրել իր ամբողջ ժամանակը՝ աչքաթող չհանելով հիմնականն ու կարևորը: Այդ բոլորը արվում է տոկունությամբ, բարեխղճությամբ և համբերությամբ: Ե՞րբ է հանգստանում Ամենապատիվ Չայրապետը և արդյո՞ք հանգստանում է⁶⁴:

Գուցե այս անհանգիստ օրերն էին, որ Գևորգ Չորեքյանին անընդհատ մղում էին նոր որոնումների՝ օր առաջ ընծեռված պահը և ժամանակը իրեն ծառայեցնելու:

Այսպիսով, Չայրեմական մեծ պատերազմում տարած հաղթանակից հետո Չայ Առաքելական եկեղեցու գործունեությամբ, որով, ըստ Գևորգ Չորեքյանի, սկսվում է Մայր Աթոռի երկրորդ վերակենդանության շրջանը: Չայ Առաքելական եկեղեցին թևակոխեց իր «երկրորդ վերածնունդը»:

Այս ընթացքը կարևորվեց Ամենայն Չայոց Կաթողիկոսի ընտրությամբ և եկեղեցական համագումարի հետագա որոշումներով, Մայր Աթոռը, որի գործելու ազատությունը տրվում էր երկրի օրենքների շրջանակում, հնարավորություն ստացավ կատարելու իր պատմական դերը հայ ժողովրդի հոգևոր ու մշակութային կյանքում:

Չայ Առաքելական եկեղեցին իր նվիրապետական աթոռներով միասնաբար թևակոխեց կենդանության և փառքի մի նոր շրջան: Այսուհետ իրենց հոգևոր գահակալներն ունեին Ս. Էջմիածնի (Գևորգ Չ Չորեքյան), Անթիլիասի (Գարեգին Ա Չովսեփյան) և Երուսաղեմի (Կյուրեղ Ս. Իսրայելյան) նվիրապետական աթոռները, որոնց առջև բացվեցին նոր ճանապարհներ՝ իրենց քայլերն ուղղելու ազգային միասնության, հոգևոր ու բարոյական արժեքների պահպանմանը:

⁶⁴ «Էջմիածին», հունիս–հուլիս, է 1945, էջ 20:

ՎԵՐՅԱԲԱՆ

Սույն աշխատությունը լուսաբանում է մի ժամանակաշրջան, երբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը բազմաթիվ զոհողությունների գնով կարողացավ հաղթահարել 1920–30–ական թվականներին կրած հալածանքներն ու դժվարությունները և դուրս գալով խոր ճգնաժամից՝ վերստին բռնեց իր որդեգրած հերոսական ճանապարհը: Խորհրդային իշխանությունների օրոք կրած հակաեկեղեցական և հակակրոնական բազմապիսի ստորացումներ, ընդհուպ մինչև ֆիզիկական հալածանքներ և բռնաճնշումներ անցած եկեղեցու առջև դրվեց լինել–չլինելու հարցը: Միայն Հայրենական մեծ պատերազմին նախորդած սոցիալ–քաղաքական նոր իրադրությունը հնարավորություն տվեց շտկելու իրավիճակը՝ եկեղեցին փրկելով կործանումից:

Ժամանակագրական կարգով ներկայացնելով պատերազմի նախօրեին Հայ եկեղեցու անցած ճանապարհը՝ շեշտը դրել ենք պատերազմական շրջանի ուսումնասիրության, ինչպես հայ ժողովրդի անմիջական մասնակցության, այնպես էլ մայր եկեղեցու նյութական և բարոյական օժանդակության վրա:

Այդ դժվարին օրերին ստանձնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ղեկավարի դերը՝ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը դրսևորեց ճկուն քաղաքական դիրքորոշում և օգտվելով խորհրդային իշխանության հանդուրժողական քաղաքականությունից (ինչը հասունացող պատերազմի արդյունք էր)՝ փորձեց կայունացնել եկեղեցի–պետություն հարաբերությունները:

Առաջին քայլը բանակցություններն էին իշխանությունների հետ, որի արդյունքում 1941 թ. ապրիլի 10–13–ը գումարվեց Ազգային–եկեղեցական ժողով, որից հետո մայր եկեղեցու փաստացի ղեկավարի՝ Ազգընտիր տեղապահ ընտրված Գևորգ Չորեքչյանի կոչով խորհրդային իշխանությունները եկեղեցու նկատմամբ վարում են մեղմ քաղաքականություն:

Հայ եկեղեցու և խորհրդային կառավարության միջև կապը իրականացնելու նպատակով Հայաստանի ժողովուհուն 1943 թ. ստեղծվում է Հայ եկեղեցու գործերի խորհուրդ: Եկեղեցին աստիճանաբար վերականգնում է իր դիրքերը, իսկ 1944 թ. հունվարից կրկին հրատարակվում է եկեղեցու «Էջմիածին» պաշտոնական ամսագիրը:

Միննույն ժամանակ Ազգընտիր տեղապահը, մտահոգված լինելով աքսորում գտնվող հոգևորականների և հայ ժողովրդի հազարավոր ավակների ճակատագրով, դիմում է իշխանություններին՝ նրանց ազատ արձակելու խնդրանքով:

1945 թ. հունիսի 16-ին Գերագույն հոգևոր խորհուրդը հստակ ծրագրով դիմում է կառավարությանը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ազգային-եկեղեցական ժողով գումարելու, կաթողիկոսական ընտրություններ անցկացնելու և Հայ եկեղեցու առջև ծառայած մի շարք հարցերի քննարկում կատարելու կապակցությամբ:

Ազգընտիր տեղապահը Ս. Էջմիածնի դիրքերը վերականգնելու և նրա հետագա գործունեությունը կազմակերպելու նպատակով մեծ ջանքեր է գործադրում և նրան հաջողվում է մի շարք արտոնություններ ու եկեղեցական և ազգային բնույթի կարևոր հարցերի լուծում ստանալ:

Թերևս հանգամանքների նման զարգացման շնորհիվ էր, որ 1945 թ. հունիսի 16-ին նրան հաջողվեց իրականություն դարձնել վաղուց սպասված Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը և կաթողիկոսական ընտրությունների անցկացումը: Հայոց հայրապետի անձնական մեծ նվիրումի շնորհիվ եկեղեցու իրավասությունները չսահմանափակվեցին գուտ դիվանագիտական հարմարվողական գործունեությամբ. Սրբազան հորը հաջողվեց այդ խառը իրավիճակում պահպանել Հայ եկեղեցու կանոնական և ավանդական կարգերը, սահմանադրական սկզբունքները և ջանքերը՝ պահպանելու Հայ եկեղեցու միասնականությունը:

Պատմականորեն բացառիկ այդ ժողովին նա իր շուրջը համախմբեց հայ հոգևոր դասին՝ ի դեմս Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա Յովսեփյանի, Ս. Երուսաղեմի Կյուրեղ Բ պատրիարքի, դիմեց հայ ժողովրդին՝ սատարելու վտանգի ենթարկված հայրենիքը, ապավինելով Սփյուռքում գտնվող նվիրապետական աթոռների աջակցությանը:

Անշուշտ, պատահական չէր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նման դիրքորոշումը, որով հանդես եկավ ֆաշիստական ագրեսիայի դեմ՝ ի պաշտպանություն խորհրդային Միության՝ թերևս այնտեղ տեսնելով Հայաստանի և հայ ժողովրդի պաշտպանված ապագան:

Մայր Աթոռի այդ կոչերը լայն արծագանք են գտնում, որին հաջորդում է սփյուռքահայության նյութական և բարոյական օժանդակությունը՝ փաստելով այն իրողությունը, որ չնայած խորհրդային տարիներին տեղի ունեցած բռնաճնշումները խուճապ էին առաջացրել և փակուղի տարել սփյուռքահայ հանրային միտքը, այնուամենայնիվ հայ հավատացյալը մնացել էր Մայր Աթոռի մայրուղու վրա և ընծեռված առիթը օգտագործեց՝ վերստին ամրացնելու իր կապերը Մայր Աթոռի և հայրենիքի միջև: Ամենուրեք ջերմ արծագանք ստացան ազգընտիր տեղապահի կոչերը՝ դրսևորվելով հավաքականության և միասնական պայքարի շուրջը համախմբված հայ ժողովրդի զավակների ներդրումների շնորհիվ ստեղծված «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան, իսկ հետագայում թիկունքին, հայրենիքի համար զոհվածների ընտանիքներին և երեխաներին օգնություն ցույց տալու փաստերով (տեղին է հիշել նաև սփյուռքահայության կողմից «Գեներալ Բաղդասյան» տանկային շարասյան համար ֆինանսական ներդրումների մասին):

Պատմական ժամանակաշրջանի համար կարևոր նշանակություն ունեցող սփյուռքահայության օգնությունը խորհրդային բանակին, որը կազմակերպվում էր եկեղեցու միջոցով, աստիճանաբար հարթում էր իշխանություններ-եկեղեցի հարաբերությունները, և եկեղեցու կարևորությունն ու ազդեցիկ հեղինակությունն օգտագործվում էին ինչպես նյութական օժանդակություն ստանալու, այնպես էլ աշխարհում իր հեղինակությունը բարձրացնելու նպատակով քարոզչական աշխատանքներ տանելու մեջ: Այդ ամենը հանգեցնում էր նրան, որ գործընթացում ներգրավվում էին արտերկրի և ներքին թեմերի, թեմական առաջնորդները և նրանց ներկայացուցիչները, հայ նշանավոր մտավորականներ, արվեստագետները, գիտնականները և խորհրդային իշխանության ներկայացուցիչները: Այս ամենը հավաստիացումն էր այն պատմական իրողության, որ Գևորգ Չորեքյան Կաթողիկոսը հնարավորը արեց՝ ամրապնդելու եկեղեցու խարխված հիմքերը՝ բարձրացնելով Ս. Էջմիածնի դավոր հեղինակությունն ու դերը՝ որպես հայ ժողովրդի հավաքականության ու միասնության խորհրդանիշ: Ուստի և պատահական չէին հետագա այն դրսևորումները, որը եկեղեցուն և Ամենայն Յայոց հայրապետին մղեցին միջնորդությամբ և օգնության առաջարկով հանդես գալու ինչպես պատմական Յայաստանի հողերը վերադարձնելու հիմնահարցի, այնպես էլ արևմտահայերի ներգաղթը կազմակերպելու գործընթացին ունենալու իր մասնակցությունը:

Թերևս անկողմնակալ մոտեցում ցուցաբերելով սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններին՝ 1939–45 թթ. Հայ Առաքելական եկեղեցու և իշխանությունների գործունեությունը ներկայացրել ենք ժամանակի իրողությունների և երկրի ներքին ու արտաքին հարաբերությունների ընդհանուր պատկերի վրա: Պատերազմի տարիներին տեղի ունեցող բազմաթիվ փոփոխությունները ներկայացված են ոչ միայն զուտ Հայ Առաքելական եկեղեցու, այլև Ռուս ուղղափառ եկեղեցում տեղի ունեցող տեղաշարժերի տեսանկյունից՝ կիրառված քաղաքականությունը ներկայացնելով որպես միութենական պետության վարած համընդհանուր քաղաքականության մաս:

Այսպիսով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների գործունեության հանգամանորեն ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց հետևյալ հիմնական եզրակացություններին.

1. Չնայած նախապատերազմյան տարիներին հոգևորականության հանդեպ խորհրդային վարչակազմի հալածողական քաղաքականությանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, շնորհիվ պետության հանդեպ իր զուսպ, իմաստուն և հանդուրժող վերաբերմունքի, կարողացավ պահպանել իր հիմնական կառույցները, կապը արտասահմանյան թեմերի հետ, որը հետագայում շատ բանով նպաստեց ինչպես հակաֆաշիստական պայքարում իր ավանդը ներդնելու, այնպես էլ Հայ Առաքելական եկեղեցու դիրքերի ամրապնդման գործին:
2. Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրվանից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ունեցավ հայրենանպաստ դիրքորոշում, որն արտահայտվեց նրա հակաֆաշիստական գործունեությամբ, խորհրդային հայրենիքի պաշտպանության գործին սատար կանգնելու քարոզչությամբ և Կարմիր բանակին նյութական օգնություն կազմակերպելով: Դրանք նպաստեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիրքերի ամրապնդմանը, եկեղեցի-պետություն հարաբերությունների կարգավորմանը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սփյուռքի հայության սերտ հարաբերությունների հաստատմանը:
3. Շնորհիվ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից Կարմիր բանակին ցուցաբերած նյութական օգնության, որի հետևանքով սփյուռքահայերի հանգամանակած միջոցներով կառուցվեցին «Սասունցի Դավիթ» երկու և «Գեներալ Բաղդամյան» տանկային շարասյուները: Դրանով եկեղեցին ոչ միայն ամրապնդեց իր դիրքերը և

կարգավորեց խորհրդային պետության հետ իր հարաբերությունները, այլև զգալի չափով նպաստեց սփյուռքահայերի՝ խորհրդային Հայաստանի հանդեպ դրական կողմնորոշմանը, որը դրսևորվեց ոչ միայն Կարմիր բանակին նյութական օգնություն ցույց տալով, այլև պատերազմի հաղթական ավարտից հետո կազմակերպված զանգվածային հայրենադարձությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ գործնական կապերի ամրապնդմամբ:

4. Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակը, որի կայացման գործում իր ավանդը ներդրեց նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, զգալի չափով նպաստեց Հայ Առաքելական եկեղեցու «երկրորդ վերածննդին»: Շնորհիվ պատերազմի տարիներին եկեղեցու հանդեպ Ի. Վ. Ստալինի վարած դիվանագիտական քաղաքականության, Ռուս ուղղափառ եկեղեցին խորհրդային Սիուքյան տարածքում գործող կրոնական մյուս հաստատությունները իրենց դիրքերն ամրապնդելու հնարավորություն ստացան: Մասնավորապես ամրապնդվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նյութական, մշակութային բազան, կարգավորվեցին եկեղեցի-պետություն հարաբերությունները, որն իրականացվեց ՀԽՍՀ նախարարների խորհրդին կից եկեղեցու գործերի խորհրդի ստեղծումով. աշխույժ, գործնական հարաբերություններ հաստատվեցին ինչպես արտասահմանյան թեմերի, այնպես էլ Անթիլիասի և Երուսաղեմի նվիրապետական աթոռների միջև: Այս գործընթացը ավելի կարևորվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ Զորքչյանի ընտրությամբ և Ազգային-եկեղեցական ժողովի հետագա որոշումներով, որի հետևանքով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործելու ազատությունը տրվում էր երկրի օրենքների շրջանակներում, և նա հնարավորություն էր ստանում կատարելու իր պատմական դերը հայ ժողովրդի հոգևոր ու մշակութային կյանքում:

Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը հայոց պատմության բաղկացուցիչ մասն է, հայ պատմագրության հրատապ և գիտական կարևոր նշանակություն ունեցող արդիական հիմնահարցերից մեկը: Իր եկեղեցու պատմության 1700-ամյակը նշած ժողովրդի համար այսօր էլ ավելի է կարևորվում այդ եկեղեցու պատմության մի բախտորոշ ժամանակահատվածի՝ 1939-1945 թթ. երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների ուսումնասիրությունը, ժամանակահատված, երբ դարձյալ լինել-չլինելու խնդիրն էր դրված Հայաստանում

ապրող 1.5 միլիոն հայության առջև: Եվ իրապես, եթե Ստալինգրադյան ճակատամարտում հաղթեր ֆաշիստական Գերմանիան, նրա փաստացի դաշնակից Թուրքիան, որը Հայաստանի սահմանների մոտ էր կուտակել իր 26 սպառազեն դիվիզիաները, անմիջապես կներխուժեր Խորհրդային Հայաստան, և մի նոր, ավելի ահավոր եղեռն կիրագործեր հայ ժողովրդի նկատմամբ: Այդ իսկ պատճառով էլ պատմագիտական կարևոր նշանակություն ունի վերոհիշյալ հիմնահարցի ուսումնասիրությունը: Այն կնպաստի ինչպես հայ եկեղեցու պատմության սպիտակ էջերի վերացման, այնպես էլ հայ ժողովրդի պատմության պետական–ազգային շինարարության մի կարևոր, բախտորոշ ժամանակահատվածի վերհանման և օբյեկտիվ ուսումնասիրության գործին:



ԱՐՈՒՅՅԱԿ ՍԱՄՍՈՆԻ ՏԵՐԶԱՆՅԱՆ

Ծնվել է 1972 թ. Ախալքալաքի շրջանի Արագովա գյուղում: 1979 թ. բնակություն է հաստատել ՀՀ Աբովյան քաղաքում: 1995 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի հումանիտար համալսարանի պատմության ֆակուլտետը: Դեռևս ուսումնառության ընթացքում աշխատանքի է անցել հանրակրթական դպրոցում, որպես պատմության ուսուցիչ, իսկ ուսման ավարտից հետո «Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության» թանգարանում, որպես գիտական գծով փոխտնօրեն՝ գլխավոր ֆոնդապահ:

1997 թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցող է, որտեղ զբաղվել է նորագույն պատմության՝ եկեղեցի-պետություն փոխհարաբերություններին վերաբերող հիմնահարցով: Մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածների, մենագրության և համահեղինակային աշխատությունների մասնակից է:

Ատենախոսություն է պատրաստել «ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԱԾՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1939–1945 թթ.)» թեմայով: Կրթական որակավորում է ստացել արտերկրում, աշխատանքային գործունեություն ծավալել միջազգային և տեղական մի շարք հասարակական կազմակերպություններում, փորձագիտական աշխատանք իրականացրել պետական և միջազգային կառույցներում: 1995 թ. ակտիվ գործունեություն է ծավալել Հայ Առաքելական եկեղեցում, 2006 թ. աշխատանքի է անցել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սկզբնաղբյուրներ

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

- 1.1 Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդ: Ֆ. 409, ց.1, գ. 66, 195, 208, 253, 266, 271, 303, 311, 334, 705, 728, 730, 745, 754, 3750, 3753, 3867, 3870, 3885, 4848, 5294, 5301:
- 1.2 ՀՍՍՀ մինիստրների սովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհուրդ: Ֆ. 825, ց. 1, գ. 16:
- 1.3 Գևորգ Չորեքչյանի անձնական գործ: Ֆ. 454, ց. 1, գ.148, 201, 208:

2. Տպագիր աղբյուրներ

ա) Հայերեն

- 2.1 Դոկտ. Տ. Չավեն Ա. քնյ. Արզումանեան, Ազգապատում, հ. Դ, գիրք Ա, 1910–1930, Նիւ Եորք, 113 էջ:
- 2.2 Հայ եկեղեցու բարեփոխության խնդիրը և Ազգային եկեղեցական ժողովը, Փարիզ, 1926, էջ 186:
- 2.3 Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921–1938 թթ.), կազմող՝ Ս. Ա. Բեհբուդյան, ՀՀ Կառավարությանն առընթեր արխիվային գործերի վարչություն: ԵՊՀ տպարան, Երևան, 1994, 325 էջ:
- 2.4 Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, Գիրք Բ, Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (Հոգևոր գործունեությունը 1901–1938 թթ.), կազմող՝ Ս. Ա. Բեհբուդյան, ՀՀ Կառավարությանն առընթեր արխիվային գործերի վարչություն: ԵՊՀ տպարան, Երևան, 1996, 624 էջ:
- 2.5 Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955 թթ.), Գիրք Զ, Գևորգ Չ Չորեքչյան Կաթողիկոս Ամենայն Հայոց, կազմող՝ Ս. Ա. Բեհբուդյան, «Ոսկան Երևանցի» հրատ., Երևան, 1999 թ., 936 էջ:

բ) Ուսերեն

- 2.4 Вторая мировая война. Итоги и уроки, Военное изд., Москва, 1985 г., 447 ст:
- 2.5 Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1944), Сборник документов и материалов. Е., Изд. АН Арм ССР, 1975, 838 ст.

3. Աշխատություններ

Ա. Մենագրություններ

ա) Հայերեն

- 3.1 Խալեյան Ե. Ս., Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին (1941–1944), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Ե., 1975, էջ 251:
- 3.2 Ստեփանյանց Ստեփան, Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, «Ապոլոն» հրատ., Երևան, 1994, 244 էջ:
- 3.3 Մեսրոպ արք. Աշճյան, Էջեր հայ եկեղեցու պատմութենեն, Ընտրութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսներու Մահ և Հիշատակ, Բ տպագրություն, Երևան, 1994, 180 էջ:
- 3.4 Մանուկյան Արմենակ, Հայ Առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները՝ 1930–1938 թթ. (ըստ ՊԱԿ–ի փաստաթղթերի), «Ամրոց» հրատ., Երևան, 1997, 281 էջ:
- 3.5 Սահակյան Մ.Գ., Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1981, 192 էջ:
- 3.6 Ավետիսյան Հ., Վիրաբյան Ա., Հարությունյան Կ., Գրիգոր Հարությունյանի կյանքը և գործունեությունը, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2000, 350 էջ:
- 3.7 Հարությունյան Կլիմենտ, Գրիգոր Արտեմի Հարությունյանի գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941–1945), ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2001, 154 էջ:
- 3.8 Հարությունյան Կլիմենտ, Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին (1939–1945), «Հրազդան» հրատարակչություն, Եր., 2001, 150 էջ:

բ) Ռուսերեն

- 3.7 Василева О.Ю., Русская православная церковь в политике советского государства в 1943–1948 гг, Институт Российской Истории РАН, Москва, 1999 г., 213 ст.
- 3.8 К.А. Арутюнян, Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941–1945). В., Изд. “ Гитутюн” НАН РА. 2004, 854 ст.

4. Կոլեկտիվ աշխատություններ

ա) Հայերեն

- 4.1 Հայ ժողովրդի պատմություն, հ. VII, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1967 թ., 654 էջ:
- 4.2 Վազգեն Ա Հայրապետ Հայոց, Գիրք երկրորդ. Կոնդակներ, քարոզներ, ճառեր, ելույթներ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1968 թ., 317 էջ:
- 4.3 Հայ ժողովրդի պատմություն, հ. VIII, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1970 թ., 580 էջ:
- 4.4 Ամենայն Հայոց Կաթողիկոսներ, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, 2001 թ., 275 էջ:
- 4.5 Նշանավոր ճեմարանականներ, Պրակ Ա, Գևորգյան հոգևոր ճեմարան (Աստվածաբանական համալսարան), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2005 թ., 467 էջ:

5. Մամուլ

Ա. Պարբերական

ա) Հայերեն

- 5.1 «Էջմիածին», N 1, 1944: «Էջմիածին», N 2–3, 1944: «Էջմիածին», N 1, 1944: «Էջմիածին», հունվար, 1945: «Էջմիածին», փետրվար–մարտ, 1944: «Էջմիածին», ապրիլ–մայիս, 1944: «Էջմիածին», հուլիս–օգոստոս–սեպտեմբեր, 1944: «Էջմիածին», N 7–8, 1944: «Էջմիածին», հունիս, հուլիս, 1945:
- 5.2 «Ազդարար», N 34, 1943–1944 թթ.: «Ազդարար», N 41, 1943–1944 թթ.: «Ազդարար», N 110, 1944–1945 թթ.: «Ազդարար», N 30, 1942–1943 թթ.: «Ազդարար», N 84, 1943–1944 թթ.: «Ազդարար», N 135, 1944 թ.: «Ազդարար», N 91, 1943–1944 թթ.: «Ազդարար», N 83, 1943–1944 թթ.: «Ազդարար», N 1083, 1943–1944 թթ.: «Ազդարար», N 108, 1944–1945 թթ.:

- 5.3 «Սիոն», մայիս-հունիս, 1943: «Սիոն», հուլիս-օգոստոս-սեպտեմբեր, 1944: «Սիոն», մայիս-հունիս-հուլիս-օգոստոս, 1945:
- 5.4 «Արարատ», հունվար, 1908:
- 5.5 «Հայրենիք», Բոստոն, հոկտեմբերի 9-ը, 1924: «Հայրենիք», Բոստոն, N 6246, 1932:
- 5.6 «Հուսաբեր», N 77, 1945:

Բ. Թերթեր 6

ա) Հայերեն

- 6.1 «Սովետական Հայաստան», նոյեմբեր 16, Երևան, 1942: «Սովետական Հայաստան», մարտ 31, 1944: «Սովետական Հայաստան», մարտ 23, Երևան, 1945: «Սովետական Հայաստան», մայիս 12, N94, Երևան, 1945: «Սովետական Հայաստան», հունիս 6, Երևան, 1945: «Սովետական Հայաստան», հունիս 24, Երևան, 1945: «Սովետական Հայաստան», հուլիս 5, Երևան, 1945:
- 6.2 «Ազատ եկեղեցի», հոկտեմբեր 25, Երևան, 1925:

բ) Ռուսերեն

- 6.3 “Правда”, 29. 02, 1944.
- 6.4 “Коммунист” 6. 01, 1943. “Коммунист”, 26.01, 1943–1944. “Коммунист”. 28. 09, 1944. “Коммунист”. 1.05, 1945. “Коммунист”. 5.06, 1945. “Коммунист”. 29.11, 1944.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներածություն	5
ԳԼՈՒԽ ԱՈԱԶԻՆ	
1. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին	13
ա) Նախապատերազմյան իրավիճակը Հայ Առաքելական եկեղեցում	13
բ) 1941 թ. Ազգային-եկեղեցական ժողովը	22
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին	32
ա) Պատերազմի սկիզբը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայրենանպաստ դիրքորոշումը	32
բ) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օժանդակությունը Կարմիր բանակին	38
գ) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դերը սփյուռքահայության միասնության ամրապնդման և բարեգործական օգնության կազմակերպման գործում	51
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
1. Պետություն-եկեղեցի նոր հարաբերությունների հաստատումը պատերազմական տարիներին համապատասխան	66
ա) Եկեղեցու դիրքերն ամրապնդելու քայլեր	66
բ) Եկեղեցի-պետություն հարաբերությունների կարգավորում	72
գ) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին-Սփյուռք հարաբերությունները	78
ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ	
1. Հայ Առաքելական եկեղեցու «երկրորդ վերածնունդը»	82
ա) Հայ Առաքելական եկեղեցու իրավունքների վերականգնումը	82
բ) Էջմիածին-Անթիլիաս փոխհարաբերությունները Հայրենական մեծ պատերազմի տարիներին	96
գ) 1945 թ. Ազգային-եկեղեցական ժողով, կաթողիկոսական ընտրություններ	101
Վերջաբան	122
Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ	129

Արուսյակ Սամսոնի Տերչանյան

ՄԱՅՐ ԱՌՈՌՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ
ԵՐԿՐՈՐԴ ԳԱՄԱՇԽԱՐԳԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՌԻՆԵՐԻՆ
(1939–1945 թթ.)

Լուսանկարները վերցված են
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվից

Հրատարակչության տնօրեն՝
Խմբագիր՝
Գեղարվեստական խմբագիր՝
Տեխնիկական խմբագիր՝
Սրբագրիչ՝
Համակարգչային ձևավորումը՝

Է.Ս. Սկրտչյան
Մ.Վ. Մնացականյան
Ա.Ա. Բաղդասարյան
Ն.Ն. Փարսադանյան
Ս.Ս. Սելջուկյան
Լ.Շ. Գովսեփյանի

ISBN 978-99941-1-744-4

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 8.5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 500 օրինակ:



«ԶԱՆԳԱԿ-97» ԳՐԱՏՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28
Ֆաքս՝ (+37410) 23-25-95, էլ. փոստ՝ info@zangak.am,
էլ. կայք՝ www.zangak.am, www.book.am

[1000 ր.]

ԳԱՄ Հիմնարար Փխտ. Գրադ



FL0672193

A II
A110099

Իր գոյության ընթացքում Հայ Առաջին համաշխարհային պատերազմի կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի պատմության մեջ՝ սկզբնական շրջանում որպես հայոց պետականության հենարան, իսկ պետականության բացակայության ժամանակ՝ որպես հայ ժողովրդին համախմբող մեկ մարմին, հոգևոր առաջնորդ, գրի, գրականության, գիտության, մշակույթի պահպանության հաստատություն:

Եկեղեցու դերն ավելի բարձրացավ Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կազմակերպած հանգանակության արդյունքում սփյուռքահայության դրամական նվիրատվությունների շնորհիվ ստեղծվեցին «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուները, որոնք նպաստեցին ֆաշիզմի դեմ տարած հաղթանակին:



www.zangak.am

www.book.am